ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ 1885-1908 ԹԹ. ՓՈՒԼԸ ՀՆՉԱԿՅԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ԿՐԿՆՕՐԻՆԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա 2409

ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԹԱՐԽԱՆԻ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ 1885-1908 ԹԹ. ՓՈՒԼԸ ՀՆՉԱԿՅԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ԼՐԱՏԵՆԱՇԵԱՐ
252

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
252

ԵՐԵՎԱՆ
2024

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Ս 259

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ Գեղամ Հովհաննիսյան, պ.գ.թ., դոցենտ
Գրախոսներ՝ Ալբերտ Խառատյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ. պրոֆեսոր
Ռուբեն Սահակյան, պ.գ.դ.

Սարգսյան Ս. Թ.
Ս 259 Հայ ազգային ազատագրական պայքարի 1885-1908 թթ. փուլը հնչակյան գործիչների գնահատմամբ / Ս. Թ. Սարգսյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2024.– 191 էջ:

Մենագրության մեջ լուսաբանված են հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության 1885-1908 թթ. իրադարձություններով հարուստ ժամանակահատվածի իմնդիրները և դրանց գնահատումը հնչակյան գործիչ-տեսաբանների կողմից:
Գիրքը նախատեսված է պատմաբանների, քաղաքագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-892-41-2

© Պատմության ինստիտուտ, 2024

Նվիրում եմ թոռնիկներիս՝ Սուրենին և Դավիթին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5
Ավետիս Նազարբեկյան 19
Արսեն Կիտուր 32
Սապահ-Գյուլյան 59
Հրանտ Գանգրունի 76
Պետրոս Տեփոյան 104
Խանազատ 134
Հարություն Ճանկուլյան 152
Հմայակ Արամյանց 167
Ամփոփում 180
Վկայակոչված աղբյուրներ 185

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընթերցողների ուշադրությանը ներկայացվող սույն աշխատությունը մեր նախորդ՝ «1885-1908թթ. Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ»ուսումնասիրության տրամաբանական շարունակությունն է[1]: Նրանում քննական վերլուծության ենք ենթարկել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի 1885–1908 թթ. փուլին վերաբերող արմենական գործիչների հուշագրություններն ու աշխատությունները, ներկայացրել դրանց հեղինակների արտահայտած հայեցակարգերն ու տեսակետները, որոնք մեր ազատագրական գաղափարախոսության համար սկզբունքային լինելով հանդերձ, կարևոր են նաև պատմագիտական մտքի տեսակետից: Տրամաբանական շարունակություն ենք համարում այն պարզ պատճառով, որ քննության առարկա ժամանակաշրջանն ու հետաքրքրություն ներկայացնող հարցերը գրեթե նույնն են: Հետո էլ, արմենականների նման, Հնչակյան կուսակցության դեպքում նույնպես կարելի է պնդել, որ այն ևս չունի կուսակցական պատմագրություն, մասնավորապես՝ հայ ազգային-ազատագրական պայքարի 1885-1908 թթ. փուլի վերաբերյալ: Ուստի, ինչպես Արմենական կուսակցության դեպքում, այս դեպքում էլ կարելի է խոսել նույն ժամանակաշրջանի հայ ազատագրական պայքարի վերաբերյալ արդեն հնչակյան կուսակցականների պատմագիտական մտքի մասին:

Հարկ ենք համարում արձանագրել նաև ուսումնասիրության բերած **նորույթը** և ուսանելի կողմերը, որոնք կարող են հաշվի

---

[1] Տես Մարգսյան Ս., 1885-1908թթ. հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ. Ե., 2010:

առնվել ինչպես ընդհանրապես հայոց, այնպես էլ հայ քաղաքական կուսակցությունների պատմությունը շարադրելու կամ բուհերում դասավանդելու ընթացքում: Դրանք են.

Առաջին. աշխատանքում ներկայացվում են նոր տեղեկություններ Հնչակյան կուսակցության ձևավորման գործընթացի[1], ինչպես նաև ծրագրային դրույթների մասին: Տեղեկություններ, որոնք ցայսօր դուրս են մնացել գիտական շրջանառությունից:

Երկրորդ. հնչակյան կուսակցության կազմակերպած շատ հայտնի գործողությունների պատճառները քննվում են ավելի ճշգրիտ և հիմնավորված, քանզի անմիջապես բխեցվում են հնչակյան հեղինակների սկզբնաղբյուրային արժեք ունեցող տեղեկություններից, որոնք համեմատվում են արխիվային աղբյուրների ու այլ նյութերի հետ:

Երրորդ. փորձ է արված ավելի հիմնավոր ներկայացնել հայ ազատագրական պայքարը Եվրոպայից կախյալ համարելու ռազմավարության սխալականությունն ու անարդյունավետությունը, որն այսօր էլ խիստ արդիական է:

Ուսումնասիրությունը գրելու ընթացքում փորձել ենք առանձնացնել պատմագիտական հայեցակարգերին համարժեք այն տեսակետները, որոնք ներկայացնում են նշված հեղինակները հնչակյանների գործունեության և, առհասարակ, հայ ազատագրական պայքարի վերաբերյալ: Անաչառ լինելու համար պետք է նշել, որ այդ տեսակետները երբեմն իրավիճակի սթափ ու անկողմնակալ գնահատման արդյունքում են ծնվել, որոնք, մեր

---

[1] Այս տեսակետից բավական արժեքավոր տեղեկություններ է պարունակում վերջերս լույս տեսած մի ուսումնասիրությունը, տե՛ս Մանուկեան Ա., Հնչակեան Կուսակցութեան կազմակերպումը եւ Քսան Կախաղաններու մասին անդրադարձը եւրոպական մամուլի ու դիւանագիտական թղթակցութեանց մէջ, Ե., 2020:

կարծիքով, կօգնեն ճշգրիտ պատկերացում կազմել առհասարակ հայոց պատմության ընդհանուր զարգացման, հիշյալ ժամանակահատվածի և, մասնավորապես, նրա առանձնահատուկ կողմերի մասին:

Հետազոտության ընթացքում առաջնորդվել ենք պատմականության սկզբունքով, քննական–վերլուծական մեթոդաբանությամբ: Ձգտել ենք առավելագույնս լինել անաչառ, օբյեկտիվ ու անկողմնակալ: Փորձել ենք նաև հստակ պարզաբանել «պատմություն», «պատմագիտություն», «պատմագրություն» և «կուսակցական պատմագիտական միտք» միմյանց սերտորեն առնչվող գիտաբառերի (տերմինների) բովանդակությունը, որոնք թեև առաջին հայացքից պարզ ու հասկանալի են թվում, սակայն իրականում հաճախ ճիշտ չեն ընկալվում և լուրջ բանավեճերի առիթ են դառնում: Այս անհրաժեշտությունից ելնելով է այս դեպքում այդ հասկացությունների մանրամասն լուսաբանման պատճառը:

Պատմությունն[1] աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների համահավաք, միասնական պատկերն է, դեպքերի ու անձանց յուրահատուկ կենսագրությունը, բնության ու կենդանական աշխարհի, մասնավորապես՝ մարդկության զարգացման ընթացքը: Այս դեպքում նպատճառ, բնությունն ու մարդկային հասարակությունը պետք է դիտարկենք մեկ միասնության մեջ, որովհետև նրանք անխզելիորեն կապված են միմյանց հետ և դրանցից յուրաքանչյուրը պայմանավորում է մյուսին: Իսկ մարդ-

[1] Ավելի մանրամասն տե՛ս Սարգսյան Ս., Պատմություն, պատմագիտություն, պատմագրություն հասկացությունները. «Ակունք» թիվ 2(5). Ե., 2013, 120-124 էջեր:

կության պատմության զարգացման ընթացքն ունի օբյեկտիվ, օրինաչափ բնույթ:

Պատմագիտությունը գիտություն է պատմության մասին, ինչպես նաև այն որոշակի թեմայի կամ պատմական դարաշրջանի վերաբերող պատմագիտական հետազոտությունների ամբողջություն է: Այսինքն՝ այն մարդկային հասարակության պատմությունն ուսումնասիրող գիտություն է և մյուս գիտությունների նման ունեցել է զարգացման երկարատև ընթացք, կուտակել սերունդների պատմական փորձը, ընդլայնվել ու հարստացել բովանդակությամբ: Սկզբում կրել է նկարագրական բնույթ, ուսումնասիրության անմիջական առարկա են եղել մարդկության անցյալում տեղի ունեցած իրադարձությունների արտաքին երևույթները, գլխավոր ուշադրությունը դարձվել է պատմության քաղաքական շարադրանքին: Միայն 19-րդ դարում պատմագիտությունը դարձավ կյանքը՝(իր որոշակի և բազմազան դրսևորումներով) մարդու ծագումից մինչև ժամանակակից վիճակը, ուսումնասիրող գիտություն: Փաստերի հավաքումը, դրանց համակարգումն ու անաչառ գնահատումը պատմագիտության հիմքն են: Ինչպես նշեցինք պատմագիտությունը կուտակել է սերունդների փորձը, ունեցել զարգացման երկարատև ընթացք, շարունակաբար ծավալվել ու հարստացել բովանդակությամբ՝ նկարագրողական մակարդակից հասնելով մարդկային ցեղի, քաղաքակիրթ հասարակության բազմազան դրսևորումներով կյանքն ուսումնասիրող գիտության: Պատմագիտությունը կյանքի փաստերի հավաքման ու օբյեկտիվ շարադրանքի գիտություն է, իսկ հավաք, համադրված ու համակարգված փաստերը՝ պատմագիտության հիմքը: Մարդկային հասարակության զարգացմանը զուգընթաց

պատմագիտությունը տարափեղկվեց և ծնվեցին պատմագիտության տարբեր ճյուղերը:

Հաճախ կարելի է լսել, թե պատմագիտությունը հեղհեղուկ, կամայական դրսևորումներով թվականների, փաստերի և անունների շարան է, ոչ օբյեկտիվ գիտություն: Ավելին, երբեմն այն ներկայացվում է մարդու ցանկություններից կախված, թե իբր՝ով ինչպես ուզում, այնպես էլ ներկայացնում է փաստերը: Սակայն դա իրականությանը չի համապատասխանում. որովհետև պատմագիտությունը լոկ փաստերի, մարդկանց ու թվականների հանրագումար չէ, այլ հասարակության ու բնության մեջ տեղի ունեցող պատճառահետևանքային կապերի և օբյեկտիվ օրինաչափությունների բացահայտումն է և նույնքան ճշգրիտ գիտություն է, որքան մաթեմատիկան կամ ֆիզիկան: Իհարկե, պատմագիտությունը քաղաքական, ինչու չէ, նաև կուսակցական բնույթ ունեցող գիտություն է և կարող է պատմական այս կամ այն իրավիճակներում ծառայել մարդկային որոշակի խմբի շահերին: Սակայն դրանք ժամանակավոր դրսևորումներ կարող են լինել և ժամանակի ընթացքում հաղթահարվում են, ինչպես եղավ, ասենք, ֆաշիզմի կամ կոմունիստական իշխանաձևերի ժամանակ:

Պատմագիտությունը կարևոր դերակատարություն ունի հասարակական կյանքում: Նրա գլխավոր արժեքը համաշխարհային փորձի ընդհանրացումն է: Մարդկության զարգացման օրինաչափությունների բացահայտումով այն ճանաչելի է դարձնում կյանքի օբյեկտիվ օրենքները և նրանցով ղեկավարվելու անխուսափելիությունը, անկախ նրանից, թե տվյալ պահին զարգացման ինչ մակարդակի վրա է գտնվում տվյալ մարդկային խումբը կամ պետությունը: Պատմագիտությունը կյանքի փաստերի հա-

վաքման ու օբյեկտիվ շարադրանքի գիտություն է, իսկ հավաք, համադրված ու համակարգված փաստերը՝ պատմագիտության հիմքը: Մարդկային հասարակության զարգացմանը զուգընթաց, պատմագիտությունը տարափեղկվեց և ծնվեցին պատմագիտության տարբեր ճյուղերը, որոնց մեջ, անկասկած, ամենակարևորներն են հնագիտությունն ու ազգագրությունը: Մեզանում համեմատաբար քիչ ուսումնասիրված բաժիններից է կուսակցական պատմագիտությունը:

Ճիշտ է, խորհրդային տարիներին անչափ շատ էին այդ թեմայով գրքեր գրվում: Սակայն, եթե նկատի ունենանք, որ դրանք բացառապես Կոմունիստական կուսակցությունը գովերգող և անխտիր մնացած մյուս բոլոր տեսակի կուսակցությունների սևացնելուն էին ծառայում, սխեմատիկ էին, երբեմն էլ՝ պարզունակ, ապա վստահ կարելի է պնդել, որ այս ասպարեզում հաստատ անելիքներ դեռևս շատ ունենք: Հատկապես, եթե հաշվի առնենք այն փաստը, որ հայերս կուսակցություններ ենք ստեղծել շատ բարդ ու դժվարին պայմաններում և աշխարհի շատ ու շատ ժողովուրդներից առաջ, ինչպես նաև այն իրողությունը, որ մեր կյանքն անկախության տարներին չափից ավելի կուսակցականացված է, ապա մեր ավանդական կուսակցությունների օբյեկտիվ պատմությունն ու նրանց ասելիքը ճշտորեն մեկնաբանելն ու բացատրելը նաև մերօրյա պատմագիտության հիմնախնդիրներից է:

Պատմագրությունը գիտություն է պատմագիտության մասին: Այլ կերպ ասած՝ պատմագրությունը պատմագիտության պատմությունն ուսումնասիրող օժանդակ գիտություն է: Պատմագրության զարգացման համար կարևոր դերակատարություն են ունեցել անտիկ (Հերոդոտոս, Տակիտոս, Պլուտարքոս և ու-

րիշներ) և մեր ոսկեդարյա (Խորենացի, Բյուզանդ, Ագաթանգեղոս և ուրիշներ) պատմիչների երկերը, որոնք պատմական իրադարձությունների ու փաստերի նկատմամբ ցուցաբերել են քննական վերաբերմունք և փորձել են ստեղծել պատմագիտական առաջին հասկացությունները:

Այսպիսով, պատմագրությունն ուսումնասիրում է պատմագիտական պատկերացումների ամբողջությունը բնության և մարդկային ցեղի օրինաչափ փոփոխման, զարգացման և հաջորդականության մեջ: Հայտնաբերում է աշխարհի զարգացման օբյեկտիվ օրինաչափությունները, բացահայտում հետագա զարգացման միտումները, նպաստում գիտականության և քննադատական մտքի զարգացմանը: Ի վերջո, վերլուծելով պատմագիտական հետազոտությունները, պատմագրությունը պատմաբանների ուշադրությունն ուղղորդում է որոշակի խնդիրներ վեր հանելու, վերլուծելու ու համապատասխան լուծումներ գտնելու վրա՝կոնկրետ դեպքում՝հայ ազգային կուսակցությունների ու նրանց տեսաբանների հայտնած թեզերի:

Ամփոփենք, պատմությունը բնության և մարդկային հասարակության անցած ուղին է, պատմագիտությունը՝ պատմության, իսկ պատմագրությունը՝ պատմագիտության մասին գիտություններ են:

Մեր մոտեցումներն ու տեսակետներն առավել ամբողջական ու հիմնավոր ներկայացնելու և աշխատությունը հարուստ փաստական հենքով ապահովելու գործում գնահատելի և օգտակար եղան Հայաստանի Ազգային արխիվի (ՀԱԱ) և հատկապես թիվ

1456 ֆոնդի նյութերը[1], որոնց զգալի մասն արդեն ընթերցողին հայտնի են, սակայն դեռևս մեծաքանակ վավերագրեր կան, որոնք կարիք ունեն լուսաբանման: Դրանք հիմնախնդրին առնչվող վավերագրեր, ուղղակի և անուղակի վկայություններ են, որոնք փաստագրական հենքով լույս են սփռում կուսակցության պատմության դեռևս չլուսաբանված սպիտակ էջերին և հնարավորություն են ընձեռում պարզաբանելու բազմաթիվ վիճելի հարցեր:

Հիմնախնդրի պարզաբանման համար անկասկած կարևոր են նաև Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) տարբեր ֆոնդերում պահվող բազմաթիվ նյութերն ու հատկապես տարբեր գործիչների գրչին պատկանող նամակները[2]:

Աշխատության համար անփոխարինելի աղբյուրագիտական արժեք են ներկայացնում նաև տպագիր սկզբնաղբյուրները[3], կուսակցականների հուշագրությունները[4], ազգային-ազատագրական պայքարի մասին տարբեր շրջաններում գրված պատմա-

---

[1] Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 1456, Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցության փաստաթղթերը:

[2] Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Արփիարյանի ֆոնդ, թիվ 106, 515, 548: ԳԱԹ, ֆ. 28, թիվ 503: Նամակ «Լումայ» թերթի խմբագիր Ազանյանին, ԳԱԹ, Աղայան Գյուտ քահանայի ֆոնդ, թիվ 941-942:

[3] Ծրագիր Հնչակեան Սոցիալիստ-Յեղափոխական կուսակցութեան, Ժնև, 1891, Ծրագիր սոցիալ-դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան (Տաճկաստանի համար), Կ. Պոլիս, 1910, Հիսնամեակ (1887-1937) սոցիալ-դեմոկրատ հնչակեան կուսակցութեան, Փրեզնո, 1938 և այլն:

[4] Խան-Ազատ Ռ., Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք»>, Պոսթըն, 1928, թիվ 8-11, Ճանկուլեան Յ., Յիշատակներ հայկական ճգնաժամէն (պատկերազարդ), մասն Ա. Բ. Գ. Դ. եւ Վերջին հատոր, Կ.Պոլիս, 1913, Տամատեան Մ., Իմ յուշերս, Պէյրութ, 1985, և այլն:

գիտական երկերը[1], ժամանակաշրջանի մամուլը[2] և այլ աղբյուրներ:

Աշխատության մեջ ներկայացրել ենք Արմենականից հետո հայ ազգային-ազատագրական պայքարի թատերաբեմ երկրորդը իջած Հնչակյան կուսակցության նշանավոր գործիչ-տեսաբանների (Ավ. Նազարբեկյան, Ս. Սապահ-Գույան, Հ. Գանգրունի, Ռ. Խանազատ, Հ. Ճանկյուլյան, Հ. Արամյան) 1885-1908 թթ. ներառող ժամանակաշրջանի վերաբերյալ մոտեցումներն ու գնահատականները և մեր տեսակետները հիմնահարցի վերաբերյալ: Գործիչներ, որոնք ազգային-ազատագրական պայքարի նշված փուլի ակտիվ մասնակիցներ են եղել (բացառությամբ Պետրոս Տեփոյանի), իրենց հուշերում և աշխատություններում տեսակետներ են ներկայացրել այդ պայքարում Հնչակյան կու-

---

[1] Արամեանց Հմ., Վերածնունդի Երկունքը, Պատմութիւն Հնչակեան կուսակցութեան, հ. Ա., Կ. Պոլիս, 1918, Աղամիրյան Խ., Հայ սոցիալ-դեմոկրատական «Հնչակ» կուսակցության և նրա գործունեության մասին. Բաքու, 1925: Գանգրունի Հ., Հայ յեղափոխութիւնը Օսմանյան բռնատիրութեան դէմ (1890-1910), Պէյրութ. 1983, Կիտուր Ա. (խմբագիր ուսուցչապետ), Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան, 1887-1962, հ. Ա., Պէյրութ, 1962, Հովհաննիսյան Գ., Հնչակյան կուսակցության պատմություն (1887-1915 թթ.), Ե., 2012, Մանուկեան Ա., Խմբանկարի մը պատմութիւնը եւ Ժնեւի «Յեղափոխական ընկերութեան» կազմաւորման թուականը, Վերակազմյալ Հնչակյան կուսակցության ստեղծման 125 և Արտիվար Արփիարյանի ծննդյան 170 ամյակներին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2022, էջ 52-87: Ճիզմեճեան Մ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, 1890-1925, Ֆրեզնօ, 1930, Պողոսյան Հ., Փարամազ, Ե., 1992: Սապահ-Գույեան Ս., Պատասխանատուները, Փրովիտէնս, 1916, Սարգսյան Ս. Թ., Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն 1908-1921թթ., Ե., 2009: Ստեփանյան Մ. Ս., Սոցյալ դեմոկրատ հնչակյան կուսակցության գործունեությունը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Ե., 2007, Համբարյան Ա., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990 և այլն:

[2] «Արմենիա», «Երիտասարդ Հայաստան», «Կռիակ», «Հայրենիք», «Վան-Տոսպ», «Ջահակիր» և այլն:

սակցության և իրենց դերակատարության վերաբերյալ: Իսկ նրանց կարծիքներն ու տեսակետները և այդ պայքարի նկատմամբ իրենց վերաբերմունքը միշտ չէ, որ ամբողջությամբ ճշմարտացի է, միշտ չէ, որ նրանք անաչառ են: Ընդհակառակը՝հաճախ նրանց ներկայացրած հայեցակարգերը վիճելի են, մասնավորապես՝երբ խոսքը վերաբերում է հնչակյանների կազմակերպած այս կամ այն «հեղափոխական» գործողությանը: Այսինքն՝նրանց հուշագրությունները, մամուլում հրապարակումներն ու աշխատությունները մեզ հետաքրքրքրում են ավելի շուտ որպես սկզբնաղբյուրներ: Հեղինակների երկրորդ խումբը (Ա. Կիտուր, Պ. Տեփոյան, Ռ. Խուրշուդյան, Ե. Ջերեջյան, Գ. Հովհաննիսյան, Մ. Ստեփանյան) Հնչակյան **կուսակցական պատմաբաններն** են: Նրանք բնականաբար այդ իրադարձությունների անմիջական մասնակիցներն ու ականատեսները չեն, սակայն այդ շրջանի վերաբերյալ աշխատություններ են գրել, որոնցում փորձում են հայ ազգային-ազատագրական պայքարում կարևորել Հնչակյան կուսակցության ունեցած դերակատարությունը: Նկատենք, որ նրանք ոչ միշտ են անաչառ հայեցակարգային հիմքերով դա անում, այլ երբեմն գերագնահատում են Հնչակյան կուսակցության դերակատարությունը դրանցում:

Աշխատությունը գրելիս օգտագործել ենք նաև արմենական, հնչակյան, ռամկավար և դաշնակցական որոշ գործիչների հուշերը, աշխատությունները և նամակները, որոնցում արժեքավոր տեղեկություններ կան հնչակյան կուսակցության մեզ հետաքրքրող շրջանի պատմության ուսումնասիրության վերաբերյալ:

Հնչակյան կուսակցության կողմից իրականացրած որևէ գործողություն վերլուծելու և արժևորելու ընթացքում մշտապես

ելակետ ենք ունեցել ու այդ գնահատականի հիմքում դրել ենք համազգային շահը:

Ավելացնենք, որ թեև սույն ուսումնասիրությունը հիմնականում նվիրված է հնչակյան տեսաբան-պատմաբանների աշխատությունների քննական վերլուծությանը, սակայն ելակետային շատ դրույթներ արդյունք են նաև հնչակյան մամուլում սփռված այդ նույն հեղինակների հոդված-հրապարակումների խորը ուսումնասիրության:

Աշխատության համար կարևոր և անփոխարինելի դերակատարություն են ունեցել հատկապես **հնչակյան մամուլի** նյութերը: Առանձնապես «Հնչակ» թերթի, որի էջերում հետևողականորեն լուսաբանվել են թուրքական իշխանությունների կողմից հայ ժողովրդի նկատմամբ իրականացվող բռնությունները, արևմտահայերի սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծանր կացությունը, Հայկական հարցում եվրոպական մեծ տերությունների որդեգրած երկդիմի ու շահամոլ քաղաքականությունը և այլ կարևոր հիմնահարցեր: Ազգային խնդիրները քննարկելուն զուգընթաց, հայ իրականության մեջ սոցիալիստական բնույթի առաջին տպագիր օրգան **«Հնչակը»** զբաղվել է նաև սոցիալիզմի քարոզչությամբ, քանի որ սոցիալիստական հասարակարգի կառուցումը ամրագրված էր կուսակցության ծրագրի «Հեռավոր նպատակ» բաժնում[1]:

«Հնչակը» հայ իրականության մեջ սոցիալիստական բնույթի առաջին տպագիր օրգանն էր: Նրա էջերում լուսաբանվել են նաև Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի գործունեությունը,

---

[1] **Տե՛ս Բռնապետութիւն.** Հեռաւոր ու մօտաւոյ նպատակներ եւ միջոցներ, **Հնչակ թերթ, թիվ** 2, 1888, Ծրագիր սոցիալ-դեմոկրատ Հնչակեան **կուսակցութեան (Տաճկաստանի համար)**, Կ. Պոլիս, 1910, էջ 7:

ռուսական առաջին հեղափոխությունը: Սուր քննադատության է ենթարկվել ցարական ինքնակալությունը և հատկապես՝ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ նրա վարած հետադիմական քաղաքականությունը:

Անկասկած. «Հնչակը» անգնահատելի սկզբնաղբյուր է նաև կուսակցության պատմության ուսումնասիրության համար: Սակայն. նրա նյութերից օգտվելիս աշխատել ենք քննադատաբար և անկողմնակալ հետազոտողի տեսանկյունից մոտենալ դրանում բարձրացված հարցերին. քանի որ ընդհանրապես հնչակյան պարբերականները հարցերը լուսաբանելիս հաճախ չեն կարողացել զերծ մնալ միակողմանի և կանխակալ մոտեցումներից:

Մեզ հետաքրքրող պատմական շրջանում Հնչակյանների կողմից սոցիալիստական գաղափարների քարոզչությունը, Հայկական հարցում եվրոպական երկրների, ինչպես նաև արևմտահայության նկատմամբ սուլթանական կառավարության որդեգրած քաղաքականությունն իրենց ուրույն արտահայտությունն են գտել նաև 1894-1897 թթ. Աթենքում հնչակյան կենտրոնի կողմից հրատարակվող **«Ապտակ»** երգիծական, պատկերազարդ հանդեսում: «Ապտակի»երգիծանքը քաղաքական բնույթ ուներ: Պարբերականի հոդվածներն ու իլյուստրացիաները (նկարազարդումները) ապտակ էին հայ ժողովրդի կեղծ բարեկամներին և թշնամիներին, որոնք նրան հասցրել էին ծայրահեղ թշվառ վիճակի: «Ապտակ»լույս է տեսել ինչպես առանձին, այնպես էլ «Հնչակի» կազմում, ներդիրի տեսքով:

Հնչակյան կուսակցության պատմությանը վերաբերող շատ վիճելի հարցեր ու մոտեցումներ լուսաբանելու գործում կարևոր դերակատարություն է ունեցել նաև Ստեփան Սապահ-Գյուլյանի կողմից հիմնադրված Հնչակյան կուսակցության Ամերիկա՝

մասնաճյուղի անդրանիկ օրգանի՝ 1903 թ. Բոստոն քաղաքում հրատարակված **«Երիտասարդ Հայաստան»** եռօրյա պարբերականում հրապարակված նյութերի ուսումնասիրությունը:

1909-1914 թթ. Կ. Պոլսում լույս տեսած հնչակյան կուսակցության նշանավոր գործիչ Հմայակ Արամյանցի **«Կոհակ»** պարբերականի գլխավոր նպատակը արևմտահայության առջև ծառացած խնդիրների լուսաբանումն էր և ստեղծված ծանր կացությունից դուրս գալու ուղիների փնտրտուքը: Սակայն շատ հաճախ պարբերականն անդրադարձներ է կատարել կուսակցության անցյալում ծավալած գործունեությանը և կատարել մի շարք արժեքավոր եզրահանգումներ:

Նպատակահարմար չհամարելով մանրամասն անդրադառնալ հնչակյան մամուլի բոլոր օրգաններին, նշենք միայն, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում ինչպես օսմանյան կայսրության տարածքում, այնպես էլ այլ երկրներում հնչակյանները հրատարակեցին մի շարք պարբերականներ, որոնց զգալի մասը թուրքական իշխանությունների հալածանքների, ինչպես նաև նյութական սղության և այլ պատճառներով կարճ կյանք ունեցան: Այնուամենայնիվ, արծարծած խնդիրների կարևորությամբ ու հրատապությամբ դրանք իրենց ուրույն տեղն ունեն հայ ազգային-ազատագրական պայքարի 1885-1908թթ. փուլի պատմության լուսաբանման և հնարավորինս ճիշտ եզրահանգումներ կատարելու համար: Կասկածից դուրս է նաև, որ կուսակցական մամուլի միջոցով ի հայտ եկավ հրապարակախոսների այն սերունդը, որոնց բարձրարժեք հոդվածները հիմք դարձան հետագայում իրենց աշխատությունները շարադրելու համար: Եվ քանի որ այդ հոդվածների հիմնական ասելիքը ամփոփ ձևով ներկա-

յացված են նրանց աշխատություններում, ուստի խուսափում ենք այդ լրագրային հրապարակումները քննարկելուց:

Ընդհանուր առմամբ, Հնչակյան կուսակցության պատմությանը վերաբերող վիճելի մեծ թվով հարցերի պատասխանելու և դրանց մասին առկա տարաբնույթ տեսակետները լուսաբանելու գործում «Հնչակից», «Ապտակից», «Երիտասարդ Հայաստանից» ու «Կոհակից», բացի կարևոր դերակատարություն ունեն նաև «Նոր կեանք», «Գաղափար», «Արմենիա», «Մարտ» և այլ պարբերականները[1]:

Ավետիս Նազարբեկեան

Ավետիս Նազարբեկյանի հայեցակետերը հայ ազգային-ազատագրական պայքարի ռազմավարական և մարտավարական խնդիրների վերաբերյալ

---

[1] Հնչակյան մամուլի մեզ հետաքրքրող շրջանի մասին մանրամասն տե՛ս Խուրշուդյան Ռ., Հնչակյան պարբերական մամուլը. սկզբնավորման շրջան. ՊԲՀ, թիվ 2(18), 2000, էջ 18-29:

Հնչակյան կուսակցության հիմնադիր-տեսաբան և «Հնչակ» թերթի հիմնադիր և երկարամյա խմբագիր[1] Ավ. Նազարբեկյանի հայեցակետերը հայ ազգային-ազատագրական պայքարի ռազմավարական և մարտավարական խնդիրների վերաբերյալ անչափ կարևոր են, ուստի կփորձենք հակիրճ ներկայացնել դրանք:

Ավ. Նազարբեկյանը[2] կուսակցության կարևորագույն հիմնադրույթները և մասնավորապես Արևմտյան Հայաստանի ազատագրության համար պայքարը որդեգրած ծրագրի հիմնական հեղինակն էր: Իսկ նրա անբաժան ուղեկիցն ու գաղափարական հետևորդը Մարո Վարդանյան-Նազարբեկն էր[3]: Որպես տեսաբան, նա բավական հետաքրքիր տեսակետներ ու հայեցա-

---

[1] Ա. Նազարբեկյանը «Հնչակ» թերթը խմբագրեց հիմնադրման օրվանից, իսկ 1902 թ. հրաժարվում է թերթի նկատմամբ ունեցած սեփականության իրավունքից և խմբագիր է դառնում Սապահ-Գյուլյանը:

[2] Ա. Նազարբեկյանը (ծնվ. 1866թ.) Թիֆլիսում ունևոր ընտանիքում: Տիրապետում էր հինգ լեզուների: Ուսանել է Պետերբուրգի և Սորբոնի համալսարաններում: Կապեր է ունեցել նարոդնիկների հետ: Նշված տարիներին նրա մտքերի տիրակալն «Արմենիան» էր: Երբ «Արմենիայում» երևաց համահայկական հեղափոխական կազմակերպություն ստեղծելու կոչը, Նազարբեկյանը մտերիմների համաձայնությամբ, Փորթուգալյանին հղեց մի ուղերձ, որում առաջարկում էր հեղափոխական նոր կազմակերպություն հիմնել: Փորթուգալյանը նպատակահարմար չգտնելով մերժեց: Նազարբեկյանը դա համարեց դավաճանություն սեփական ժողովրդի նկատմամբ և գրեց «Հայակեր քամելեոնը» խորագրով մի պամֆլետ («Հայրենիք» ամսագիր, թիվ 8, 1927, էջ 71): Դրանով Փորթուգալյան-Նազարբեկյան հարաբերությունները խզվում են և վերջինս Մ. Վարդանյանի Ռ. Խանազատյանի և Գ. Կաֆյանի և այլ գաղափարակիցների հետ 1887 թ. հիմնում են «Հնչակ» թերթն ու նույնանուն կուսակցությունը:

[3] Մարո Վարդանյանը (ծնվ. 1864թ.) Թիֆլիսում: Ուսանել է Պետերբուրգի կանանց բարձրագույն դասընթացները: Եղել է հնչակյան կուսակցության հիմնադիներից մեկը: Հեղափոխական գործունեության համար 1910 թ. ձերբակալվել ու բանտարկվել է Մետեխի բանտում, հետո աքսորվել է Սիբիր, որտեղից ազատվել է 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո: 1925 թ. ընդունվել է կոմկուսի շարքերը: Մահացել է 1941 թ. Թիֆլիսում: Տե՛ Մարո Նազարբեկի հուշերից, ՀԱԱ, ֆ. 1456, ց. 2, գ. 27, թ. 3:

կետեր է մատուցում գլխավորապես «Հնչակ»-ի խմբագրականներում: Կուսակցության ծրագրային դրույթների ճշմարտացիությունը հիմնավորելու նկատելի ջանքերով գրված այդ խմբագրականները հետաքրքիր են մի քանի տեսանկյունից. նախ՝ հայության ազատագրական պայքարը կազմակերպելու անհրաժեշտության պատճառների նրա մատնանշումները օգնում են հասկանալու Օսմանյան կայսրության տնտեսական և քաղաքական էությունը, երկրորդ՝ այն ռազմավարության և մարտավարության արդյունավետության չափը, որը որդեգրել էր նրա կուսակցությունը Արևմտյան Հայաստանի ազատագրության առումով, երրորդ՝ ինչու այդ մարտավարությունն իրեն չարդարացրեց:

Ցանկացած քաղաքական կազմակերպություն կամ կուսակցություն, որին վիճակված է լինելու որևէ ժողովրդի առաջնորդը, մանավանդ՝ հայ ժողովրդի, որի առջև դրված էր կամ օրհասական պայքարով իր ազատագրության հարցը լուծելու կամ աստիճանաբար ձուլվելու և անհետանալու խնդիր, պարտավոր էր այդ պայքարին գնալուց առաջ լրջորեն ծանրութեթև անել իր որդեգրած ռազմավարությունն ու մարտավարությունը: Հակառակ դեպքում՝ստացվում էր արկածախնդրության ուղիով առաջնորդել մի ժողովրդի, որի պայքարի արդյունավետ ավարտ ունենալու ճանապարհին առանց այդ էլ բազմաթիվ խոչընդոտներ կային:

Ցավոք, Հնչակյան կուսակցության պարագայում ազատամարտի գնալուց առաջ գրեթե անտեսվեցին դրա հնարավոր հետևանքները լրջորեն քննարկելու և հաշվի առնելու խիստ կարևոր հանգամանքները: Մեկ-երկու սակավարդյունք գործողությունները պետք է բավարար լինեին, որ անմիջապես նրանք փոխեին իրենց պայքարի մարտավարությունը և հասկանային,

որ տարանջատ, անմիասնական ձեռնարկները ոչ միայն չէին հանգեցնում մեծ տերությունների՝ հօգուտ Հայկական հարցի միջամտությանը, այլև արյունարբու սուլթանական իշխանությունների համար ջարդերի առիթներ էին ստեղծում: Հակառակ ստեղծված այդ խիստ անբարենպաստ իրադրությանը, Հնչակյան կուսակցությունն անհրաժեշտ հետևություններ կատարելու փոխարեն, 19–րդ դարի 90-ական թթ. շարունակում էր կազմակերպել նմանաբնույթ գործողություններ: Ակնհայտ է, որ համակ միամտությունն էր ընկած հայ քաղաքական ղեկավարների գործունեության հիմքում, անտեսվում էր հայոց դարավոր պատմության ընթացքում ծնված այն խորհուրդը, որ բոլոր այն դեպքերում, երբ այլոց ապավինելու հույսով որևէ գործողություն ենք իրականացրել, դրանից մշտապես տուժել է մեր ժողովուրդը:

Օսմանյան կայսրությունում արևմտահայության իրավիճակի փոփոխությանը հասնելու Ավ. Նազարբեկյանի տեսական հրապարակումներում, որոնք, փաստորեն, նաև Հնչակյան կուսակցության ծրագրային դրույթներն էին, նախ և առաջ բացատրվում է այդ կայսրության բռնապետական էությամբ: Նա իր ըմբռնումների չափով փորձում է պարզաբանել բռնապետական և միապետական ռեժիմների «հիմքերն ու սկզբունքները». «Բռնապետական ռէժիմ անուանվում է այնպիսի ռէժիմը, ուր խիստ ճնշում է գործում վերևից ներքև: Այսինքն ամենից վերև գտնվում է ինքը՝ կայսրը, որ միաժամանակ գլուխ է թէ քաղաքական և թէ զինուորական. այդտեղից կանոնաւոր աստիճաններով իջնում են առանձնաշնորհում ունեցող դասակարգերը, և այդպիսով հաս-

նելով մինչ ներքև՝ իրենց ահագին ծանրութեամբ անոյժ և աննշանակ են դարձնում ժողովրդային ընդհանրութիւնը»[1]:

Անշուշտ, այս ձևակերպումը հիմնականում ընդունելի է, բայց ակնհայտ է նրա հեղինակի վրա մարքսյան դրույթների ազդեցությունը: Դա պարզ երևում է նաև նրա հաջորդ ընդհանրացումից. «Այդպիսով, բնականաբար, մոռացվում են որպէս անհատի, նոյնպէս ընդհանրութեան, ժողովրդի շահերը յօգուտ կառավարիչ դասակարգի շահերի»[2]:

Բավական հետաքրքիր է նաև Ավ. Նազարբեկյանի, դարձյալ մարքսիզմի ազդեցությամբ կատարած հետևյալ տեսական ընդհանրացումը, որում կան վիճելի տարրեր: Ըստ դրա՝ «Բռնապետական ռեժիմի տակ գտնվող ժողովուրդը կառավարւում է առանձնաշնորհում ունեցող դասակարգի միջոցով ու ձեռով՝ ամենայն կողմից, ամենայն տեսակէտից յայտնվում է կառավարութեան ստրուկը, ճորտը, սեփականութիւնը, գործիքը: Բռնապետական կառավարութեան օրինակ են՝ Ռուսաստանը, Թուրքիան, Պարսկաստանը»[3]:

Այն, որ իսկապես հիշյալ պետությունները տվյալ ժամանակահատվածում կարող են որակվել որպես բռնապետական, կարելի է համաձայնվել: Բայց այն, որ բռնապետական ռեժիմի տակ գտնվող ամբողջ ժողովուրդը հանդիսանում է կառավարության ստրուկը, սեփականությունը և այլն, խիստ վիճելի է: Թերևս ճշմարտությունն այն է, որ նման վարչակարգերում մերժելի է գաղափարական այլընտրանքը և մահվան չափ դատա-

---

[1] Տե՛ս Բռնապետութիւն: Հեռաւոր եւ մոտակա նպատակներ եւ միջոցներ, «Հնչակ» թերթ, թիվ 2, 1888:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:

պարտելի, բայց, որ դրանցում առկա հասարակական բոլոր շերտերն ունեցել են ստրուկի կարգավիճակ և հանդիսացել են կառավարության սեփականությունը, առնվազն տարակուսելի տեսակետ է: Արդյո՞ք արհեստավորը կառավարության ճորտն էր: Ամենևին: Բռնապետություն ասելով՝ նախ պետք է հասկանալ մեկ գաղափարական հիմքով քաղաքական միավոր, որտեղ քաղաքական այլախոհություն, ինչպես նշեցինք, չի հանդուրժվում: - Կարելի է ավատատիրական հարաբերություններ ունեցող որոշ պետությունների համար պնդել, որ այնտեղ եղել են տնտեսապես կախյալներ և ճորտեր, բայց եղել են նաև ազատներ, որոնք ոչ մեկի սեփականությունը չեն հանդիսացել: Սա է ճշմարտությունը, որը վերաբերում է նաև հիշյալ տերություններին, մանավանդ 19-րդ դարի վերջերին, երբ, օրինակ, Ռուսաստանում նույնիսկ ճորտատիրական կարգերը բավական ժամանակ էր, որ վերացած էին:

Այս ամենից ելնելով՝ կարծում ենք, որ Ավ. Նազարբեկյանի հայեցակետերում առավել ընդունելի են նրանք, որոնք վերաբերում են ճնշված և պետականազուրկ ազգերի ազատագրության անհրաժեշտության հիմնավորմանը: Դա վերաբերում է հայ ազգին, հանուն որի «իբրեւ մարդկութեան մի մասի, լիակողմանի ու լիակատար զարգացման. Յանուն մարդկային ու քաղաքացիական իրաւունքների. յանուն ժողովրդի տնտեսական բարեկեցութեան. յանուն կրոնական համբերողութեան», ինչպես նաև՝ «բիւրաւոր հայ կեանքերի» ապահովության, աճող գաղթականության և քաղաքական ու սոցիալ-տնտեսական անտանելի պայմանների, հեղինակը գտնում է, որ պետք է Արևմտյան Հայաստանում դիմել մոտակա նպատակին, «այն է՝ **ձեռք բերենք քաղաքական ազատութիւն**, իբրև անհրաժեշտ պայման վերոյի-

շած կէտերի իրագործման համար»[1]: Այնուհետև նա հետևյալն է գրում՝ «Դրանից յետոյ ինքն ըստ ինքեան տրամաբանական կերպով առաջանում է **ազգային ինքնուրոյնութեան, անկախութեան իրագործման պահանջը**»[2] (այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են – Ս. Ս.):

Ավ. Նազարբեկյանը, ինչպես պարզ երևում է ընդգծվածից, նախ դնում է քաղաքական ազատության, որից հետո միայն ազգային ինքնուրույնության և անկախության իրականացման պահանջ: Կարծում ենք, որ նա այնքան էլ խորությամբ չի ըմբռնել, որ **քաղաքական ազատությունը կարող է հետևանք լինել միայն ազգային անկախության կամ այլ արտահայտությամբ՝ քաղաքական ազատությունը համահունչ է քաղաքական անկախությանը**:

Իսկ ինչ վերաբերում է ինքնուրույնությանը, ապա՝ պետք է ավելացնենք, որ ժողովուրդը կարող է լինել ինքնուրույն, որը չենթադրի լիարժեք անկախություն, այլ խոսքով՝ ինքնուրույնություն հասկացությունը, եթե այն վերաբերում է ժողովուրդներին, կարող է ենթադրել ինքնավարություն, ինքնակազմակերպման հնարավորություն և ոչ անպայման անկախություն: Թեպետ հստակ է, որ լիարժեք ինքնուրույնություն կարելի է ունենալ միայն լիարժեք անկախ լինելու դեպքում: Այնպես որ, ինքնուրույնություն և անկախություն եզրույթների նույնականացումը ամենևին էլ ճիշտ չի կարող լինել:

Փաստորեն, Ավ. Նազարբեկյանի այս հայեցակետերն են ընկած Հնչակյան կուսակցության ծրագրային դրույթների հիմ-

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս Բռնապետութիւն: Հեռավոր եւ մոտակա նպատակներ եւ միջոցներ, «Հնչակ» թերթ, թիվ 2, 1888:

քում, որոնց ոչ այնքան հստակ լինելու հանգամանքը չէր կարող իր բացասական հետևանքները չունենալ որդեգրված մոտակա ռազմակավարության իրականացման տեսանկյունից:

Արևմտյան Հայաստանի ազատագրության հիշյալ ռազմավարության կամ նպատակի իրական դարձնելուց հետո, հնչակյան տեսաբանն այնուհետև այն տեսակետն է ներկայացնում, որ «Քաղաքական ազատութեան և ազգային անկախութեան իրագործումից յետոյ՝ ազգային կառավարութեան ձևն ու կերպը պէտք է լինի հետևեալը. 1) Մշտական ժողովրդական ներկայացուցչութիւն, Ազգային ժողով, որ կընտրուէ ազատ կերպով՝ ընդհանուր քուեարկութեամբ», «և որ կունենայ լիակատար իրաւունք տերունական բոլոր հարցերում, և 2) նահանգական ընդարձակ ինքնավարութիւն»[1]: Այստեղից պետք է եզրակացնել, որ Ավ. Նազարբեկյանը փաստորեն խորհրդարանական կառավարման տիպի պետության ստեղծման կողմնակից էր, որն այն ժամանակների և, հատկապես, Օսմանյան կայսրության դեպքում, խիստ ռոմանտիկ է հնչում:

Իսկ որն էր հիշյալ գլխավոր նպատակին հասնելու Ավ. Նազարբեկյանի մատնանշած մարտավարությունը: Բնականաբար այն, որը մատնանշված է հնչակյան կուսակցության ծրագրային դրույթներում: Նա դեմ էր պայքարի խաղաղ միջոցներին, որոնցով, բնականաբար, անհնար էր հասնել անկախ Հայաստանի ստեղծման գաղափարի իրականացմանը: Բայց արդյո՞ք արդյունավետ էր նրա մատուցած մարտավարությունը, որը «յեղափոխութիւնն է, ապստամբական միջոցներն են, որ ինչքան ընդարձակ ու լայն սահմաններ ունենան հայ ժողովրդի մէջ, նոյնքան

[1] Բռնապետութիւն: Հեռավոր եւ մոտակա նպատակներ եւ միջոցներ, տե՛ս «Հնչակ» թերթ, թիվ 2, 1888:

նպատակայարմար կայտնվեն»[1]: Իսկ ինչպես անել, որ այդ հեղափոխական կամ ապստամբական ոգին հայ ժողովրդի մեջ այնքան զարգանա, որպեսզի նա կարողանա այն կյանքի կոչել կամ «գործով ապացուցանել», հրապարակախոսական հարց է հնչեցնում Ավ. Նազարբեկյանը և ինքն էլ փորձում է պատասխանել: Նա գտնում է, որ. «Դրա համար գիտակցական, յեղափոխական տարրը, որ սկսում է գոյութիւն ունենալ և մօտ ապագայում առաւել կծաղկէ հայ երիտասարդութեան մէջ, պէտք է հիմնէ մէկ ընդհանուր գաղտնի ու խիստ կարգապահ յեղափոխական կազմակերպութիւն»[2]:

Հարկավ, հեղինակը չի սխալվում: Որդեգրված ռազմավարությունը պետք է իրականացվեր գաղտնի և հզոր կազմակերպության ստեղծումից հետո միայն: Բայց առաջ անցնելով նշենք, որ այս կուսակցության հիմնադիր գործիչներն առաջնորդվեցին կազմակերպության ստեղծման և հեղափոխական պայքարի զուգորդմամբ, այսինքն՝ կազմակերպությունը դեռևս լիարժեք չձևավորված՝ գնացին տարանջատ գործողությունների, որը, մեր խորին համոզմամբ, իր բացասական ազդեցությունն ունեցավ այս կուսակցության արագ պառակտման և քայքայման համար: Այս առումով տեսական դատողությունները գործնականի չվերածվեցին նաև Ավ. Նազարբեկյանի ցանկությունները:

Ժողովրդի հեղափոխական պայքարը ենթադրում է դրանում լայն զանգվածների ներգրավում և միաժամանակյա ընդվզում և ոչ թե առանձին, տարանջատ ձեռնարկներ, որոնցից արևմտահայությունը փաստորեն ոչինչ չշահեց: Սա անվիճելի ճշմարտություն է: Իսկ ինչ պետք է աներ Ավ. Նազարբեկյանի մատ-

---

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում:

նանշած և մեր ընդգծած «յեղափոխական տարրը»: Ըստ հեղինակի՝ «1) Նրա գործունեութեան ասպարէզն է թիւրքաց Հայաստանը: 2) Նա պիտի մամուլի և բերանացի խօսքի միջոցներով յեղափոխական պրոպագանդա անէ հայ ինտելիգէնցիայի և երիտասարդութեան մէջ: 3) Նա պէտք է մտնէ թիւրքաց Հայաստանի հայ ժողովրդի մէջ և նոյնպէս վերոյիշուած միջոցներով տարածէ նրա մէջ ապստամբական ոգին և պատրաստէ այն հողը, որ անհրաժեշտ է ժողովրդական աստամբութեան համար»[1]: Այն տպավորությունն ենք ստանում, որ իսկապես Ավ. Նազարբեկյանը մատնանշում էր այն ճիշտ ուղին, որով ընթանալուց հետո կարելի էր իրականացնել հեղափոխությունը: Այսինք՝ գաղտնի քարոզչություն և գաղափարական նախապատրաստություն: Սակայն, հնչակյան տեսաբանը ոչինչ չի գրում զինվելու անհրաժեշտության մասին, որը հեղափոխական պայքարի ամենակարևոր պայմանն է և առանց որի ամեն մի քարոզչություն դատապարտված է ձախողման: Ահա այստեղ պետք է գտնել այն հարցի պատասխանը, թե ինչու Հնչակյան կուսակցությունը շատ կարճատև «փայլատակեց» և արդեն 1896 թ. հետո փաստորեն իրեն այդպես էլ չվերագտավ:

Ավելորդ չենք գտնում մատնանշել նաև, որ մինչև այդ թվականի նրա գործունեության մեջ չենք տեսնում լուռ նախապատրաստություն և քարոզչություն, ապստամբական պայքար, այլ միաժամանակ տեղի էին ունենում նաև ցույցեր (Գում Գափուի, - Բապը Ալիի և այլն), որոնք պայմանավորված էին Եվրոպայի միջամտությանն հասնելու անիրատեսական ձգտումներով: Դրանք նաև հակասում էին կուսակցության գործունեության ծրագրային

[1] Տե՛ս նույն տեղում:

դրույթներին և գլխավոր հիմնադրի վերոհիշյալ հայեցակետերին: Մի խոսքով, միանգամայն կասկածելի էր հեղափոխական պայքարի նրանց որդեգրած ուղու իրականություն դառնալու հնարավորությունը:

Հետաքրքիր է, որ Ավ. Նազարբեկյանի հետագա մի քանի խմբագրական հոդվածներն էլ հակասական վիճակ են ստեղծում նրա վերոհիշյալ տեսական ըմբռնումների և որդեգրած ռազմավարության հետ:

Այսպես, «Պատասխան սուլթանին» խմբագրականում[1] նա սուլթանի «ինչից են դժգոհ հայերը» հարցը համարելով «տարօրինակ ու միամիտ հարց», հետևյալ կերպ է փորձում դրան պատասխանել. «հայ ժողովրդի իղձը, պատմութեամբ ու նրա կեանքի հանգամանքներով պատրաստված պահանջները հետևեալներն են. 1) Մշտական ժողովրդական ներկայացուցչութիւն, օրենսդիր ժողով, որ կընտրվի ազատ կերպով՝ ընդհանուր քուէարկութեամբ, պատուէրներով հանդերձ քուէարկողների կողմից և որ կունենայ լիակատար իրաւունք ազգային կառավարչական բոլոր հարցերում: 2) Ժողովրդական ներկայացուցիչներ ընտրվում են ամեն դասակարգից և համեմատ բնակիչների քանակութեան: 3) Օրէնսդիր Ժողովի հաստատութեան վայր պետք է լինի Հայաստանի նշանաւոր քաղաքներից մէկը»[2]: Այստեղ նկատելի է, որ արդեն նահանջ է կատարվում քաղաքական անկախության պահանջից դեպի ինքնավարություն: Դրանում ավելի ենք համոզվում՝ ընթերցելով հոդվածի հետևյալ հատվածը՝ «4) մամուլի, խօսքի, խղճի, գումարման, ընկերութիւնների և ընտրողական ագիտացիայի ազատութիւն, 5)

---

[1] Պատասխան սուլթանին. «Հնչակ» թերթ. թիվ 3, 1888:

[2] Տե՛ս նույն տեղում:

քննութիւն ժողովրդի ամբողջ տնտեսական կեանքի պայմանների և կերպարանափոխել ու կանոնադրել նրանց ժողովրդի ցանկութիւնների ու պահանջների համեմատ, 6) ամէն անձի բնակարան պիտի լինեն անձեռնմխելի, 6) ազգային միլիցիա և զէնք կրելու ազատութիւն»[1]:

Այս կետերը մատնանշում են, որ իսկապես անջատողականության, անկախության խնդիր չի դրվում և առավելագույն պահանջներ են դառնում անձի խոսքի, խղճի և հավաքույթների, ընտրությունների և այլ ազատությունները, տնտեսական պայմանների բարելավումը և այլն: Բավական հետաքրքիր եզրակացությունների տեղիք է տալիս նույն հոդվածում Ավ. Նազարբեկյանի հետևյալ տողերը, որ «Միայն այն ժամանակ մենք կը լինենք ինքնուրոյն ու ազատ, երբ մենք կունենանք ընդարձակ ու լայն տեղական ինքնավարութիւն»[2]:

Նազարբեկյանը հետագայում ևս հեղինակել է «Հնչակի» մեծ թվով խմբագրականներ: Մասնավորապես 1890-ական թթ. Հնչակյանների անհաջողություններից և կուսակցության պառակտումից հետո Նազարբեկի հայացքներում լուրջ տեղաշարժեր նկատվեցին, որոնք արտահայտվեցին 1897 թ. Կուսակցության ծրագրի երրորդ հրատարակության մեջ: Ծրագրի հեռավոր նպատակը մնացել է անփոփոխ, սակայն մինիմում բաժնում արևմտահայերի ազատագրության խնդիրն իր առաջնահերթությունը զիջել է արևելահայերի ցարիզմի տիրապետությունից ազատագրվելու հարցին: Ավելին, Նազարբեկի գաղափարական նահանջը 20-րդ դարի սկզբին ռուսական սոցիալ դեմոկրատականների քաղաքական ակտիվիության ուժեղացման

---

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում:

հետ, էլ ավելի խորացավ: Այս հանգամանքը ցայտուն արտահայտվեց հատկապես կուսակցության հինգերորդ համաժողովում, որտեղ նա ուղղակի պահանջեց կուսակցությունը բաժանել երկու մասի՝արևմտահայերի ազատագրության պայքարը թողնել արևմտահայերին, իսկ հնչակյանների արևելյան հատվածը պետք է համագործակցեր Ռուսաստանի սոցիալ դեմոկրատների հետ և պայքարի սլաքն ուղղեր բացառապես ցարիզմի դեմ: Կարճ ասած, Նազարբեկի գաղափարական էվոլյուցիան վերջում հանգեց այն համոզմունքին, որ հատկապես 1897-1905 թթ. նրա համար հայ ազգային-ազատագրական պայքար հասկացությունն ավելի շատ ցարիզմի դեմ արևելահայերի հեղափոխություն էր, քան Օսմանյան տիրապետության: Սակայն, չնայած քաղաքական իրավիճակներից կախված այդ տատանումներին, մեր խնդրո առարկա ժամանակաշրջանի արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի վերաբերյալ նրա աշխարհահայացքային հիմնադրույթները էական փոփոխություններ չեն կրել:

Ամփոփելով նշենք՝

Առաջին. Հնչակյան կուսակցության ծրագրում և դրա հիմնական հեղինակ Ավ. Նազարբեկյանի հոդվածներում, որպես նպատակ առաջ քաշված Արևմտյան Հայաստանում անկախության հասնելու հարցը կամ շփոթվել է ինքնավարության հասնելու գաղափարի հետ, կամ էլ կրել է ձևական բնույթ: Հնչակյանների գլխավոր տեսաբան Ավ. Նազարբեկյանի առավելագույն պահանջն իրականում ինքնավարությունից այն կողմ չի

անցել[1]:

Երկրորդ. Ավ. Նազարբեկյանի տեսական ընդհանրացումները, որոնք ժողովրդավարական կարգերի ձևավորման տեսանկյունից զգալիորեն կրում են մարքսիզմի ազդեցությունը, չեն հիմնավորվում: Դրանք համոզիչ չեն հնչում նաև այն առումով, որ Օսմանյան Թուրքիայում կիրառելի, առավել ևս՝ իրագործելի չէին: Հիմնավոր չեն նաև այն պարզ պատճառով, որ անհնար էր Թուրքիայում դնել ժողովրդավարական սկզբունքներով ինքնավարության հասնելու հարց միայն հայ ժողովրդի համար առանձին վերցրած: Ժողովրդավարական կարգեր (դեմոկրատիա) պետք է հաստատվեին ամբողջ Օսմանյան կայսրությունում, որին, սակայն, միայն հայկական հեղափոխությամբ անհնար էր հասնել:

Երրորդ. Արևմտյան Հայաստանի քաղաքական ապագայի մասին Ավ. Նազարբեկյանի պատկերացումները շատ դեպքերում հակասական էին, հեղհեղուկ, տվյալ ժամանակի ու պայմանների համար ժամանակավրեպ և անիրագործելի:

---

[1] Նազարբեկյանը հետագայում ևս հեղինակել է «Հնչակի» մեծ թվով խմբագրականներ և, չնայած քաղաքական իրավիճակներից կախված որոշ տատանումների, գաղափարական ասպարեզում նրա աշխարհահայացքային հիմնադրույթները շատ չեն փոխվել:

Հնչակյան կուսակցության պատմությանը նվիրված **Արսեն Կիտուրի**[1] խմբագրությամբ լույս տեսած գիրքը[2] լիարժեք պատմագիտական աշխատություն չի կարելի համարել: Այն ընդգրկում է Արևմտյան Հայաստանի՝ Թուրքիայի տիրապետության տակ հայտնվելու շրջանից (որը ներկայացված է շատ սեղմ) մինչև 1920 թ. Կիլիկիայի հայտնի դեպքերը: Բացի դրանից՝ Կիտուրի խմբագրած այդ գրքում առանձին բաժնով տրված են 1924, 1934 և 1938 թվականներին տեղի ունեցած Հնչակյան կուսակցության 8-րդ, 9-րդ և 10-րդ ընդհանուր պատգամավորական ժողովների որոշումները, որոնք կարևոր վավերագրեր են պարունակում, սակայն դուրս են մեր հետաքրքրության շրջանակներից և օժանդակ նյութի արժեք ունեն:

Աշխատության «Թուրքական տիրապետութեան լուծ»փոքրածավալ գլխում Թուրքիայի տիրապետության տակ գտնվող ժողովուրդների ծանր դրությունը ներկայացնելուց հետո, հեղինակն անդրադառնում է 1860-1864 թթ. արևմտահայության վի-

---

[1] Կիտուր Արսենը ծնվել է 1883 թ. Բայազետում: 1905թ. անդամագրվել է Հնչակյան կուսակցությանը: 1908թ. ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, իսկ 1914 թ.՝ Կ. Պոլսի Պետական բարձրագույն ուսուցչանոցը: 1918թ. մասնակցել Սարդարապատի հերոսամարտին: 1937-1957 թթ. եղել է «Արարատի» խմբագիրը: Հրատարակել է «Մարքսիզմ, դարվինիզմ, հոգին և նյութը» «Պատմության փիլիսոփայությունը», «Հայ ազատագրութեան ճանապարհին», «Հուշեր և փուշեր» և այլ աշխատություններ: Վախճանվել է Բեյրութում 1976թ.:

[2] Տե՛ս Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան, 1887-1962, խմբագիր Ա. Կիտուր ուսուցչապետ, Ա. հատոր, Պէյրութ, 1962:

ճակին, իսկ ավելի մանրամասն՝ Զեյթունի 1862 թ. ապստամբությանը:

Ընդհանուր առմամբ, Կիտուրն այն կարծիքն է հայտնում, որ Թուրքիայում հպատակ ժողովուրդները ենթարկվում էին տնտեսական, քաղաքական և կրոնական ճնշումների, միաժամանակ ներկայացնելով տիպիկ բոլշևիկյան մի թեզ, ըստ որի՝ «կեղեքումներուն ենթական էին նաեւ թուրք աշխատավորները», որը, մեր կարծիքով, այնքան էլ հեռու չէ իրականությունից, սակայն հայ-թուրքական այն ժամանակվա բացահայտ թշնամական, թուրքերի կողմից բացարձակ անհանդուրժող հարաբերություններում՝ ոչ էական:

Զեյթունի 1862 թ. ապստամբությանը հակիրճ անդրադարձ կատարելուց հետո, հեղինակը կարծիք է հայտնում, որ դրանով նույնիսկ Կ. Պոլսի հայերն էին ներշնչվում և այդ շրջանում այնտեղ գտնվող Մ. Նալբանդյանի նախաձեռնությամբ հիմնում են «գաղտնի կազմակերպութիւն մը՝» Արեւմտահայերու մէջ յեղափոխական աշխատանք տանելու համար»[1]:

Կարծում ենք, որ սա եթե ոչ սխալ, ապա՝ վիճելի տեսակետ է, ինչպես որ վիճելի է նաև Լեոյի, Վ. Պարսամյանի և այլ հեղինակների այն կարծիքը, թե Մ. Նալբանդյանն է եղել Զեյթունի ապստամբության, ավելի ճիշտ՝ ինքնապաշտպանության գաղտնի կազմակերպիչն ու ոգևորողը:

Այնուհետև Ա. Կիտուրը (դարձյալ համառոտ) տալիս է Հայկական Հարցի ծագման պատմությունը, անդրադառնում է Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ և Բեռլինի վեհաժողովի 61-րդ - հոդվածներին: Նա այն կարծիքն է հայտնում, որ «Արեւմտեան -

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 13:

Հայաստանի հարցը՝ սկսած Պերլինի ժողովէն, մտավ միջազգային դիւանագիտութեանց մէջ՝ «Հայկական Հարց» անունով»[1]:

Որոշ տեսաբաններ վիճարկում են հեղինակի այս տեսակետն («Հայկական հարցն այնքան հին է, որքան հայ ժողովուրդը»[2], «Հայկական Հարցը ծագել է 1375 թվականից, երբ կործանվել է Կիլիկիայի հայկական թագավորությունը»[3] և այլն) այն առումով, որ Բեռլինի դաշնագրով եթե Հայկական հարցը մտավ միջազգային դիվանագիտության ասպարեզ, ապա՝ դա ամենևին չի նշանակում, թե այն ծագել է հենց այդ վեհաժողովում: - Կարծում ենք, ավելի ճիշտ է այն տեսակետը, որ Հայկական - Հարցը ծագել ու միջազգային դիվանագիտության փատաթղթերում «հաստատվել է»Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված - Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրով: Ա. Կիտուրն ամենևին չի սխալվում, երբ 1870-1880-ական թթ. արևմտահայ ազատագրական շարժումները և հայ ազատագրական խմբակների առաջացումը պայմանավորում է արևմտահայության վիճակի էլ ավելի վատթարացումով և արևմտահայության ազատագրությունը կազմակերպելու անհրաժեշտությամբ[4]:

Նա՝ որպես ազատագրական շարժման գաղափարախոսների, բարձր է գնահատում է նաև Ռ. Պատկանյանին, Ռաֆֆուն և Գր. Արծրունուն: Ա. Կիտուրը բավական հետաքրքիր տեսակետ է հայտնում 1870-80-ական թթ. Եվրոպական պետությունների՝ - Հայկական Հարցի նկատմամբ ունեցած վերաբերմունքի կա-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 13:

[2] Տե՛ս Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Ե., 1994, էջ 5-27, Տե՛ս նաև Սարուխանյան Ն., Լեոն և Հայկական հարցը, ԼՀԳ, թիվ 2(43), էջ 43-55:

[3] Տե՛ս Խուրշուդյան Լ., Հայկական Հարցը, Ե., 1995, էջ 8:

[4] Տե՛ս նույն տեղում., էջ 21-22:

պակցությամբ: Նա իրավացիորեն գրում է. «Անոնք կ'աշխատէին անխախտ պահել սուլթանական բռնապետութիւնը, **իսկ այդ կը նշանակէր անխախտ պահել այդ բռնապետութեան լուծը՝ նուաճուած ժողովուրդներու վրայ**»[1] (Այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են):

Կարծում ենք, հեղինակն այստեղ այնքան էլ ճիշտ չէ, ընդհակառակը, մեծ տերություններն ավելի հաճախ, ելնելով իրենց քաղաքական շահերից, խրախուսել են թուրքահպատակ ժողովուրդների ազատագրական շարժումները՝ Թուրքիան մասնատելու համար: Այլ հարց է, որ եթե նրանցից որևէ մեկը երբևէ ձգտել է այդ պետության պահպանմանը, ապա՝ դա արել է հակառակ մյուսի քաղաքական շահերի (սա վերաբերում է Անգլիային, Ավստրոհունգարիային, Ֆրանսիային և Ռուսաստանին):

Չենք կիսում նաև հեղինակի այն կարծիքը, թե 1870-80-ական թթ. «հայ զանգուածը իր սլաքները ուղղեց ոչ միայն սուլթանիզմին, այլ նաեւ՝ ցարիզմին դէմ»: Մինչև 1903 թ. հայոց կռվի ճակատը բացառապես Արևմտյան Հայաստանն էր և վերոհիշյալ շրջանում Արևելյան Հայաստանում տեղի ունեցած հատուկենտ ցույցերն ամենևին չեն նշանակում, թե հայությունը պայքար սկսեց նաև ցարիզմի դեմ: Հայ ազատամարտի երկրորդ ճակատը փաստացի բացվեց միայն 1903 թվականից և վավերացվեց 1905 թ. «Կովկասյան նախագծով»[2]:

Ա. Կիտուրը 1870-80-ական թթ. հայ հասարակական-քաղաքական կյանքում գոյություն ունեցած հոսանքները բաժանում է խրիրդահայ պատմագրության կողմից սահմանված տեսության

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 24:
[2] Տե՛ս Ներսիսյան Ա., Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն (1898-1908), հատոր Բ., Պէյրութ, 2008, էջ 213-231:

համաձայն, որոնք արդեն հնացել են և այսօր քննություն չեն բռնում[1]: Դրանք են՝ պահպանողական-կղերականը, որը դեմ էր «որեւէ յառաջադիմական գաղափարի և շարժումի»և պայքարում էր հեղափոխական մտավորականների դեմ, լիբերալ-բուրժուականը, որը դարձյալ դեմ էր հեղափոխությանը, սակայն աստիճանական բարեփոխումների կողմնակից էր:

Ի տարբերություն խորհրդահայ պատմագիտության Ա. Կիտուրը չի առանձնացնում միայն հեղափոխական-դեմոկրատական հոսանքը, որի փոխարեն ներկայացնում է ահաբեկությունը պայքարի գլխավոր զենք որդեգրած նարոդնիկներին և դրանց թվին է դասում Կ. Մամիկոնյանին, Հովհ. Մանուչարյանին և Սր. Տեր-Գրիգորյանին, որոնք 1880թ. ձուլվեցին «հայ լիբերալ-մշակականներուն հետ»[2]: Այս ճավալուն նախապատրաստությունից հետո հեղինակն անդրադառնում է արդեն մեր ուսումնասիրության շրջանին վերաբերվող պատմական իրադարձություններին:

«Հեղափոխական շարժումը Վանի մէջ» վերնագրի ներքո շարադրանքում հեղինակը ներկայացնում է Արմենականների գործունեությունը Վանում: Սակայն մինչև այդ շատ սեղմ տալիս է 1872 թ. Վանում ստեղծված ազատագրական «Միութիւն ի Փրկութիւն»խմբակի հակիրճ պատմությունը, ինչպես նաև գնահատում է Վանի ազատագրական պայքարի գաղափարական

---

[1] Տե՛ս Հայոց պատմություն, ՀՀ ԳԱԱ հրատարակություն, հատոր 3, Ե. 2010, էջ 373-384:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 24-25:

սերմնացաններ Մ. Խրիմյանի[1] և Մ. Փորթուգալյանի կարևոր դերակատարությունը[2]:

Արմենական կուսակցության հիմնադիր նա իրավացիորեն համարում է Մ. Փորթուգալյանի ստեղծած «Գործակցական միության» անդամ Մ. Ավետիսյանին, ում անմիջական ղեկավարությամբ 1885 թ. գաղտնի հիմնադրվում է այդ կազմակերպությունը: Սակայն հետագա շարադրանքից պարզ է դառնում, որ հեղինակին հայտնի չէին, թե քանի հոգի և ովքեր էին նրանք[3]:

Այնուհետև Ա. Կիտուրը հանգամանորեն անդրադառնում է Հնչակյան կուսակցության ստեղծման գործընթացին և ծավալած գործունեությանը: Նա կուսակցության հիմնադիրներ է համարում Ժնևի համալսարանի ուսանողներ Ա. Նազարբեկյանին, Մ. - Վարդանյանին, Ռ. Խանազատին և Գ. Կաֆյանին: Վերջիններս ռուսական և եվրոպական հեղափոխական գաղափարներից ազդված գործիչներ էին: Այս խումբը անձնական շփումների և - քարոզչության արդյունքում աստիճանաբար ձեռք է բերում համախոհներ և որոշում նվիրվել Արևմտյան Հայաստանի ազատագրման խնդրին և այդ նպատակն իրականացնելու համար նախաձեռնում է հայ հեղափոխականների ընդհանուր համագումար կազմակերպել: Այդ նախաձեռնությունը կյանքի կոչելու համար նրանք դիմում են արևմտահայ նշանավոր գործիչ, Մարսել

---

[1] Մ. Խրիմյանի կյանքի և հասարակական քաղաքական գործունեության մասին մանրամասն տե՛ս Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան (հասարակական քաղաքական գործունեությունը), Ե., 2000:

[2] Մ. Փորթուգալյանի մասին մանրամասն տե՛ս Սարգսյան Ս., Մկրտիչ Փորթուգալյանի հասարակական-քաղաքական կյանքը և «Արմենիա» պարբերականը, Ե., 2018:

[3] Մասնակցել են տասներկու շրջանավարտներից ինը, որոնց անուններն հայտնի են: Տե՛ս Սարգսյան Ս., Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1921թթ.) Ե., 2009. էջ 33:

քաղաքում հրատարակվող «Արմենիա»[1] թերթի հիմնադիր-խմբագիր Մ. Փորթուգալյանի ու նրա թերթի օգնությանը: Ն-րանք «Արմենիայում» տպագրում են մի հայտարարություն, որ-տեղ շեշտելով իրենց խորը տարակարծությունները «Արմենիա-յի» և Մ. Փորթուգալյանի հետ, հայտարարում են վերջինիս հետ իրենց կապերի խզման մասին: Խմբագրությունն անմիջապես արձագանքում է և իր պատասխանում գրում. «մեր ընթերցողնե-րը մեծ կորուստ ունեցած չէն ըլլայ Կոռան, Կաֆան թղթակիցնե-րու և անոնց պատկանած ընկերութեան գրածները չկարդալով այսուհետև «Արմենիաի» մէջ» և պատճառաբանում, որ ինքը «նման միութիւն մը կազմելու վրայ է»[2]:

Դրանից հետո Ժնևի խումբը, որի անդամների թիվն արդեն հասնում էր ինն հոգու, որոշում է կազմել ապագա ընկերության ծրագիրը. դրա նախապատրաստությունը հանձնարարվում է Ա. -Նազարբեկյանին, Մ. Վարդանյանին և Գ. Ղարաջանյանին[3]: Ո-րոշվում է հրատարակել նաև հեղափոխական բնույթի մի թերթ, որը կօգներ իր շուրջը համախմբելու երիտասարդությանը: Այդ թերթը դառնում է 1887 թ. հրապարակվող «Հնչակը», որի շուրջ համախմբվածներն էլ կազմում են Հնչակյան կուսակցությունը:

Ա. Կիտուրը միանգամայն իրավացի է, երբ գրում է, թե այս խմբի անդամները «ջերմապես խանդավառուած էին ռուսական յեղափոխութեան գաղափարաբանութեամբ և անոր յախուռն գործունեութեամբ: Ժընեւի մէջ անոնք մշտապէս յարաբերու-

---

[1] Այդ պարբերականի ամբողջական պատմությունը տե՛ս Սարգսյան Ս., «Արմենիա» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում, Ե. 2014:

[2] Տե՛ս «Արմենիա» թերթ, թիվ 21, 1886:

[3] Գ. Ղարաջյանը գաղափարական տարաձայնությունների պատճառով 1888թ. հեռացավ «Հնչակից»:

թեան մէջ էին և մօտէն շփում ունէին հոն գտնուող նարոտնիկներու և Պլեխանովականներու հետ: Հայ երիտասարդները կը խանդավառուէին մէկ կողմէ նարոտնիկներու ահաբեկչական յախուռն գործունէութեամբ, և կ'երազէին զայն փոխադրել Հայաստան և հոն կիրառել միեւնոյն մեթոդները թուրք բռնակալութեան դէմ միւս կողմէ ալ՝ Մարքսիզմը իր նոր վարդապետութեամբ, իր գիտական հիմունքներով անոնց միտքին ու տրամաբանութեան կը խօրեր»[1]:

Այս ամենը ճիշտ էր, իսկ հայրենասիրական այդ մղումները՝ գովելի: Սակայն ինչպես կարելի էր գործելավայր ու մարտավարություն ընտրել մի երկրի համար, որտեղ նրանք երբևէ չէին եղել, ամենևին ծանոթ չէին այնտեղի պայմաններին: Ավելին՝ սոցիալիզմ երազել այդ նույն երկրի համար, որը դեռևս միջնադարյան ավատատիրական հարաբերությունների զարգացման ընթացքի մեջ էր և այնտեղ դեռ կարգին չէին էլ թափանցել դրամատիրական հարաբերությունները: Այս առումով Ա. Կիտուրը հարկ եղած վերլուծություններ չի կատարում, որից և նրանց ծրագրային դրույթներից կարելի է եզրակացնել, որ հնչակյան գործիչները ակնհայտորեն տուրք էին տալիս քաղաքական ռոմանտիզմին, որից այդպես էլ չկարողացան ազատվել:

Ա. Կիտուրն այնուհետև ներկայացնում է կուսակցության ծրագիրը, որն ուներ «հեռաւոր»և «մօտաւոր»նպատակներ: Այդ ծրագրի վերլուծությունը դուրս է մեր հետաքրքրությունների շրջանակից: Միայն հարկ ենք համարում ընդգծել, որ «մօտաւոր» նպատակը Արևմտյան Հայաստանի քաղաքական ազա-

---

[1] Տե՛ս նույն տեղում., էջ 31:

տագրությունն էր, իսկ «հեռաւորը»՝ այնտեղ սոցիալիստական կարգերի հաստատումը:

Կարևոր ենք համարում կանգ առնել հեղինակի հետևյալ դատողության վրա. «**Խմբակի բոլոր անդամները կը փայփայէին Հայաստան մեկնելու գեղեցիկ յոյսը հոն, տեղւոյն վրա ուսումնասիրելու հայութեան տառապալից կեանքը և յեղափոխութեան ապագայ գործունէութեան պայմաններն ու կարելիութիւնները**»[1]:

Կարծում ենք, որ դեռևս չտեսած երկրի վերաբերյալ ազատագրության ծրագրերի մշակմանը պետք է նախորդեր գոնե այնտեղ լինելն ու իրավիճակին ծանոթանալը և ոչ թե այն տեսնելուց առաջ հապշտապ նպատակներ և դրանց հասնելու միջոցներ ծրագրվեր: Արևմտյան Հայաստանի տեղական պայմաններին ամբողջովին անծանոթ լինելով նրա ազատագրության ռազմավարություն ու մարտավարություն ընտրելն ամենևին չէր բխում արևմտահայության շահերից և բնականաբար խիստ բացասաբար անդրադարձավ հնչակյանների գործունեության արդյունավետության և արևմտահայերի առանց այն էլ վատթար կացության վրա:

Այս ամենից հետ **Ա. Կիտուրն** անդրադառնում է հնչակյանների ծավալած գործունեությանը, ընդ որում ոչ թե վերլուծելով դրանք, այլ սոսկ նկարագրելով: Նա ներկայացնում է Ռ. Խանազատի Կ. Պոլիս մեկնելը, հանդիպումները Խրիմյան Հայրիկի, Ա. Արփիարյանի և այլոց հետ: Ապա նրա անցումը Թիֆլիս (1889 թ.), որտեղ այդ ժամանակ ձևավորման գործընթացի մեջ էր Հայ հեղափոխականների դաշնակցությունը, և հանդիպումները տե-

[1] Տե՛ս նույն տեղում., էջ 38:

ղի գործիչների հետ, որոնք ձգտում էին հնչակյաններին նույնպես միավորել Հայ հեղափոխականների դաշնակցության մեջ: - Սակայն այդ շփումները դրական արդյունքի չեն հանգեցնում, որովհետև, ըստ հեղինակի, Դաշնակցության հիմադիրները չէին ցանկանում, որ սոցիալիզմի խնդիրը «սուր կերպով դրուէր հայկական շրջաններուն մէջ», որին Ռ. Խանազատը կտրուկ դեմ է արտահատվում[1]:

Մենք այն կարծիքին ենք, որ առհասարակ սոցիալիզմի խնդիրը երկու կուսակցությունների մոտ էլ պետք է մղվեր երկրորդական պլան, ինչը, դժբախտաբար, տեղի չունեցավ: Տեղի չունեցավ նաև հանուն ազատագրական պայքարի հաղթանակի բոլոր ուժերի միավորումը: Մի բան, որն օդի նման անհրաժեշտ էր և պահանջում էր արևմտահայության ազատագրության ընդհանուր շահը: Իրականում միավորումը Հայ հեղափոխականների Դաշնակցության հետ եղավ, սակայն այն շատ կարճ տևեց, ըստ Ա. Կիտուրի՝ դաշնակցականների մեղքով, որոնք ձգտում էին միանձնյա ղեկավարության: Բացի այդ՝ հեղինակի կարծիքով, Դաշնակցությունը գտնում էր, որ «սոցիալիզմ» բառով կխրտնեցնեն փարիզյան դեպքերից վախեցած եվրոպական տերություններին, որոնց միջամտության հետ էր հիմնականում կապվում Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցը: - Թեև նույն միջամտության հույսով են գործել նաև հնչակյանները, չնայած որ «Հնչակում» հանդես էին եկել հետևյալ ճիշտ եզրակացությամբ. «Ինչպիսիք էլ լինեն հայոց յեղափոխական

[1] Տե՛ս նույն տեղում., էջ 43: Սակայն իրականում նրանց միավորման հիմնական խոչնդոտը եղավ և հետագայում միշտ մնաց ազատագրական պայքարում առաջինը, ղեկավարը լինելու անհագ մղումը, փառասիրությունն ու չիրականացած հաղթանակի փառքի դափնիները վայելելու անզուսպ մղումը:

ձգտումները, լինեն սոցիալիստական, լինեն նացիոնալիստական, լինեն դրանից էլ նեղ ու սահմանափակ, եթե Եւրոպայի շահերը թելադրեն նրան՝ համակրել կամ օգնել հայերին, նա կը համակրէ ու կ'օգնե: Նա հայկական շարժման վերաբերութեամբ այնպիսի ընթացք եւ դիրք կ'ունենայ, որպիսիք պահանջում են իր շահերը, կատարելապէս անտէս առնելով հայոց յեղափոխական ձգտումների առաւել կամ նուազ ծայրայեղ լինելը»[1]:

Հիմնախնդրի մասին այսպիսի իրատեսական պատկերացում հայտնելով հանդերձ, հնչակյանները գնում էին այնպիսի քայլերի, որոնց տրամաբանությունը ամենևին կապ չուներ վերոհիշյալ ըմբռնման հետ: Պարզ մի իրողություն, որը սակայն Ա. Կիտուրը չի ընդունում:

Դարձյալ բոլշևիկյան գաղափարական ազդեցությունով պայմանավորված, նա գրում է տողեր, որոնք հնաբույր են և բխում են նրանց սահմանած աշխատավորների հեղափոխական պայքարի դրույթներից. «Թուրք ժողովրդի հանդէպ Հնչակեան կուսակցութիւնը երբեք բացարձակ թշնամանք ու վրեժխնդրութիւն չէ ունեցած և չէ ուզած որ իր մարտական շարքերուն մէջ ազգայնամոլ «վրեժխնդիր ֆիտայիներ գտնուին, այլ ունեցած է ճշմարիտ հայրենասէրներ»[2]: Այնինչ, նրա կարծիքով իրենց կուսակցությանը հակառակ՝ Դաշնակցությունն «ազգայնամոլ», վրեժխնդիր կազմակերպություն էր:

Բայց մի բան է ազգայնական, մեկ ուրիշ՝ ազգայնամոլ լինելը: Դաշնակցությունը նույնպես ընդդեմ թուրքական բռնապետության բոլոր օսմանյան ճնշված ազգերի միասնական պայքա-

---

[1] Տե՛ս «Հնչակ» թերթ, թիվ 8, 1891:
[2] Տե՛ս նույն տեղում., էջ 47:

րի ջատագով և կողմնակից էր: Այնպես, որ այս առումով հնչակյանների և նանց միջև անջրպետ գտնելն արհեստական է:

Ոչ պակաս հետաքրքիր են Հնչակյան կուսակցության ՀՅԴ-ի հետ չմիանալու Ա. Կիտուրի ներկայացրած պատճառաբանությունները. «ա. Ան (ՀՅԴ-ն – Ս.Ս.) չունէր ճշտուած ծրագիր, բ. Անոր մէջ տեղ գտած էին ամէն կարգի, ամէն հասկացողութեան և ամէն գաղափարի անհատներ, առանց ընդհանուր ուղեգծի: գ. Նորակազմ կուսակցութիւնը մերժած էր որդեգրել սոցիալիստական սկզբունքները, թէկուզ որպէս 'հեռաւոր նպատակ»[1]:

Այս տեսակետներն առարկելի են այնքանով, որ եթե խոսքը լիովին հղկված ծրագրի կամ բյուրեղացած գաղափարախոսության է վերաբերվում, ապա՝ Հնչակյան կուսակցությունը նույնպես այդպիսին չուներ:

Երկրորդ. չնայած առկա ծրագրային դրույթներին, հնչակյանները նույնպես չունեին գործողության ընդհանուր և հստակ ուղեգիծ՝ մեկ խոշոր տերությունների միջամտության հույսով տարանջատ ձեռնարկների էին գնում, մեկ համընդհանուր ապստամբություն քարոզում, մեկ այլ դեպքում էլ տեղական բնույթի ելույթներ էին ձեռնարկում:

Երրորդ. Դաշնակցությունը թերևս ավելի իրատես էր, որ այդ ժամանակշրջանում սոցիալիզմի խնդիրը չէր մղում առաջին պլան: Որովհետև ակնհայտ է, որ հենց այդ խնդրի որդեգրման նպատակահարմարության շուրջ ծավալված բանավեճերն էին, որ 1896 թ. ի վերջո հանգեցրին Հնչակյան կուսակցության պառակտմանը:

---

[1] Տե՛ս նույն տեղում., էջ 47:

Այնպես, որ եզրակացությունը մեկն է՝ **երկու կուսակցություններն էլ իրար քննադատում են գրեթե միևնույն սխալների համար:**

Ա. Կիտուրն իր աշխատության մեջ շատ հակասական է ներկայացնում հնչակյանների կազմակերպած ցույցերի հետևանքները: Դա նախ վերաբերվում է Կարինի 1890 թ. հունիսի 18-ի, ապա՝ նույն թվականի հուլիսի 15-ի ցույցերին: Հեղինակը մի կողմից այն ճիշտ կարծիքն է հայտնում, որ դրանք կազմակերպվել են մեծ տերությունների միջամտությանը հասնելու հույսով (որն իրոք այդպես էր), գտնելով, որ այդ առումով հնչակյանները չհասան իրենց նպատակին, մյուս կողմից էլ չի հակադրվում - Խանազատի և Կաֆյանի այն տեսակետին, որ Էրզրումի ցույցից հետո նոր ցույցի կազմակերպումը «կը խանդավառէ զանգուածը ցանկալի օրուան համար»[1]:

Այդ նորը Գում Գափուի ցույցն էր, որն ըստ էության ոչնչի չհանգեցրեց: Դա ավելի շուտ զգացմունքային մի արարք էր, որը չէր կարող հանգեցնել որևէ միջամտության, ինչը ակամա հաստատում է հենց ինքը՝Ա. Կիտուրը. «Հնչակեան այս զգայացունց և անօրինակ ցոյցին լուրը արագութեամբ կը տարածուի քաղաքին մէջ: Տոնական ընդունելութեան ատեն («Գուրպան Պայրամի» օրն էր) պետական բոլոր շրջանակներու խոսակցութեան նիւթը այդ կ'ըլլայ, բայց ոչ ավելին»[2]:

Ճշմարտությունն այն է, որ ցույցի հետևանքը եղավ այն, որ շատ հայեր ձերբակալվեցին, դատվեցին, աքսորվեցին, սպանվեցին և մահափորձ կատարվեց Աշըգյան պատրիարքի նկատմամբ:

---

[1] Տե'ս նույն տեղում., էջ 53:
[2] Տե'ս նույն տեղում., էջ 59:

Ընդհանուր առմամբ, այդ ցույցի վերաբերյալ **Ա. Կիտուրը** հետևյալ տեսակետն է արտահայտում. «Գում Գափուի ցույցին մասնակցող պոլսեցիները և գաւառացիները իրենց մորթին վրա զգացին սուլթանիզմի զուլումը: Պոլսէն աքսորուելով՝ գաւառները տարածուող «կասկածելիները»լաւագոյն տարածիչները դարձան Հնչակեան յեղափոխական և սոցիալիստական սերմերուն: Որքա՞ն հալածում, այնքա՞ն տարածում:

Գում Գափուի ցույցին սուլթանիզմը զգաց հայուն տառապանքէն ծնած զայրոյթը և հայ յեղափոխական-մարտական ոյժին տինամիզմը, այսինքն Հնչակեան բռունցքին ոյժը և կազմակերպութեան հզօրութիւնը:

Սուլթանի մայրաքաղաքին մէջ բռնութեան դէմ ծառացող Հնչակեանութիւնը ավելի գործ տեսաւ, քան թէ Խրիմեաններու, Մինաս Չերազներու ռազմահարիւր ճառերը և բազմահատոր աղերսագրերը:

Սուլթանին կը մնար անքուն գիշերներ անցկացնել այնուհետև...»[1]:

Ա. Կիտուրի հետ դժվար է համաձայնվել հետևյալ պատճառներով.

Առաջին. սուլթանիզմի զուլումը գավառցիները մինչև այդ ցույցն էլ էին տեսել ու զգացել, իսկ պոլսեցիները մինչ այդ այնքան էլ հաճախ չէին զգացել կամ, գոնե, ականատես չէին եղել նման վայրագությունների:

Երկրորդ. բուն Արևմտյան Հայաստանում հնչակյանները հատուկենտ վայրերում գաղափարական աշխատանքներ տարան, որոշ տեղերում (Սասուն, Զեյթուն և այլն) ընդունելի եղան

---

[1] Տե՛ս նույն տեղում., էջ 62:

նրանց միայն պայքարի գաղափարները և ոչ՝ սոցիալիզմի: Թշվառ ու անուսում գյուղացին ինչ կարող էր հասկանալ սոցիալիզմից:

Երրորդ. արդյունքի առումով Գում Գափուի ցույցն անտեղի է համեմատել Խրիմյանի և Չերազի ճառերի հետ, որովհետև վերջիններս պայքարի գաղափարախոսներ էին և գնահատելի են այդ տեսանկյունից: Իսկ Գում Գափուի ցույցը եվրոպական միջամտության հույսով ընդվզում էր, սակայն այդ միջամտությունը տեղի չունեցավ: Հետո էլ կասկածից դուրս է, որ խրիմյանների գաղափարախոսությունը մեծապես ազդել է ու հայ ազատագրական պայքարն ավելի արդյունավետ հուն է մղել:

Ա. Կիտուրը այս աշխատությունում մի բաժին էլ նվիրել է Ավ. Նազարբեկյանի նամակներին: Լուսաբանելով դրանք, նա փորձում է տպավորություն ստեղծել հեղափոխական պայքարի նրա ըմբռնումների և կազմակերպչական ջանքերի մասին: Չնկատելով կամ չուզենալով նկատել, որ այդ նամակներում միշտ հնչող զինվելու անհրաժեշտությանն գաղափարը, ընդհանուր նախապատրաստության հրահանգներն ու հորդորները, սոցիալիզմի ճշմարտացիության հիմնավորումը, գործնական առումով, գրեթե ոչնչի չհանգեցրին, եթե չհաշվենք Զեյթունի 1895-96 թթ. ապստամբությունը: Հստակ է, որ դրանք բխում էին հնչակյան ծրագրային դրույթներից, բայց որոնք այդպես էլ չիրականացան:

Աշխատության ամենահետաքրքրականը, թերևս, «Ներքին գաւառներու կազմակերպութիւնը» վերնագրված բաժինն է, որտեղ ներկայացված են հնչակյան առանձին գործիչների ծավալած կազմակերպչական աշխատանքները: Դրանք վերաբերում են թե՛ Կովկասին, թե՛ Արևմտահայաստանին և թե՛ Թուրքիայի հայաշատ տարբեր շրջաններին: Ներկայացվում են նշանավոր

հնչակյաններ Ռաֆայել Մովսիսյանի, Սիմոն Նադիրյանի, Գաբրիել Կաֆյանի, Լևոնի (Բարսեղ Զաքարյան), Ժիրայրի, Մինաս Օղլուի, Չելլոների, Գալուստ Արխանյանի և այլոց գործունեությունը:

Ա. Կիտուրը ներկայացնում է և՛ գաղափարական գործիչներին և՛ հայդուկներին: Սակայն, նրա մանրամասն անդրադարձներին տեսական ընդհանրացումներ գրեթե չեն հետևում: Մասնավորապես հեղինակի համար հայդուկների գործունեության հերոսականությունը կասկածից զերծ է: Բայց, թե դա ինչի հանգեցրեց համայն արևմտահայության շահերի տեսանկյունից, Ա. Կիտուրն այդ մասին լռում է:

Փաստորեն, այս աշխատությունից ընթերցողը տեղեկություններ է ստանում հնչակյան առանձին գործիչների սխրալների մասին, որոնք, սակայն ի վերջո, ավարտվում են պարտությամբ և անձնուրաց հայդուկների եղերական վախճանով:

Ա. Կիտուրի աշխատության այս բաժնից այն ճիշտ տպավորությունն ես ստանում, որ ա) հնչակյան հայդուկները ինքնաբուխ ինքնապաշտպանության կազմակերպիչներ էին տակավին կուսակցական դառնալուց էլ առաջ: Բայց դրանից հետո էլ նրանք շարունակում են գործել տարանջատ, անմիասնական, ինչպես նախկինում էր: Բ. կազմակերպչական աշխատանքներ ծավալած հնչակյան գործիչները հիշյալ հայդուկներին (Չելլոներ, Դանիել Զավուշ, Մինաս Օղլու և այլն) գրավելով իրենց շարքերը՝ նոր ուղղվածություն չեն հաղորդում նրանց գործունեությանը. նրանք ամենևին չփոխվեցին, այլ միշտ էլ մնացին հայդուկ հերոսներ: Պատմությունը փաստում է, որ հնչակյան գործիչներն ավելի շատ գաղափարական աշխատանքներ են տարել, քան զինման, որի արդյուքում էլ արդեն 1890-ական թթ. կեսերին

շատ հայդուկներ կողմնորոշվեցին դեպի Դաշնակցությունը, որի արևմտահայության զինման աշխատանքներն ավելի ակնառու էին:

Ա. Կիտուրը մանրամասնորեն շարադրում է Սասունի 1894թ. ապստամբության պատմությունը և այդ առիթով հայտնում հետևյալ տեսակետը՝ «Սասունի ապստամբութիւնն ունեցավ բախտորոշ հետևանքներ: «Մայիսյան բարենորոգումները» անոր պտուղն են»[1]:

Ընդունենք մի պահ, որ իսկապես Սասնո ապըստամբությունը և դրան հետևած ջարդերն առաջ բերեին մեծ տերությունների միաջամտությունը և դրանց արդյունքում Թուրքիան պարտադրված ընդուներ Մայիսյան բարենորոգումները: Սակայն եթե դրանք իսկապես իրականանային, ապա այդ դեպքում կարելի էր խոսել բախտորոշ հետևանքների մասին: Իսկ իրականությունն այն է, որ ապստամբությանը հետևեցին առաջին զանգվածային ջարդերը, որոնք հայությունից խլեցին հազարավոր կյանքեր: Պատմական արդարությունը պահանջում է շեշտել, որ Սասունի 1894թ. ապստամբության հիմնական հետևանքը 15 հազ. հայերի կոտորածն էր[2]: Սա անհերքելի ճշմարտություն է: Ապստամբությունն իրականում այն թյուր համոզմունքի հետեվանքն էր, որ դրանով հնարավոր էր հասնել մեծ տերությունների իրական միջամտության: Բայց 19-րդ դ. վերջի և 20-րդ դ. սկզբի պատմության զարգացման տրամաբանությունը ցույց է տալիս,

---

[1] Տե՛ս նույն տեղում., էջ 135:

[2] Մեզ համար միանգամայն հասկանալի և ընդունելի են «բարոյական հաղթանակ» և «բարոյահոգեբանական և քարոզչական նշանակություն» հասկացությունները, սակայն այդ չափի կորուստների հաշվին, մեղմ ասած՝ այնքան էլ ըմբռնելի չեն:

որ ամեն անգամ, **երբ մեծ տերությունները միջամտում էին, դրան հետևում էին հայոց ջարդերը**:

Նույն՝մեծ տերությունների միջամտության հույսով էր պայմանավորված 1895 թ. Բաբը Ալիի ցույցը[1] ևս, ինչը չի ժխտում նաև Ա. Կիտուրը. «Թուրք կառաւարությիւնը մայիսեան ծրագրի վավերացումը և անոր գործադրումը քննութեան պատրուակին տակ, դարձեալ կը ձգձգէր: Որքան կ՚ուշանար, հայութիւնը աւելի անհամբեր կը դառնար: Երբ այլեւս հրամանագրին գործադրութիւնը դարձաւ գրեթէ անյուսալի, Հնչակեան կուսակցութիւնը անհրաժեշտ նկատեց նոր և մեծ ցոյցով մը զայն յիշեցնել թէ Սուլթանին և թէ՝ օտար պետութեանց»[2]:

Զարմանալի է, բայց փաստ, որ Ա. Կիտուրն այս ցույցի համար նպաստավոր էր համարում Իզմիրյանի պատրիարք ընտրվելու իրողությունը: Կարծես թե վերջինս Թուրքիայի նա սուլթան էր ընտրվել և արևմտահայության ապագան նրա ձեռքում էր:

Ակամա հարց է առաջանում՝ երբ Սասնո աղետալի դեպքերը չհանգեցրին այդ միջամտությանը, ի՞նչ կարող էր անել նոր ցույցը: Բայց հնչակյանները, որոնք նման ձեռնակներում հաճախ մեղադրում են այլ քաղաքական ուժերին, առաջնորդվում են նույն մարտավարությամբ: Ցույցը կազմակերպվում է, բայց ինչ է տալիս այն: Ա. Կիտուրը դրա հետևանքների մասին գրում է.

1. «Հնչակեան կուսակցութեան կազմակերպած այս վիթխարի ցոյցը՝ լայն անրձագանք կը գտնէ միջազգային մամուլի ու քաղաքական աշխարհի մէջ: Եւրոպական մամուլը, հաղորդելէ

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1456, ց. 1, գ. 7, թ. 2: Ցավելուած «Հնչակի», թիվ 16, 1895:
[2] Տե՛ս նույն տեղում., էջ 153:

թէ ցոյցին մանրամասնութիւնները, ընդարձակ խորհրդածութիւններ և մեկնաբանութիւններ կընէ»[1]:

2. «Սուլթան Համիտ հարկադրուած կ'ըլլար Պապը Ալիի ցոյցէն հազիւ քանի մը շաբաթ ետք և անոր հետեւանքով ստորագրել բարենորոգումներու ծրագիրը»[2]:

Իսկապես, 1895 թ. հոկտեմբերին Սուլթանը ստորագրում է բարենորոգումների հրամանը: Բայց, դրանից շատ չանցած բարենորոգիչ Շաքիր փաշան դրանք իրականացնում է հայոց նոր ջարդեր կազմակերպելու տեսքով[3]:

Բավական հետաքրքիր է Ա. Կիտուրի աշխատության զարգացման տրամաբանությունը: Ըստ նրա՝ հնչակյան յուրաքանչյուր գործողությանը հաջորդում է մյուսը, որովհետև Թուրքիան չի կատարում Եվրոպայի առաջարկած բարեփոխումները: Բաբը Ալիի նրա արժևորած ցույցը դարձյալ հարկ եղած արդյունքը չի տալիս, որի պատճառով կազմակերպվում է Զեյթունի 1895 թ. ապստամբությունը. «Նենգամտութեան համաշխարհային ախոյեան՝ Ապտիլ Համիտ՝ ոչ միայն կ'արհամարհէր, այլ կը թքներ «Եվրոպական Արդարութիւն» կոչուած օրինագրքին վրայ.

Ան կը մնար խուլ և համր որեւէ ձայնի հանդէպ, որուն մէջ լսուէր «հայուն» անունը: Իսկ Եվրոպան ամչնալու երես չունէր»[4]:

Իսկապես, Բաբը Ալիի ցույցի հետևանքով կատարված բոլոր առաջարկները անգործադրելի մնացին. «...Զեյթուն կ'եռար՝ իր ձայնը միացնելու համար Գում Գաբուի, Պապը Ալիի, Սասնո, Սե-

---

[1] Տե՛ս նույն տեղում., էջ 157:
[2] Տե՛ս նույն տեղում., էջ 160:
[3] Տե՛ս Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Լօս Անճէլըս, 1952, էջ 123:
[4] Տե՛ս նույն տեղում., էջ 162:

բաստիոյ, Մարզուանի և այլ ապստամբական ցոյցերուն ու շարժումներուն, բայց աւա~ղ»[1]:

Այսպիսով, փաստորեն Ա. Կիտուրն էլ ընդունում է, որ հնչակյանների նախորդ ձեռնարկները դրական ոչնչի չեն հանգեցնում՝ոչ սուլթանի քաղաքականության մեղմացման, ոչ էլ Եվրոպայի միջամտությանն հասնելու տեսանկյունից: Այդ պատճառով էլ ծրագրվում է Զեյթունի ապստամբությունը:

Հեղինակը միանգամայն ճիշտ է, երբ գրում է. «Զէյթունի ապստամբութիւնը չէր նմաներ Փոքր Հայքի կամ միւս շրջաններու շարժումներուն» և «Զէյթունի ապստամբութիւնը պէտք է ըլլար զանգուածային: Բոլոր գիւղերը ոտքի պիտի ելէին՝ զէնքն ի ձեռին՝ դուրս պիտի վռտնեին բռնակալներին, մինչեւ վերջնական յաղթանակ»[2]:

Զեյթունի ապստամբության հաղթական ավարտ ունենալու հավանականությունը պայմանավորված էր երկու կարևոր պատճառներով՝

ա) որ այն ուներ համաժողովրդական բնույթ,

բ) որ Զեյթունի բնակչությունը համեմատաբար զինված էր և տեղի հայ ղեկավարները (Նազարեթ Չաուշ և ուրիշներ) հնչակյաններ Մլեհի, Աղասու, Մարալի ու մյուսների հետ համախորհուրդ էին գնում ապստամբության:

Ա. Կիտուրի նկարագրությունից պարզ է դառնում, որ **միայն ընդհանուր ապստամբությունն էր Եվրոպական միջամտության հասնելու գրավականը** և դա պարզ երևաց Զեյթունի օրինակով: 1896 թ. հունվարի 11-ին ռուսական, ֆրանսիական, ավստրիական, անգլիական, իտալական և գերմանական փոխհ-

---

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում., էջ 167:

յուպատոսների միջամտությամբ թուրքերի հետ կնքվում է համաձայնագիր, որով փաստորեն վավերացվում է զեյթունցիների հաղթանակը: Համաձայնագրի կարևոր կետերից էին՝Զեյթունի համար պետք է հաստատվեր քրիստոնյա կառավարիչ (Եվրոպայից), թուրքական բանակը պետք է հեռանար Զեյթունից, ոստիկանները, հարկայինները և կառավարական պաշտոնյաները պետք է ընտրվեին զեյթունցիներից և այլն:

Ճիշտ է, այս ամենի արդյունքում Զեյթունը համեմատաբար զերծ մնաց զանգվածային ջարդերից, սակայն եվրոպական պետությունները այս անգամ էլ դրժեցին իրենց խոստումը. «Սակայն, գրում է Ա. Կիտուրը,-եւրոպական պետութիւնները, քաղաքագիտական և շահադիտական նկատառումներով, դրժեցին իրենց խոստումը և երեսնիվար թողուցին թէ՝ համաձայնագիրը և թէ՝ իրենց յանձնառութիւնները»[1]:

Այս բոլորով հանդերձ մեծ տերությունների միջամտության հույսով ձեռնարկները դեռևս դուրս չեկան օրակարգից:

Հեղինակի կողմից Վասնում մինչև 1897թ. հնչակյանների գործունեության ներկայացումը նույնպես այն համոզումն է ծնում, որ հայ ազատամարտի հաղթանակի գրավականը միասնականության մեջ էր: Դա հատկապես երևում է Վանի 1896թ. հունիսյան ինքնապաշտպանական կռիվներին (պատմության մեջ այն հայտնի է «Վանի Մեծ դեպք» անունով) երեք կուսակցությունների համատեղ մասնակցության հեղինակի նկարագրությունից: Արմենականների առաջնորդ Մ. Ավետիսյան-Թերլեմեզյանի գլխավորությամբ, հնչակյան Մարտիկի և դաշնակցական Պետոյի համատեղ ղեկավարությամբ ու ժողովրդի միակա-

---

[1] Տե՛ս նույն տեղում., էջ 192:

մությամբ ընթացող այդ ազատամարտը փաստորեն ավարտվեց հաղթանակով: Այլ խնդիր է, որ խմբերը Պարսկաստան նահանջի ճանապարհին թուրքական նենգադավ պահվածքի արդյունքում եղերական վախճան են ունենում: Բայց անժխտելի փաստ է, որ նրանք իրենց նահատակությամբ Վանի հայությանը փրկում են անխուսափելի ջարդերից

Ա. Կիտուրը ներկայացնում է նաև հնչակյան գործիչների գործունեությունը Սալմաստում, որը հիմնականում ղեկավարում էր Փարամազը, և ողջ Պարսկաստանում (Ռ. Մովսիսյան, Ալեքսան Տեր-Վարդանյան, Հակոբ Ղազարյան, Ասո (Տիգրան Օտյան) և այլն: Թեև հեղինակը բացահայտ չի խոստովանում, բայց շարադրանքից պարզ է դառնում, որ այդ գործունեությունն այնքան էլ արդյունավետ չէր, քանի որ մի շարք այլ պատճառներից բացի, դա պայմանավորված էր նաև այն կարևոր հանգամանքով, որ Պարսկաստանում ուժեղ էին դաշնակցականները:

Հեղինակը թերագնահատում է Խանասորի արշավանքը, նա այն կարծիքն է հայտնում, որ խմբի նպատակը՝ ոչնչացնել - Մազրիկ ցեղը, փաստորեն չի իրականանում: Ավելին, արշավանքից հետո պարսկական իշխանություններն սկսում են հալածել հայ հեղափոխականներին:

Առհասարակ, ինչպես այդ հանդիպում է նաև արմենական հեղինակների մոտ[1], Դաշնակցությունը Ա. Կիտուրի կողմից հաճախ է քննադատվում իր որդեգրած մարտավարության համար, երբ գործնականում ինքն էլ գրեթե համանման մարտավարութ-

---

[1] Տես Եկարեան Ա., Յուշեր Արմենակ Եկարեանի, Պէյրութ, 1985, Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն. Բ տպագրութիւն, Ե., 2003 և այլն:

յամբ էր առաջնորդվում (խմբերով զենքերի ներմուծումներ, ցույցեր, ահաբեկչություններ, մասնակի կռիվներ և այլն):

Ա. Կիտուրը մի փոքրիկ գլխով ներկայացնում է նաև Կովկասի հնչակյան կազմակերպության վիճակը մինչև 1897 թվականը: Հեղինակի հավաստմամբ Թիֆլիսի, Բաթումի, Բաքվի մասնաճյուղերը հիմնադրել է Խանազատը: Մյուս կարևոր դերակատարներից էին Երվանդ Պալյանը (Բալախանի), Սաղաթել Գևորգյանը և ուրիշներ: Ա. Կիտուրն այն կարծիքն է հայտնում, որ Կովկասում կուսակցության գլխավոր նպատակն էր կամավորական խմբեր կազմել և Պարսկաստանի վրայով առաքել Արևմտյան - Հայաստան:

Ընդգծենք, որ տրամաբանված և մեծամասամբ ընդունելի են Ա. Կիտուրի հայության նկատմամբ ցարիզմի դիրքորոշումների գնահատականները: Հատկապես տրամաբանական է նրա հետևյալ հայեցակարգային մոտեցումը. «Ցարիզմը կարող չէր անկեղծօրեն համակրիլ «թրքահայ գաւառներու բարենորոգումներուն», որովհետեւ եթէ Թրքահայաստանը բարենորոգուէր, ռուսահայը ո՛չ միայն դժգոհ պիտի մնար իր վիճակէն, այլ ինքն ալ պիտի ուզէր բարենորոգուիլ, այն ալ ռուս յեղափոխականներուն օգնելով և կամ Թրքահայաստանին միանալով»[1]:

Ոչ պակաս տրամաբանական է նաև նրա հետևյալ տեսակետը. «Որքա՜ն շատ ու շուտ ճզմուէր հայուն գլուխը Թուրքիոյ մէջ՝ այնքան շատ և շուտ հայեր կ՚ապաստանէին Ռուսաստան և կը ձուլէին ռուս ամենակուլ մշակոյթի մէջ»[2]:

Հեղինակը թերևս ճիշտ է ըմբռնել նաև Անգլիայի վարած երկդիմի ու մշտապես դեպի «անգլիական թագի ադա-

---

[1] Տե՛ս նույն տեղում., էջ 254:
[2] Տե՛ս նույն տեղում., էջ 256:

մանդ»Հնդկաստան տանող ճանապարհների համար մտահոգ քաղաքականության իմաստը: Վերջինս, ըստ նրա՝ «երբեք չէր կրնար քարտեսին վրայ տեսնել ազատ և անկախ Հայաստան մը, որ շատ դիւրութեամբ, ճամբայ պիտի տար ռուսական հզօր բանակին, իջնելու Պարսից և Ալեքսանտրէթի տաք ջուրերը, թեւերը տարածելով մինչեւ Տարտանել, Պոլիս, պուլկարներու «Ցարիգրատ»-ը»[1] հետևապես և վտանգեր անգլիական երթևեկը դեպի Հնդկաստան:

Այս ամենից հետո ակամա ծնվում է այն հարցը, որ եթե հեղինակն ըմբռնում էր մեծ տերությունների վարած նենգադավ այս քաղաքականությունը, այդ դեպքում ինչպես է դրվատանքով արտահայտվում այդ տերությունների հույսով կազմակերպված ձեռնարկների մասին: Ակնհայտ հակասություն է, որն, ի դեպ, հանդիպում է տվյալ ժամանակաշրջանին անդրադարձող շատ հեղինակների մոտ:

Ա. Կիտուրը փորձում է պատմաբանի անաչառ դիրքերից քննել հնչակյանների պառակտման խնդիրը: Բայց միշտ չէ, որ նրա բոլոր եզրակացությունները ճիշտ են: Ակնհայտ ճշմարտություն է, որ այդ կուսակցությունը պառակտվեց սոցիալիզմի գաղափարախոսությունը որդեգրած լինելու պատճառով: Դա ըմբռնում է նաև Ա. Կիտուրը: Միևնույն ժամանակ, սակայն, նա հայտնում է այն տեսակետը, թե դա պայմանավորված էր նաև հայ դրամատերերի (հիմնականում Եգիպտոսում գտնվող Պողոս Նուբար, Ասպրո, Յաղուբ, Արթին փաշաների) ունեցած դերով, ինչն այնքան էլ տրամաբանական չէ: Ճշմարիտ է, վերջիններին խորթ էր սոցիալիզմի վարդապետությունը, բայց չէ՞որ նրանք հնչակյան-

[1] Տե՛ս նույն տեղում., էջ 255:

ներին սատարում էին նախ նրա համար, որ այդ կուսակցության գործունեության մեջ առաջնահերթությունը տրված էր Արևմտյան Հայաստանի ազատագրմանը և քիչ էին հետաքրքրված դավանաբանական վեճերով:

Ա. Կիտուրը հանդես է գալիս որպես Նազարբեկի, Մարոյի, Խանազատի և մյուս սոցիալիստների կողմնակից և մեղադրում է հիմնականում արևմտահայ հնչակյաններին, որոնք պառակտեցին կուսակցությունը: Բայց իրականությունն այն է, որ այդ մարդիկ ոչ մի կապ չունեին դրամատերերի հետ (Ա. Արփիարյան, Մ. Տամատյան, Աղասի, Ապահ, Հրաչյա Մարալ և այլն) և իրենց ամբողջովին նվիրել էին արևմտահայ դատին:

Ա. Կիտուրը մանրամասնորեն անդրադառնում է 1896 թ. սեպտեմբերի 28-ին Լոնդոնում տեղի ունեցած խորհրդաժողովին և Վերակազմյալ հնչակյանների ձևավորման գործընթացին: Նրա այս խնդրի վերաբերյալ ներկայացրած մանրամասներն այն տպավորությունն են ստեղծում, որ պառակտումից հետո այդ կուսակցությունն իրեն դժվարանում է վերագտնել: Ներքին տարաձայնությունները շարունակաբար խորանում էին և քայքայում կուսակցությունը: Շատերը նույնիսկ արտաքսվում են կուսակցությունից, բայց դրությունը դրանից չի բարելավվում: Ի վերջո՝1903 թ. սեպտեմբերին տեղի ունեցած կուսակցության 4-րդ - պատգամավորական ժողովն ընտրում է կենտրոնի նոր անդամներ, որոնց թվում էին Նազարբեկը և Խանազատը, որը հսկայական ջանքերի գնով փորձում է վերականգնել կուսակցության երբեմնի ազդեցությունը: Սակայն դա նրանց այնքան էլ չի հաջողվում, որովհետև կուսակցությունն աստիճանաբար կորցնում է իր ազդեցիկ դերակատարությունը հայ ազատամարտում: Ավելին, շուտով նորաստեղծ Վերակազմյալները նույնպես պառակտվում

են, որի արդյունքում փոշիանում են նաև վերջիններիս այդ ուղղությամբ թափած ջանքերը:

Հետաքրքիր է նաև աշխատությունն Իթթիհատի և Հնչակյան կուսակցության հարաբերություններին նվիրված բաժինը: Ըստ հեղինակի՝ իթթիհատականներից և հատկապես Ահմեդ Ռիզայի կողմից համագործակցության առաջարկները գալիս են Գում - Գափուի ցույցից հետո: Երկու կուսակցությունների միջև ընթանում են բանակցություններ, որոնք բավականին երկար են տևում: Դրանց ընթացքում, հնչակյաններն առաջ են քաշում «Ինքնավար Հայաստանի»հարցը, որը սակայն իթթիհատականները մերժում են և դրանով էլ համագործակցությունը նրանց միջև ավարտվում է[1]:

1907թ. դեկտեմբերին Փարիզում կայացած «Օսմանյան կայսրության ընդդիմադիր տարրերի կոնգրեսի» (որը նախաձեռնել էր Դաշնակցությունը) պատմությանն անդրադառնալով, Ա. Կիտուրը գտնում է, որ ՀՅԴ-ն կուլ գնաց իթթիհատի քաղաքական նուրբ սադրանքներին[2]: Դրանից ելնելով էլ երիտթուրքերի հետ դաշինքի համար անթաքույց կերպով նա մեղադրում է - Դաշնակցությանը: Ընգծենք, որ անկախ այն հանգամանքից, թե ինչ ավարտ ունեցավ այդ դաշինքը, այն ծնունդ էր առել տվյալ իրավիճակում ժողովրդի փրկությանը բոլոր հնարավոր միջոցներով ծառայելու մղումներից: Եվ հետո եթե ընդունենք, որ «Ինքնավար Հայաստանի»հնչակյան պահանջն ավելի ճիշտ էր, ապա, միևնույն է, այն երբեք չէր իրականանա: Միակ ելքը մնում էր Թուրքիայի աստիճանական բարեփոխման ուղին, որն էլ այդ պահին ընտրեց Դաշնակցությունը:

---

[1] Տե՛ս նույն տեղում., էջ 313-314:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 314:

Ամփոփելով նշենք, որ սրանք են այն հիմնական տեսակետներն ու հայեցակարգերը, որոնք հայտնել է Ա. Կիտուրը 1885-1908 թթ. հայ ազգային-ազատագրական պայքարի վերաբերյալ: Ինչպես հատուկ է կուսակցական պատմագրությանը, Ա. Կիտուրի մոտ ևս, գերագանահատված են սեփական կուսակցության՝ հնչակյանների իրականացրած շատ գործողություններ, քննադատված են, մասնավորապես Դաշնակցության նմանօրինակ արարքները և, դժբախտաբար, ի մի չեն բերված այդ կուսակցության գործունեության ընդհանուր արդյունքները և դրանք համայն հայության շահերից ելնելով չեն գնահատված: Ավելացնենք, որ Ա. Կիտուրի գործը շահեկան է նաև որպես սկզբնաղբյուր, քանզի պարունակում է կուսակցական բազմաթիվ ժողովների արձանագրություններ և որոշումներ:

19-րդ դարի վերջի, 20-րդ դարի սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարում Հնչակյան կուսակցության գործիչների դերի բացահայտմանն է նվիրված նաև **Ա. Կիտուրի** մեկ այլ աշխատություն[1], որն ընդգրկում է Փոքր Հայքի և Կիլիկիայի հնչակյան հերոսների հայդուկային խմբերի (Ժիրայրի, Չելլոների և - Դանիել վարդապետի) հերոսական գործողությունների պատմությունը: Դրա վերլուծությունը նպատակահարմար չենք համարում, քանզի այն նկարագրական բնույթ ունի և եթե հանդիպում էլ են որոշ հայեցակարգային մոտեցումներ, ապա դրանք նախորդ գրքում եղածի կրկնություններն են:

---

[1] Տե՛ս Կիտուր Ա., Հայ ազատագրության ճանապարհին, Պէյրութ, 1949:

Իր բնույթով քննական-վերլուծական գործ կարելի է համարել **Ս. Սապահ-Գյուլյանի**[1] «Պատասխանատուները» աշխա-

---

[1] Ստեփանոս Սապահ-Գյուլեանը (Տեր-Դանիելյան. 1861. Նախիջեվան գավառի Ճահուկ գյուղ-1928,Նյու-Յորք) Հնչակյան կուսակցության երկրորդ սերնդի նշանավոր անդամներից է. հասարակական-քաղաքական գործիչ, մամուլի երկարամյա երախտավոր. հրապարակախոս: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: 1887թ. քաղաքական անհնազանդության համար դատապարտվել է ութ տարվա բանտարկության: Ընկերների օգնությամբ փախել է բանտից և անցել Սալմաստ. Վան, Բաղեշ. ապա դասավանդել էլ Մուշի. այնուհետև «Պետրոս Կյուրեղյան» կեղծանունով մեկնելով Երուսաղեմ, տեղի վարժարանում: Բարձրագույն կրթություն է ստացել Փարիզում: Ակտիվ կերպով թղթակցել է «Նոր դար» թերթին: Լոնդոնում. ծանոթացել է հնչակյան կենտրոնի անդամների հետ: Եղել է Բուլղարիայի Ռուսչուկ քաղաքաքի հայկական դպրոցի տնօրենը: Տարբեր տարիների ընթացքում խմբագրել է «Հնչակ», «Երիտասարդ Հայաստան». «Նոր աշխարհ» թերթերը: Պողոս Նուբարի հետ զբաղվել է Հայկական հարցի լուծմամբ, պատրանքներ է ունեցել արևմտյան տերությունների անկեղծության և օգնության վերաբերյալ, բայց հիասթափվել է: Հնչակյան կուսակցության նշանավոր տեսաբանը զարգացրել է սոցիալիզմի վերաբերյալ «իր» տեսությունը և մշտապես հավատարիմ մնացել այդ գաղափարներին: Մեծաքանակ աշխատություններում և մամուլում սփռված բազմաթիվ հոդվածներում մշտապես անդրադարձել է հայ ազատագրական շարժման պատմությանը. քննարկել մեր

տությունը[1]: Այն գրվել է հիմնականում մեկ նպատակով՝ ապացուցելու, որ բացառությամբ հնչակյանները, ովքեր էին պատասխանատու հայոց ազգային-ազատագրական պայքարը հաղթանակով չավարտելու համար: Գնահատելի է, որ նա փորձում է բացահայտել հայերի գործած սխալները, թերացումներն ու բացթողումները[2]: Սակայն, ընդունելի չէ, որ մեղադրելով հայ մտավորական, ազգային, քաղաքական և այլ ղեկավար բոլոր ուժերին, նա ճիգ ու եռանդ չի խնայում արդարացնելու Հնչակյան կուսակցությանը, նրա գործունեությունը ներկայացնելով անսխալ կամ՝ գրեթե անսխալ: Հեղինակը միանգամայն իրավացի է, երբ գրում է. «Մեր մեջն էլ, մեր կողմիցն էլ, ուրեմն, պատասխա-

---

կուսակցությունների բացթողումներն ու սխալները, ի ցույց դրել երիտթուրքերի շովինիստական ու հայատյաց բաղաքականությունը. դատապարտել Մեծ եղեռնի հանցավորներին: Տե՛ս Հ. Պողոսյան. Փոքր Հայքի հիշատակներ. Չիկագո, 1917 և Բառերի և եզրերի բացատրություն. Բոստոն, 1917: Բերուզ Սապահ-Գիլեան, Կենսագրութիին Ստ. Սապահ-Գիլեանի. Նյու Յորք 1936:

Հայոց եղեռնի ցանկացած պատճառաբանություն, որն իր մեջ պարունակում է անգամ որևէ շեղում այն բացարձակ ճշմարիտ տեսակետից, որ հայերի ցեղասպանությունը թուրքերի կողմից պետականորեն նախապես ծրագրված և ամենավայրի միջոցներով իրականացված քաղաքականություն էր՝ Հայկական հարցը մեկընդմիշտ լուծելու նպատակով, չենք ընդունում:

[1] Տե՛ս Սապահ-Գյուլյան Ս., Պատասխանատուները, Փրովիդենս, 1916: Ավելացնենք նաև, որ Ս. Սապահ-Գյուլյանի մյուս ուսումնասիրությունները՝ Երիտասարդ Հայաստան, Փարիզ. 1908, Ինքնավար Հայաստան. Թիֆլիս, 1915, Փոքր Հայքի յիշատակները, Չիկագո. 1917 և թերթերում սփռված նրա հոդվածները, նպատակահարմար չենք համարում քննարկել, քանզի վերլուծվող այս աշխատությունը ստեղծվել է վերը թվարկվածների հիման վրա:

[2] Հեղինակն ընկնելով չափազանցությունների գիրկը և լավ չպատկերացնելով իրերի իսկական դրությունը, հայ քաղաքական ղեկավարությանը, կուսակցություններին, մտավորականությանը, մեծահարուստներին և այլ ուժերի ու կառույցների մեղադրում է ոչ ավել ոչ պակաս... հայկական ջարդերի համար:

նատուներ կան: Խոսում ենք նրանցից միայն մի քանի տեսակների մասին, ոչ ամենքի»[1]: Բայց արդյունքում խոսում է բոլորի մասին, բացի հնչակյաններից: Քննադատում է բոլորին, որոնք չլսեցին վերջիններիս ճշմարիտ ձայնը: Սապահ-Գյուլյանի կարծիքով, եթե եղան բթամիտներ, քաղաքական ամենափոքր հոտառությունից զուրկ անհատներ և դասակարգային շերտավորումների ու խմբերի շահերի արտահայտիչներ, որոնք անկարող գտնվեցին իրենց բանականության օրենքների գործունեությամբ գիտակցելու, ճանաչելու, վերլուծելու և հասկանալու Իթթիհատ կուսակցության, երիտթուրքերի էությունը և միայն հետագայում իրենց աչքերը բացեցին, երբ թշնամին արդեն անցել էր Ռուբիկոնը և իր մահասփյուռ գործն էր կատարում: Հեղինակը հրապարակախոսական հարց է հնչեցնում. «...ասպա ինչո՞ւ նրանք, այդպիսիները՝ ժամանակին, դեռ շա՜տ առաջները, իրենց ականջները խցեցին, աչքերը փակեցին, չը լսեցին, չը տեսան. աչքի առաջ չունեցան Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան անկեղծ, անկաշառ, անվերապահ, է՛ն յանդուգն, է՛ն անվեհեր ձայնը, նրա բոցավառ խոսքը, արձակած ճիչը»[2]: Այն դեպքում, երբ կուսակցության պատասխանատու մարմինները, մամուլը, մեծ ու փոքր գործիչներն ամեն տեղ, ուր Հայկական ՊԴատի համար բաբախող սիրտ կար, ուր ազգային, ժողովրդական ազատագրության թրթիռ գոյություն ուներ, դեռ շատ երկար ժամանակներից ի վեր աւում, գոռում, փաստում, աղաղակում, բացատրում էին՝ «թէ ո՞վ է, ինչ է, ի՞նչ նպատակների, քաղաքական որպիսի փիլիսոփա-

---

[1] Տե՛ս Սապահ-Գյուլյան Ս., Պատասխանատուները, Փրովիտէնս, 1916, էջ 13

[2] Տե՛ս նույն տեղում., էջ 13:

յութեան, պետական ինչպիսի տեսութիւնների է հետապնդում «Իթթիհատը»[1]:

Սապահ-Գյուլյանի այս զգայական զեղումները, սակայն, այնքան էլ համոզիչ չեն հնչում: Եվ դա այն պարզ պատճառով, որ նախ՝ երբ խոսք է գնում «Հայկական Դատի» համար բաբախող սրտերի մասին, դա նշանակում է, որ ինչ քայլեր որ ձեռնարկել են ազգային-ազատագրական պայքարի ղեկավարներն ու մասնակիցները, ձեռնարկել են հանուն այդ դատի արդարացի լուծման, իսկ եթե չեն կանխատեսել դրանց բացասական հետևանքները, ապա՝ դա բնորոշ է եղել ազատագրական պայքարի ելած բոլոր նվիրյալներին, այդ թվում և իրենց՝ հնչակյաններին: Երկրորդ, իրոք հնչակյանները չմասցնակցեցին օսմանյան ընդդիմադիր տարրերի Բ կոնգրեսին (1907 թ. Փարիզ), բայց դա չի նշանակում, որ նրանք դեմ էին երիտթուրքերի հետ համագործակցությանը: Նրանք առաջինն էին հայ քաղաքական կազմակերպություններից, որ դեռեւս 1891-1892թթ. բանակցում էին «Միություն եւ Յառաջադիմություն»կազմակերպության հիմնադիր Ահմեդ Ռիզայի հետ: Փաստ, որի մասին գրում է հենց ինքը՝ Սապահ-Գյուլյանը: Այնպես որ, համագործակցության ձգտել են ոչ միայն հայ հոգևոր, մտավորական և քաղաքական մյուս ուժերը, այլ՝ նաև հնչակյանները: Ավելին, Սահմանադրության շրջանում նրանք համագործակցում էին «Հուրիեթ վե իթիլյաֆ» կազմակերպության հետ և ոչ մեկը չի կարող երաշխավորել, որ եթե վերջինները գային իշխանության, ապա անպայման կիրականացվեր «Ինքնավար Հայաստանի» հնչակյան ծրագիրը: Ակն-

[1] Տե՛ս նույն տեղում:

հայտ և ցավալի իրողությունն այն է, որ Արևմտյան Հայաստանի վերաբերյալ ծրագրված որևէ մոդել չիրականացավ:

Սապահ-Գյուլյանն անդրադառնալով Ահմեդ Ռիզայի գործունեության հիմնական ուղղություններին, գրում է. «Սկզբում, ուրեմն, «Մեշվերէթը» շեշտած կերպով հակահայկական գույն չունէր, ուզում էր հայերին բաժանել, Տաճկահայ եւ Ռուսահայի խնդիր յարուցանել, ձեռքի տակից՝ կասկած ներշնչել դէպի Հայ յեղափոխականները եւ նրանց արտադրած գործերը, ժողովրդական շարժումները: Իր նախընտրական նիւթերն էին՝ «Կարգ եւ - Յառաջադիմութիւն», «Սահմանադրութիւն», «Ամբողջականութիւն», «Օսմանցիութիւն», «Ոչ միջամտութիւն»:

Մեր յարաբերութիւնները, առանց ծանր ընդհանրումների, շարունակում էին բարի դրացիութեան, լայնախոհ հակառակորդութեան հողի վրայ՝ գէթ մեր կողմից»[1]: Ընդգծվածից պարզ է դառնում, որ հնչակյաններն Ահմեդ Ռիզայի հետ ձգտել են բարիդրացիական հարաբերությունների այն պատճառաբանությամբ, որ «Մեշվերեթը»շեշտուած կերպով հակա-հայկական գույն չուներ»: Բայց արդյո՞ք, երբ դաշնակցականները բանակցում էին երիտթուրքերի հետ, վերջիններս հակահայկական գույն ունեին: Անշուշտ, ոչ: Ուրեմն, հեղինակի կողմից հայ ազգային-ազատագրական պայքարը ղեկավարող ուժերին և հատկապես Դաշնակցությանը ջարդերի համար «պատասխանատու»համարելը, չի հիմնավորվում:

Շարունակելով թեման՝ Սապահ-Գյուլյանը գրում է. «Ս. Դ. Հնչակեանութիւնը ցոյց տուեց, ապացուցեց, որ մեր իսկական, անվերծանելի թշնամին 'Իտտիհատն'ն էր, եւ նրա գլխին էր, որ

[1] Տե՛ս նույն տեղում., էջ 138-139:

պէտք էր զարկել, հարուածել, առանց խնայելու, առանց սպասելու՝ առաջին վայրկենից իսկ թոյլ չը տալու, որ նա զարգանար, ուռճանար եւ իր ցանցերով պատէր երկրի չորս կողմերը, իր դիրքը ամրապնդէր, երբ յետոյ՝ այլեւս ո՛ւշ, շա՛տ ուշ, շա՛տ դժուար կը լինէր նրան գլորել, տապալել, ոտքի տակ առնել, տրորել»[1]:

Բայց, արդյոք հայերի ուժերն ու միջոցները ներում էին, որ արգելք դառնային Իթթիհատի հետագա զարգացմանը և ծավալմանը: Անշուշտ, ոչ: Դա դյուրին խնդիր չէր: Բայց, չպետք է մոռանալ նաև, որ հայ քաղաքական ղեկավարների, այդ թվում և հնչակյանների պայքարի նպատակը նախ և առաջ Աբդուլ Համիդի ռեժիմի եթե ոչ տապալումը, ապա գոնե՝ բարեփոխումն էր: Իսկ սա ենթադրում էր համիդյան ռեժիմին ընդդիմադիր բոլոր ուժերի՝ այդ թվում և թուրքերի հետ, համագործակցություն: Եվ այդ համագործակցության անհրաժեշտությունը գիտակցել ու չեն անտեսել նաև հնչակյանները: Այլ հարց է, որ 1908թ. սահմանադրության հռչակումից հետո, Հ.Յ. Դաշնակցությունն ընտրելով ոչ լավագույն ուղին, ամբողջովին նվիրվեց կայսերական հայրենիքի վերաշինության և վերաձևության գործին՝ անհեռատեսորեն աչքաթող անելով ու դրանով իսկ ակամա վնաս հասցնելով արևմտահայության ինքնապաշտպանության կազմակերպման գործին:

Քանի որ մեր նպատակը 1885-1908 թթ. հայ ազգային-ազատագրական պայքարի վերաբերյալ հնչակյանների տեսաբաններից՝ Սապահ-Գյուլյանի քաղաքական մտքի գնահատումն է՝ ուստի ավելորդ ենք համարում ավելի խորամուխ լինել նրա երիտթուրքերի հետ ՀՅԴ և այլ ուժերի համագործակցության միակող-

---

[1] Տե՛ս նույն տեղում., էջ 14:

մանի քննադատականներում: Թեպետ հանգամանքն ակնհայտ է, որ երիտթուրքերին այդ համագործակցությանը մղեց հայ ազգային-ազատագրական շարժումը: Բայց արդյոք այդ շարժումն ընթացավ ամենաարդյունավետ ուղիով: Կարծում ենք՝ոչ: Ինչպես կուսակցական ցանկացած հուշագիր կամ պատմաբան, Սապահ-Գյուլյանը նույնպես, նկարագրելով հայ ազատամարտի որևէ դրվագ, որ ձեռնարկել էին հնչակյանները, չափազանցված գույներով է նկարագրում դրա դրական հետևանքները, փորձում ավելի խոհեմ ներկայացնել իր կուսակցության մարտավարությունը, այն դեպքում, երբ այն այնքան էլ չի տարբերվել, ասենք, Դաշնակցության մարտավարությունից:

Իր աշխատության մեջ հեղինակն ազատագրական շարժումը ղեկավարող բոլոր ուժերին (Դաշնակցությանը, Կ. Պոլսի Ազգային ժողովին, պատրիարքարանին, մտավորականներին, առևտրականներին և այլն) պատասխանատու է համարում հայոց ջարդերի համար, որովհետև նրանք համագործակցել են երիտթուրքերի հետ: Նա փորձում է ապացուցել, որ այս առումով ամենազգոնն ու հեռատեսը Հնչակյան կուսակցությունն էր:

Քաղաքական համակ միամտություն է բուրում Հնչակյան կուսակցության կազմակերպած գործողություններին (Փոքր-Հայքի 1891-93 թթ. շարժումներ, Բապը Ալիի ցույց, Սասունի 1894 թ. ապստամբություն և այլն) հեղինակի տրված գնահատականներից: «Անգլիական մամուլը կրակ էր ժայթքում, - գրում է նա, - ահագին չափեր էր տուել Հայկական Խնդրին: Դոքտոր Դիլլոնը, «Դէյլի Տելեգրաֆ»ին ուղղած իր հռչակավոր թղթակցութիւններով՝ Սասնո անհաւասար կռիւը դիւցազներգակ ոճով նկարագրել, աշխարհի առաջն էր դրել: Կ. Պոլսի անգլիական դեսպան՝ Սըր Ֆիլիպ Քըրին, Դիլլոնի գրածների տրցակը թեւքի տակ,

Սուլթան Համիդին էր ներկայացրել եւ նրա առաջը փռել այն՝ ինչ որ իր դիւանագիտական ներկայացուցիչները եւ սպասարկութեան մէջ գտնուող դեղին մամուլը, ժխտում էին: Լօնտոնի մէջ բազմազանգուած ժողովներ, հաւաքոյթներ, դասախօսութիւններ էին ունենում: Հրապարակ էին եկած համբաւաւոր գլուխներ, անվիճելի հեղինակութիւն ունեցող անձնաւորություններ»[1]:

Ինչպես, համոզվում ենք, Սապահ-Գյուլյանը շատ էր ոգևորված հնչակյան ձեռնարկների Եվրոպայում ունեցած արձագանքներից: Նա նաև այն կարծիքին է, որ հենց դրանք հանգեցրին մայիսյան բարենորոգումների ծրագրին:

Հետաքրքիր է, որ ըստ նրա՝ «Մեշվերեթի» շուրջ համախմբված գործիչները Ահմեդ Ռիզայի գլխավորությամբ կանչում են իրենց և հորդորում առաջ չքաշել տարանջատման խնդիր, այլ՝ **«աշխատել ներմուծել» ամբողջ Օսմանյան պետության բոլոր ժողովուրդների վրա տարածվող բարենորոգումներ:** Բայց ստանում են մերժում: Իր իսկ՝ Սապահ-Գյուլյանի արտահայտությամբ՝ «հոգեզմայլության քաղցր վայրկյանները» երկար չեն տեւում, քանզի դրանց հետևում են հետապնդումներն ու ջարդերը:

Իսկ ինչո՞ւ: Դժբախտաբար, Սապահ-Գյուլյանն այս հարցին չի պատասխանում: Իսկ պատասխանը միանշանակ պարզ է՝ Եվրոպան հետամուտ էր իր քաղաքական շահերին, իսկ այդ շահերում առկա հակասությունները հնարավորություն չէին ընձեռում նրանց հանուն հայոց բարենորոգումների միասնական ճնշում գործադրել Թուրքիայի վրա: Իսկ սա թեւավորում էր թուր-

---

[1] Տե՛ս նույն տեղում., էջ 140:

քական իշխանություններին և արդյունքում նպաստում ջարդերի քաղաքականությանը:

Սապահ-Գյուլյանը փորձում է արդարացնել հնչակյան տարանջատ ձեռնարկները, բայց նույնը չի անում Դաշնակցության նմանաբնույթ ձեռնարկների վերաբերյալ: «Տեղի ունեցավ,-գրում է նա,-Կ. Պոլսոյ «օսմանյան բանկայի դեպքը»: 26 օգոստոս 1896: Հեռագիրը հասավ Պարիզ: Երեկոյեան թերթերը «Դեպքի'> գլխաւոր գծերը պատմելով՝ ամենաբուռն յարձակումներ գործեցին հայերի դեմ: Եկաւ եւ ահռելի կոտորածի բոթը»[1]:

Այնինչ, օբյեկտիվ լինելու համար, թե՝ Բանկ-Օտոմանի, թե՝ Գում-Գափուի եւ թե՝ Բաբը Ալիի դեպքերին անհրաժեշտ է մոտենալ նույն չափորոշիչներով: Ակնհայտ ճշմարտություն է, որ դրանց հիմնական նպատակը եվրոպական տերությունների միջամտությանը հասնելու ձգտումն էր: Բայց Բանկ-Օտոմանի դեպքի հետ կապված, հետաքրքիր տեսություն է զարգացնում - Սապահ-Գյուլյանը: Նա գտնում է, որ դա բխում էր «Եվրոպայի շահերի խանգարումի» տեսությունից, որով ժամանակին առաջնորդվել են նաև հնչակյանները[2]:

Հարկավ, Բանկ-Օտոմանում (Օսմանյան բանկ) էր պահվում Թուրքիայում ներդրված եվրոպական կապիտալը եւ նրա պայթեցումով խոշոր հարված կհասցվեր այդ երկրների Թուրքիայում ունեցած տնտեսական շահերին: Բայց արդյոք հայ հեղափոխականներն այս դեպքում չէին ըմբռնում, որ նման արարքով ոչ թե իրենց կողմ, այլ՝ իրենց դեմ կտրամադրեին թուրքերին: Իսկ եթե հասկանալով են ձեռնարկել այդ քայլը, ապա՝ գնացել են արկածախնդրության: «Եվրոպական շահերի խանգարումի» տեսութ-

---

[1] Տե՛ս նույն տեղում., էջ 164:
[2] Տե՛ս նույն տեղում., էջ 165:

յան հնչակյան հետագա ըմբռնումների հետ կապված հեղինակը գրում է, թե հնչակյանները դրանով «ուզեցել են հասկացնել, որ - Հայկական Դատը եւ նրա բազուկը ներկայացնող Հայ Յեղափոխականը պիտի գար Հայաստանից եւ Հայ Ազգից քաղաքական այնպիսի նոր գոյացությունները ստեղծելու, որ Եվրոպական պետութիւնները նոյն իսկ իրենց քաղաքական եւ տնտեսական շահերի տեսակէտով՝ աւելի լաւ պիտի համարէին Հայ քաղաքական մարմնի վրայ յենուելու, քան թուրք, որ արդէն մեռնում էր եւ չէր կարողանում ժամանակակից կեանքի բարդ պահանջներին յարմարուելու»[1]:

Տեսականորեն այս խնդիրը միանգամայն ճիշտ էր դրվում, բայց արդյոք գործնականում դրա իրականացնելն այդքան դյուրին էր: Կարծում ենք, որ՝ ոչ: Հայաստանի, որի պատմական տարածքների ժողովրդագրական պատկերը թուրքական իշխանությունների կողմից ամբողջովին այնպես էր փոխվել, որ շերտընմեջ ապրող և հաճախակի վարչական ձևափոխումների ու զանգվածային արտագաղթի հետեւանքով արհեստականորեն «փոքրամասնության» վերածված հայ ժողովրդից «նոր գոյացություն» անհնար էր ստեղծել, այն էլ այնպիսին, որի վրա հենվեր Եվրոպան մեռնող Թուրքիայի փոխարեն: Այն համոզմունքին ենք, որ ստեղծված պայմաններում առավելագույնը, ինչին կարող էր հասնել հայ ազատագրական պայքարը, ազգային քաղաքական ուժերի միասնականությամբ ժողովրդի կարող ուժերի ընդհանուր զինումն ու նախապատրաստումն էր՝ ենթադրվող ստեղծվելիք բարենպաստ պահին վճռական ու հաղթական հարվածով ցանկալի արդյունքի հասնելու համար: Բայց, հակառակ

[1] Տե՛ս նույն տեղում., էջ 165:

դրան՝ մի կողմից տարանջատ պայքարով շարունակաբար ջլատվում էին հայոց սակավաթիվ ուժերը, մյուս կողմից մեծ տերությունների միջև խորացող հակասությունները չէին թողնում որ «մեռնի անբուժելի հիվանդ» Թուրքիան:

Անընդունելի է նաեւ այն, որ հայկական առաջին զանգվածային ջարդերը Սապահ-Գյուլյանը փորձում է պատճառաբանել - Բանկ-Օտոմանի ձեռնարկով, որը, նրա կարծիքով, բացատրվում էր «Եվրոպական շահերի խանգարումի» տեսությամբ: Բայց, հեղինակը մոռանում է, որ նման ջարդերի առիթ հանդիսացավ նաև Բաբը Ալիի ցույցը, որը ծրագրված էր եվրոպական միջամտությանն հասնելու նույն թյուր համոզմունքով: Թե՛ Եվրոպայի շահերին հարվածելու (եթե, իրոք դրանք գոյություն ունեին) և թե՛ նրա միջամտությունը ձեռք բերելու տեսություններով առաջնորդվելը միշտ հանգեցրել են դժբախտ հետևանքների: Սա է պատմական ճշմարտությունը, որն ընդունում է նաեւ Սապահ-Գյուլյանը, բայց ափսոս որ դա անում է միայն Դաշնակցություն կուսակցության կողմից իրականացված գործողությունների մասին խոսելու դեպքում:

Բավականին հետաքրքիր է աշխատության «**Անբարոյական եւ հուսալքման ազդակներ» գլուխը**[1]: Այստեղ Սապահ-Գյուլյանը հայ ազգային-ազատագրական պայքարի ավարտը կամ իր իսկ արտահայտությամբ «Հայ հեղափոխութեան վիժելը» կապում է «Միտհատեան Սահմանադրութեան» երկրորդ կիրառության, այսինքն, 1908թ. Սահմանադրության ընդունման հետ: Թերեւս կարելի է նրա հետ այս հարցում համաձայնել: Բայց, պնդել, որ մինչեւ այդ «Հայ Յեղափոխութիւնը ո՛չ կանգ էր առել

[1] Տե՛ս նույն տեղում., էջ 89-98:

ո՛չ էլ վիժել, այլ իր կատարեալ կենսունակութեան մէջն էր, նա շարունակում էր իր եղանելու, լինելու վիճակը եւ մտել էր մի նոր փուլի մէջ, գործում էր իր ունեցած նորագոյն պայմաններին համեմատ»[1], այնքան էլ ճիշտ չի լինի: Արեւմտահայ ազատագրական պայքարը 20-րդ դարասկզբին, հատկապես Սասունի 1904թ. ինքնապաշտպանությունից հետո աստիճանաբար անկում էր ապրում: Բայց հեղինակը միանգամայն իրավացի է, երբ գրում է. «Եւ մի՞թէ 'միտհատեան Սահմանադրութեան» երկրորդ կիրառութիւնը, որպէս պարզ դիվանագիտական խաղ, հետեւանք չէր Հայ Յեղափոխականութեան բարձրացած ալիքներին եւ դա մի՞թէ պատմական պարզ ճշմարտութիւն չէր, կարո՞ղ էր տարակուսանք վերցնել»[2]:

Իսկապես, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, որ ժամանակի գրականության մեջ հեղափոխություն է անվանվել[3], նպաստեց նաեւ թուրք տարրի մեջ հեղափոխական խմորումների աճին, որոնք ձգտելով սուլթան Համիդի վարչակարգի տապալմանը՝ փորձեցին փրկել Օսմանյան կայսրությունը մասնատումից: Սակայն, ըստ հեղինակի՝ սահմանադրությամբ արբեցողները սա չհասկացան և ամեն առիթով գրում էին, «որ Հայ Յեղափոխութիւնը այլեւս վիժելիի է»[4]:

Թերևս ճիշտ կլիներ գրել, որ ոչ թե «վիժել է», այլ՝ ավարտվել է: Քանզի առաջինը նշանակում է ձախողվել: Բայց սուլթանի տապալումը, դեպքերը ժամանակի մեջ գնահատելու դեպքում,

---

[1] Տե՛ս նույն տեղում., էջ 89:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Մեր նախորդ աշխատություններում այս հարցը բազմիցս պարզաբանել ենք: Ավելորդ կրկնություններից խուսափելու նկատառումով այստեղ հիմնախնդրին չենք անդրադառնում:
[4] Տե՛ս նույն տեղում., էջ 90:

պետք է համարել հաղթանակ, որով. փաստորեն, հայ հեղափոխությունն ավարտվեց: Այլ հարց է, որ հետագայում երիտթուրքերը երկդիմի և կեղծավոր խաղացողներ դուրս եկան:

Սապահ-Գյուլյանը մեծ ցավ ապրելով և ափսոսանքով գրում է, որ 1908-ից հետո «Այլեւս ոչ Հայ ազգ կա՛ր, ոչ Հայաստան: Հայ ազգը օսմանեան ազգութեան մի տարրն էր դարձել, Հայաստանն էլ լոկ աշխարհագրական արտահայտութիւն՝ անցեալից մնացած»[1]:

Բայց արդյո՞ք մինչև սահմանադրությունը «Հայաստան» հասկացությունը կար Թուրքիայում: Եթե բացառենք հատուկենտ հայալեզու հրատարակություններում հանդիպող հիմնականում որպես պատմական տերմին, ապա՝ ոչ: Իսկ հայ ազգը ոչ թե օսմանյան ազգության մի տարրն էր դարձել, այլ «Օսմանյան հայրենիքի մասը» և ձգտում էր հասնել նրա վերափոխմանը և ժողովրդավարացմանը: Եվ եթե չհասավ հաջողության, դա միայն Դաշնակցության և մյուս քաղաքական ուժերի մեղքը չէր: Չէ՞ որ կյանքի չկոչվեց նաև հետսահմանադրության շրջանում հնչակյանների որդեգրած ինքնավար Հայաստանի ծրագիրը:

Ս. Սապահ-Գյուլյանի աշխատության գաղափարները և տեսական ընդհանրացումներն ի մի բերելով, անհրաժեշտ ենք գտնում շեշտել, որ.

1. Նրա հիմնական նպատակն է ապացուցել, որ հայկական ջարդերի համար առիթներ տալու պատասխանատվությունը կրում են հայ քաղաքական, հոգևոր, մտավորական ղեկավար բոլոր ուժերը, բացի հնչակյաններից:

---

[1] Տե՛ս նույն տեղում:

2. Հեղինակը հայ ազգային-ազատագրական պայքարի միևնույն նպատակով կազմակերպված դրվագները դրական է գնահատում, եթե դրանք կազմակերպել են հնչակյանները, իսկ եթե նույն՝ եվրոպական միջամտության հույսով, դրանք կազմակերպել են այլ քաղաքական ուժեր և հատկապես՝ դաշնակցականները, խստորեն քննադատում է:

3. Մեղադրում է Դաշնակցությանը երիտթուրքերի հետ համագործակցելու համար, այն դեպքում, երբ առաջիններից մեկն իր կուսակցությունն է ձեռնարկել համագործակցության նմանատիպ փորձեր, ասենք՝ Իթիլաֆի հետ:

Եվ վերջապես, Հնչակյան կուսակցության գործունեության անսխալականությունն ապացուցելու նրա ձգտումներն ամենևին չեն հիմնավորվում: Մի բան ակնհայտ է, որ եթե այդ կուսակցությունն իսկապես գործում էր արևմտահայության շահերին համահունչ և բոլոր հարցերում իսկապես անթերի էր, ապա՝ այդքան արագորեն չէր պառակտվի և արդեն 1890-ական թթ. երկրորդ կեսից և չէր զրկվի հայ ազատամարտի առաջատարի իր դերից: Կարծում ենք, սա տրամաբանական փաստարկ է, որով ամեն ինչ ասված է:

Ավելացնենք նաև, որ Ս. Սապահ-Գյուլյանի մյուս ուսումնասիրությունները նպատակահարմար չենք համարում քննարկել, քանզի վերլուծած այս աշխատությունն ստեղծված է մեր հիշատակած նախորդների հիման վրա և իր մեջ հիմնականում ներառում է նրանցում արտահայտած տեսակետները: Թերևս կարելի է առանձնացնել Հնչակյան կուսակցության Ամերիկայի շրջանի օրգան «Երիտասարդ Հայաստանի» թերթի (որի խմբագիրն էր 1903-1907 թթ.), էջերում տպագրված մի քանի խմբագրականնե-

ռում[1]: Նախ դրանցում մեծ տեղ էր հատկացվում արևմտահայերի ծանր կացությանը: Այսպես, «Եվրոպան և հայերը» հոդվածում Սապահ-Գյուլյանը նկարագրում է արևմտահայերի ծանր կացությունը: Նա գրում է, որ Վանում, Մուշում, Սասունում և այլուր տեղի ունեցող կոտորածների, թալանի և բռնությունների վերաբերյալ հայ գործիչները բազմիցս ներկայացրել են ցարերին և եվրոպական բարձրաստիճան պաշտոնյաներին՝ իրենց «խնդրածի չափավորութիւնը, օրինաչափութիւնը» հիմնավորելով պատմական և բազմաթիվ այլ պատճառներով: Իսկ եվրոպացի պետական այրերը կարեկցում են, հայ հարուստը «իր բաժին լուման է բերում խեղճերին կարեկցութիւնից մղուած», և դրանով համարում են իրենց պարտականությունը կատարած, սակայն գործնական քայլեր չեն և «եվրոպական անտարբեր ժայռը այսպես տեղից չէ շարժվում և աղերսող հային օգնութեան չի հասնում»[2]: Հեղինակը գրեթե նույն տեսակետն է զարգացնում նաև «Արտաքին միջամտություն»[3], «Մեծ պետութիւնների համախմբումը»[4], «Արեւելեան խնդրի շուրջը»[5], «Եփրատի հովտում»[6], «Արեւլեան խնդրի շուրջը»[7], «Մակեդոնիա և Հայաստան»[8] հոդ-

---

[1] Դրանց անդրադարձել և բավականին սթափ ու իրատեսական գնահատականներ է ներկայացրել Գ. Հովհաննիսյանը «Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի խնդիրները ամերիկյան «Երիտասարդ Հայաստան» պարբերականում» (1903-1907 թթ.) հոդվածում, տե՛ս Հայագիտական հարցեր, թիվ 3(18), էջ 119-133:

[2] «Երիտասարդ Հայաստան» թերթ, թիվ 1, 1903:

[3] Տես նույն տեղում, թիվ 32, 1906: Ի դեպ, նույն թեզը նոր գույներով ներկայացնում է նաև հնչակյան մեկ այլ տեսաբան Վարագդատը «Մինչև ե՞րբ» հրապարակման մեջ, թիվ 16 1907:

[4] Նույն տեղում, թիվ 4, 1903:

[5] Նույն տեղում, թիվ 5, 1905:

[6] Նույն տեղում, թիվ 6, 1903:

[7] Նույն տեղում, թիվ 3, 1903:

[8] Նույն տեղում, թիվ 17, 1903:

լուծներում: Իսկ մեկ այլ՝ «Երեկուայ դասը» առաջնորդողում Սապպահ-Գյուլյանը գտնում է, որ հայ ժողովրդի ազատագրության համար ազդակ է լինելու արտաքին միջամտությունը, երբ Օսմանյան կայսրությունը կներքաշվի պատերազմի մեջ որևէ եվրոպական երկրի կամ երկրների դեմ: Նա իրավացիորեն գտնում է, որ ցույցերով և առանձին զինված ելույթներով Հայկական հարցը չի կարող լուծվել և եզրակացնում է, որ դա կարելի է անել միայն համաժողովրդական ապստամբության միջոցով[1]:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի խնդիրների շարքում Սապպահ-Գյուլյանը մեծ ուշադրություն է դարձնում այդ պայքարի ղեկավարությունը ստանձնած կուսակցությունների դերին, որն արծարծվում է նրա «Կուսակցական խնդիրներ» հոդվածաշարում[2]: Նա գտնում է, որ կուսակցությունները պետք է առաջնորդվեն որոշակի ծրագրով, որտեղ պետք է բացատրվեն նրանց ղեկավար սկզբունքները, նպատակները և իրականացման միջոցները: Նա իրավացիորեն նշում է, որ ծրագրային պահանջները բխում են կյանքից, և քանի որ այն շարունակաբար փոխվում է, հետևաբար կուսակցության ծրագրերը ևս - պետք է դառնան «այդ յարափոփոխ կեանքի արտայայտիչը և չպետք է դատապարտուեն անշարժութեան»[3]:

Սապպահ-Գյուլյանը դատապարտում է հայ ազգային կուսակցությունների շարքում տեղ գտած անհանդուրժողականությունը, կույր ատելությունն ու կուսակցական նեղմտությունը, «հակառակորդ» հռչակված կուսակցությանը ամեն կերպ հարվածելը, նրա յուրաքանչյուր ձեռնարկը «դաւադրական և վնասակար» համա-

---

[1] Նույն տեղում, թիվ 24, 1905:
[2] Նույն տեղում, թիվ 3, 5, 10, 12, 28, 1903, թիվ 3, 18, 1907 և այլն:
[3] (1905, թիվ 21):

ռելը: Սրանք նա որակում է «նեղկուսակցականի, աղանդաւորի հոգեկան պահանջներ», որոնք գործունեության նպատակ դարձնելով՝ կուսակցությունները շեղվում են իրենց գլխավոր առաքելությունից, վարկաբեկում ու մեծ վնաս պատճառում համընդհանուր ազգային գործին[1]: Այս ճիշտ մոտեցումներով հանդերձ հարկ է նշել այն կարևոր հանգամանքը, որ «Երիտասարդ Հայաստանը» և մասնավորապես Սապահ-Գյուլյանը չեն կարողացել ձերբազատվել իրենց իսկ մատնանշած թերություններից:

Իրատեսական դատողություններին զուգընթաց Սապահ-Գյուլյանը, սակայն, միակողմանի և սխալ եզրակացությունն է հանգում՝ նշելով, որ հայ ազգային կուսակցությունները ձևավորվել են դասակարգային պայքարի գաղափարի շուրջ: Իրականում արմենականներն ու դաշնակցությունը ձևավորվել են ոչ դասակարգային պայքարի գաղափարախոսության հենքով: Իսկ ինչ վերաբերում է հնչակյաններին, ապա հայ իրականության մեջ լինելով առաջին սոցիալիստական կուսակցությանը, այնուամենայնիվ չենք կարող պնդել, թե այն ձևավորվել է միմիայն այդ գաղափարախոսության հիման վրա, քանի որ կուսակցության մոտակա ծրագիրը նախատեսում էր հայ ժողովրդի ազատագրումը թուրքական տիրապետությունից, այն է՝ հայ ազգային բոլոր կուսակցությունները ձևավորվել էին ոչ թե դասակարգային պայքարի, այլ ազգային ազատագրության խնդրի շուրջ[2]: Պարբերականի բազմաթիվ հոդվածներում ուժեղ քննադատության են ենթարկվում այլ կուսակցությունները, հատկապես վերակազմյալ հնչակյաններն ու դաշնակցականները: Սակայն այդ

---

[1] (1903, թիվ 1):

[2] (1907, թիվ 4)

քննադատությունները շատ դեպքերում սուբյեկտիվ բնույթ են կրում: Նկատելի է դրանց միտումնավորությունը և բարձրացված խնդիրների նկատմամբ նեղկուսակցական մոտեցումը: Ընդհանուր առմամբ Սապահ-Գյուլյանի «Երիտասարդ Հայաստանի» էջերում ամրապնդվում է այն գաղափարը, որ ազատությունից զրկված հայ ժողովուրդը «առանց սուրի եւ արիւնի» երբեք չի կարող հասնել իր բաղձանքին: 1908 թ. տեղի ունեցած երիտթուրքական հեղաշրջումը նոր քաղաքական իրավիճակ ստեղծեց և - նոր խնդիրներ առաջադրեց հայ ազգային կուսակցություններին:

Բավականին ծանրակշիռ աշխատություն[1] է հեղինակել Հնչակյան կուսակցության երկարամյա անդամ **Հրանդ Գանգրունին**[2]: Ուսումնասիրությունը կարևոր ներդրում է 19-րդ դարի վեր-

---

[1] Տե՛ս Գանգրունի Հ., Հայ յեղափոխութիւնը Օսմանյան բռնատիրութեան դէմ (1890-1910), Պէյրութ-Լիբանան, 1983:

[2] **Հրանդ Գանգրունին (Գրիշիքյան Աբիսողոմ**, 1925, Դամասկոս), սովորել է Բեյրութի Սահակյան վարժարանում, 1943 թ. ավարտել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության դպրեվանքը (Անթիլիաս), նաև Բեյրութի ֆրանսիական Սեն համալսարանի հայագիտական բաժանմունքում: Զբաղվել է մանկավարժությամբ: 1976-1984 թթ. եղել է Բեյրութի Ռուբինյան ազգային վարժարանի տնօրեն: 1948 թ.-ից կուսակցության «Արարատ» օրաթերթի խմբագրության անդամ:

ջի և 20-րդ դարասկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի պատմագիտության մեջ, որովհետև պարունակում է բավականին հասուն և իր ժամանակի վերաբերյալ լուրջ եզրահանգումներ: Սակայն, ընդգծենք, որ փոքր-ինչ անհասկանալի է այդ ազատագրական պայքարի (ըստ հեղինակի հայ հեղափոխության[1]) պատմության պարբերացումը, հատկապես այդ պայքարի կարևորագույն փուլը 1910 թվականով ավարտելը: Չէ՞ որ միանշանակ պարզ է, որ հայ ազատագրական պայքարի այդ փուլն ավարտվեց 1908թ. երիտթուրքական հեղաշրջումով: Գրքի վերնագրից նաև այն տպավորությունն ես ստանում, թե «հայ յեղափոխութիւնը»սկսվել է 1890 թ.: Այնինչ, իրականում այն սկզբնավորվել է 1880-ական թթ. երկրորդ կեսից, երբ սկսեցին ձևավորվել ազատագրական խմբակները, ինքնաբուխ ծավալվեց ֆիդայական շարժումը և, վերջապես, կազմավորվեցին կուսակցությունները՝ ի դեմս նրանց առաջնեկ Արմենականի[2]: Ակնհայտ է, որ Հ. Գանգրունին, 1890 թվականը ջրբաժան է ընտրել՝ ցանկանալով հայ հեղափոխական շարժումների սկզբնավորումը հնչակյան ձեռնարկներով տեսնել (Հրզրումի, Գամ-Գափուի): -

---

Հնչակյանների քաղաքական դիրքորոշման և Հայկական հարցին են նվիրված Գանգրունու «Հայ հեղափոխությունը օսմանյան բռնատիրության դեմ», «Հայաստան 1918 և հայ քաղաքական միտքը», «Հայաստան 1920-21թթ. և միջազգային դիվանագիտությունը», «ՍԴՀԿ հանուն Հայրենիքի» լայլ աշխատությունները:

[1] Հեղինակը «հեղափոխություն» ասելով հասկանում էր հայ ժո-ղովրդի մղած ազգային-ազատագրական պայքարը: Ի դեպ, այդպես են վարվում նաև ինչպես ժամանակի այնպես էլ մերօրյա սփյուռքահայ ուսումնասիրողների մեծ մասը:

[2] Այս հարցերի առնչությամբ գրվել են մեծ քանակությամբ արժեքավոր ու հիմնարար ուսումնասիրություններ (աշխատությունը չծանրաբեռնելու համար դրանց թվարկումն ավելորդ ենք համարում), որոնցում հիմնախնդիրը մանրամասնորեն ու հանգամանալից պարզաբանված է: Այնպես որ դա վաղուց հայտնի ճշմարտություն է:

Սակայն միանգամայն անհասկանալի է 1910 թ.-ի ընտրությունը, քանզի 1908 թ.-ից հետո մինչև այդ թվականը և դրանից հետո էլ հայ ազատագրական պայքարի շարունակությունը կարծես թե չի էլ նշմարվում: Եթե ազատագրական պայքարի ելակետ համարենք հայ կամավորական շարժումը, ապա այն սկզբնավորվեց 1912 թ. Գ. Նժդեհի և Անդրանիկի վաշտով Բալկանյան պատերազմին մասնակցությամբ և զանգվածային բնույթ կրեց 1914թ. աշնանը, այսինքն՝ դարձյալ ոչ 1910 թվականին: Թեև դա էլ կարելի է վիճարկել, որովհետև, կարծում ենք, որ ազատագրական պայքարը, որին կարող է դիմել որևէ ճնշված ժողովուրդ, ճիշտ չի լինի բացարձակորեն նույնացնել կամավորական շարժման հետ, որն սկսվել ու ծավալվել էր ստեղծված իրավիճակի արդյունքում (անշուշտ, նաև հանուն ազգային նպատակների) իրար դեմ պատերազմող պետություններից մեկի օգտին, մյուսից ազատագրվելու հույսով:

Ընգծենք նաև, որ հեղինակն իր աշխատությունում 1910թ. հաջորդող իրադարձություններին էլ է անդրադառնում, այնպես, որ առավել քան անիմաստ են դառնում վերնագրում նշված 1890-1910 թվականների առանձնացումը որպես հայ հեղափոխության տարիներ:

Այս ամենով հանդերձ, Հ. Գանգրունու աշխատությունը գնահատելի է հետևյալ առումներով. ա) հագեցած է առատ փաստական տվյալներով, բ) արտահայտում է հեղինակի ինքնուրույն եզրակացությունները, որոնք շատ հաճախ միանգամայն ընդունելի են:

Դա հատկապես վերաբերվում է Հայկական Հարցի նկատմամբ մեծ տերությունների վարած քաղաքականությանը նրա անդրադարձներին:

Հ. Գանգրունու աշխատության հիմնական և առավել բնորոշ կողմերն առանձնանում են «Մուտք»անվանված փոքրիկ ներածականում, որտեղ հեղինակը բավականին հետաքրքիր հարցադրումներ է կատարում: Դրանցից ամենակարևորը վերաբերվում է «հայ յեղափոխության» օրինաչափության խնդրին: Առանց կոնկրետ անուններ տալու, քննադատելով բոլոր նրանց, ովքեր հայ հեղափոխական շարժումներով էին պայմանավորում Հայոց Եղեռնը, Գանգրունին հետևյալ հարցն է առաջ քաշում և ինքն էլ փորձում գտնել պատասխանը. «Հայերը կրնայի՞ն չդժգոհել եւ սպասել աւելի լայն օրերուն, զենքի ուժով մարդկային իրենց տարրական իրաւունքները ձեռք ձգել կարենալու համար»[1]: Հ. - Գանգրունու պատասխանն այս հարցին միանգամայն ժխտական է և հետևյալ պատճառներով.

ա) «Կարմիր սուլթանը» ձգտում էր հայկական վեց նահանգներում հայերի թվաքանակը արհեստականորեն նվազեցնել և - վերածել նրանց փոքրամասնության: Այդ նենգ նպատակն իրականացնելու համար հայերի նկատմամբ վարում էր տնտեսական դաժան քաղաքականություն, ենթարկում նրանց բազմատեսակ հալածանքների, որին հետևում էր շարունակական արտագաղթը:

բ) Քրդերին ինքնավարություն էր խոստանում, նրանցից «համիդիե»գնդեր կազմում, բազմաթիվ արտոնություններ շնորհում ու տրամադրում հայերի դեմ:

Հ. Գանգրունին մի հետաքրքիր տեսակետ է առաջ քաշում. «Թուրքերը կորսցնելէ ետք Պալկաններէն ներս իրենց ստրկացուցած հողամասերը, կրնայի±ն հանդուրժել, որ Վեց Նահանգ-

---

[1] Տե՛ս Գանգրունի Հ.. Հայ յեղափոխութիւնը Օսմանյան բռնատիրութեան դէմ (1890-1910), էջ 7:

ներուն մէջ հայերը մեծամասնութիւն կազմած դրութեամբ գոյատեւէին: **Հայերը** եթէ ոչխարամիտ, **ելու կեավուր մնային, կարելի էր սպասել որ անոնք չջարդուէին եւ փոքրամասնութիւն դառնալու վտանգէն հեռու մնային, Սուլթանի կամ Իթթիհատի օրով:**

Բայց չէ՞ որ իսլամ քիւրտերը այդ ճամբան կը հետեւէին եւ Քեմալի պէս «դեմոկրատ»գլուխներն անգամ վճռական պահուն զարկին անոնց...»[1]:

Հարկավ, ցանկացած նվաճված ժողովուրդ՝ տիրապետողի կողմից ենթարկվում է հարստահարման, ձուլման և դանդաղորեն ոչնչացման[2]: Եվ այս դեպքում նրա ազատագրական պայքարն օրինաչափ է: Սրանում Հ. Գանգրունու հետ չի կարելի չհամաձայնել: Բայց թե՛ նա, և թե՛ հայ ազատամարտի պատմությանն անդրադարձած մյուս պատմաբաններն ու հուշագիրները, կատարելով նման ճիշտ հարցադրումներ, քաջություն չեն ունեցել մատնանշելու այդ ազատամարտում հայ քաղաքական առաջնորդների գործած սխալները:

Անցյալի սխալների խուստովանությունը ամենևին չի նշանակում թերագնահատել ազատագրական պայքարի գործիչներին, կասկածի տակ առնել նրանց հայրենասիրությունը: Բայց անհրաժեշտ է չանտեսել, որ ջարդերն Արևմտյան Հայաստանում առաջին անգամ զանգվածային բնույթ կրեցին հատկապես մեր երկու կուսակցությունների (Հնչակյան և Դաշնակցություն) պայքարի թատերաբեմ մտնելու պահից, մանավանդ, այդ պայքարի

---

[1] Տե՛ս Գանգրունի Հ., Հայ յեղափոխութիւնը Օսմանյան բռնատիրութեան դէմ (1890-1910), էջ 9:

[2] Մեր օրերում այս տեսակետը գուցե թե վիճարկելի շատ կողմեր ունի, սակայն խնդրո առարկա ժամանակաշրջանում այն բացարձակ ճշմարտացի էր և բազմաթիվ ժողովուրդների օրինակներով ապացուցված:

այն դրվագների սկզբնավորումով, որոնք իրականացվում էին մեծ տերությունների միջամտության հույսով: Երբեմն այս հարցադրմանն այն պատասխանն է տրվում, թե դրանով նպաստում ենք թուրք պատմագրության՝ ջարդերի հիմնավորման տեսակետների ապացուցմանը: Ամենևին ոչ, այստեղ խնդիրը վերաբերվում է պայքարի այնպիսի միջոցների ընտրությանը, որոնք առիթներ չտային և որոնց չզուգորդվեին զանգվածային ջարդերը: Չափազանց կարևոր է նաև ջարդերի պատճառներից առիթների առանձնացումը, որոնք տալիս էին հայ ազատագրական պայքարի մասնակի դրվագները[1]: Մի բան, որ խոստովանում են նաև ժամանակակցները[2]:

Այնպես որ, անընդհատ կրկնել հինը, թե մենք միշտ իրավացի էինք, թուրքերն էին ոճրագործ, չենք հասնի պատմական դասերի ճիշտ ընկալման: Որ թուրքերն իրոք ոճրագործ էին, դրանում երկրորդ կարծիք լինել չի կարող[3]: Բայց արդյոք ճիշտ էր

---

[1] Այլ առիթներով բազմիցս ընդգծել ենք, որ հայերի կոտորածները Թուրքիայում պետականորեն ծրագրված քաղաքականության արդյունք էին և դա բացարձակապես անվիճարկելի ճշմարտություն է: Այստեղ խոսքը ճիշտ գործելակերպի և թշնամուն ավելորդ առիթներ չտալու մասին է:

[2] Տե՛ս օրինակ՝ Հրայր Դժոխքի նամակները, Դիվան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, Պոսթըն, 1934:

[3] Այդ կապակցությամբ համաշխարհային պատմագիտական և գեղարվեստական գրականության մեջ առկա են բազմաթիվ վկայություններ, որոնց թվարկումը ժամանակի զուր կորուստ կլինի: Բերենք հատկանշական մեկ օրինակ: Ռուս նշանավոր միջազգայնագետ Պյոտր Բոյոգովի Lenta.ru կայքի **«Չարի կայսրություն»** վերնագրով հրապարակումը, որտեղ անդրադառնալով ապրիլին Եգիպտոսում վախճանված Օսմանյան կայսրության թագավորական տան վերջին ներկայացուցիչ Ֆաթմա Նազլիշահ Օսմանօղլուին, (հոդվածը թարգմանաբար տպագրվել է «Ազգ» օրաթերթի 19.04.2012թ. թիվ 71-ում), մասնավորաբար ասվում է. «Օսմանները 14-րդ դարից մինչև 20-րդ դար իրենց նվաճումների թափով և չարագործությունների դաժանությամբ սարսափ էին ներշնչում ողջ

ընտրված այդ ոճրագործին դիմագրավելու, լավագույն դեպքում՝նաև հաղթելու մեր ուղին: Միանշանակ՝ ոչ: Եվ, չնայած գործադրած բուռն ջանքերին, դրա հակառակը չի կարողանում ապացուցել նաև Հ. Գանգրունին: Համոզվելու համար դիմենք հենց իր՝ Հ. Գանգրունու օգնությանը:

Աշխատության Ա՝ «Միջազգային կացութիւնը եւ մեծերու դիրքորոշումները 1890-ական թուականներուն» գլխում հեղինակը բավական ինքնատիպ վերլուծություններ է կատարում 1890-ական թթ. միջազգային կացության վերաբերյալ և հայտնում միանգամայն յուրահատուկ և տարածում գտածին հակառակ հետևյալ տեսակետը՝«Օսմանեան բռնատիրութենէն ազատագրուած պալքանեան ժողովուրդները շատ մօտ չէին զգար ինքզինքին Ռուսիոյ: Անոնք կը խորհէին Գերմանիոյ ապաւինել, իրենց «մնայուն հողային պահանջները»իրագործելու համար» [1]:

Հարկավ, դա այդպես էր, բայց այստեղ չպետք է այն տպավորությունն ստեղծվի, թե Ռուսաստանն ընդհանրապես կողմ էր անկախ Հայաստանի գոյությանը և հատկապես բարենորոգումների ծրագրից առաջ:

Ազատագրված Բալկանյան ժողովուրդները Հ. Գանգրունու կարծիքով չէին ցանկանում Ռուսաստանի ձեռքին «գործիք» դառնալ և» կ'աշխատէին ամէն գնով իրենց գերիշխանութիւնը

քաղաքակիրթ աշխարհին: Այդ չարի կայսրության վերջը ողորմելի էր. օսմանները այլասերվեցին եւ դարձան համաեվրոպական ծաղրանքի առարկա: Եվ եթե չլիներ Քեմալ Աթաթուրքի քաղաքական հանճարը, դժվար թե նրանց հաջողվեր փրկել, պահպանել իրենց նախկին տարածքի գոնե մի մասը, որն այսօր զբաղեցնում է բավականին բարեկեցիկ Թուրքիան»:

[1] Տե՛ս Գանգրունի Հ.. Հայ յեղափոխութիւնը Օսմանյան բռնատիրութեան դէմ (1890-1910). էջ 11:

պահել»[1]: Այստեղ, գերիշխանություն ասելով հեղինակը հասկանում է անկախությունը:

Հ. Գանգրունին անդրադառնալով Անգլիա-Թուրքիա հարաբերություններին, այն տեսակետն է հայտնում, թե Անգլիան, որը ձգտում էր Թուրքիայի բարեփոխմանը, գտնելով, որ նա կարող է «օգտակար հանդիսանալ Հնդկաստանի ճամբու ապահովութեան», աստիճանաբար համոզվում է, որ դա անհնար է, գտնելով, «թէ Պալքանեան ազատագրուած երկրները աւելի արագ զարգանալու ատակ են, ուստի այդ երկրներուն զորացման ի նպաստ դիրքորոշումը կարևոր նկատեց եւ նոյնիսկ Մերձավոր Արևելքի մէջ ազգային պետությունները (արաբ, հայ, քիւրտ) մէջտեղ գալը արգելք մը չնկատեց՝ «Հնդկաստանի ճամբուն»ապահովութեան»[2]:

Հեղինակը հենվելով անգլիական աղբյուրների և դիվանագետների հայտնած տեղեկությունների վրա (Լլոյդ, Բրայս, Բիրս և այլն), քննելով և վերլուծելով դրանք, հանգում է այսպիսի եզրակացության. Անգլիայում թուրքամետ և հակաթուրքական ուժերի միջև սկսած 1870-ական թթ. պայքար էր ծավալվել և 1880 թթ. Գլադստոնի հաղթությամբ իշխանության են գալիս հակաթուրքական ուժերը:

Սակայն, կարծում ենք, որ հեղինակն ամբողջ խորությամբ չի կարողացել ըմբռնել քաղաքական գործընթացների էությունը: Հակառակ դեպքում կհանգեր ամենակարևոր եզրակացությանը՝ թե Անգլիան, թե Ռուսաստանը և թե մյուս պետությունները - Թուրքիայի հետ հարաբերությունները ջերմացնում կամ սառեցնում էին ելնելով բացառապես Թուրքիայի վրա մեկ ուրիշ պե-

---

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում:

տության քաղաքական ազդեցության չափաբաժնից: Թե բալկանյան ժողովուրդների և թե հայերի նկատմամբ «բարյացակամությունը»ի հայտ էր գալիս հատկապես այն ժամանակ, երբ - Թուրքիայի հանդեպ նրանք ունենում էին ինչ-ինչ խնդիրներ:

Ուստի պատահական չէր, որ երբ 1890-ական թթ. Գերմանիայի ազդեցությունը Թուրքիայի վրա շարունակաբար աճում էր, Անգլիան ևս՝ հանձին լորդ Սոլսբերիի, սկսեց ջանադրաբար ճնշում գործադրել Թուրքիայի վրա՝ հօգուտ հայկական բարենորոգումների: Իսկ նրանից ոչնչով ետ չէր մնում նաև Ռուսաստանը:

Այս ամենին Հ. Գանգրունին անդրադառնում է հպանցիկ, ինչն էլ, ցավոք, հնարավորություն չի տալիս հեղինակին ճիշտ եզրակցություններ կատարել: Իսկ այդպիսի հետևությունների հանգելու համար կարող էր նպաստել թեկուզ և այն փաստը, որ 1895թ. մայիսյան բարենորոգումների ծրագիրը, որը սուլթանն ընդունում է հոկտեմբերի 20-ին, այդպես էլ չի իրականանում: Ընդհակառակը՝ դրան հաջորդում են հայերի առաջին զանգվածային ջարդերը: Իսկ ինո±ւ: Որովհետև, սուլթանը համոզված էր, որ այդ ծրագիրը պարտադրող տերությունների միջև առկա հակասություններն արգելք կհանդիսանան Թուրքիայի վրա համատեղ ճնշման համար: Ճշմարտության դեմ չմեղանչելու համար ասենք, որ այդ խնդիրներին անդրադառնալով, Հ. Գանգրունին այսպիսի եզրակացությանը նպաստող մեջբերումներ է անում, սակայն այդպիսի եզրակացություն նրա մոտ չենք տեսնում:

Ա գլխի երկրորդ փոքրիկ ենթագլխում («Մեծ պետութիւնները Թուրքիո հանդեպ»), Գանգրունին այլ հեղինակների տեսակետներ է վերաշարադրում, որից կարելի է եզրակացնել, որ մեծ տերություններից որևէ մեկի՝նեղուցներին տիրանալու ձգտումը,

ի վերջո, ստիպում էր մյուսին դառնալ թուրքանպաստ, իսկ այս դեպքում Հայկական հարցը մղվում էր երկրորդական պլան: Նրանցից որևէ մեկին տվյալ իրավիճակում ավելի ձեռնտու էր դառնում հիվանդ Թուրքիայի գոյության հանդուրժումը, քան թե, օրինակ, Անգլիայի կամ Ռուսաստանի կողմից այդ խիստ կարևոր ռազմավարական նշանակության դիրքերին տիրապետելը:

Սա է 1870-90-ական թթ. Թուրքիայի նկատմամբ մեծ տերությունների հակասական մոտեցման հիմքը, որը Գանգրունին ընթերցողին հասկանալի է դարձնում այլ հեղինակներից հղումներ կատարելով: Հասկանալի է դարձնում, փոխանակ սեփական եզրակացություններ անելու փոխարեն:

Կարծում ենք, որ աշխատության Բ գլխի շարադրանքը շատ խրթին է, չկա պարբերացում: Հեղինակը մեկ անդրադառնում է 19-րդ դարավերջի, մեկ դարասըկզբի, մեկ էլ դարակեսի իրադարձություններին: Ի դեպ, այս գլխի «Հայ Յեղափոխութեան ազատագրական պայքարը»վերնագիրն էլ ճիշտ չի ձևակերպված: Ճիշտ կլիներ վերնագրել «Հայ յեղափոխական պայքարը», կամ էլ՝«Հայ ազատագրական պայքարը»:

Գլխի բավական ծավալուն մաս հատկացված է տարբեր հեղինակներից մեջբերումներին (Վ. Պարսամյան, Վ. Ալազան, Վ. Նորենց, Մ. Մեծարենց, Զ. Գրիգորյան, Մ. Օրմանյան, Ռ. Հովհաննիսյան, Լեո, Հ. Աճառյան և այլն): Ընդ որում նպատակը մեկն է՝ դրանցով ցույց տալ, որ հայ հեղափոխությունը օրինաչափ էր և դատապարտելի է թուրքական այն տեսակետը, թե «Հայկական ջարդերուն պատասխանատուն ո՛չ թէ Սուլթան Համիտն ու երիտասարդ թուրքերն են, այլ՝ հայերը՝ որոնք ըմբոստացան, վրեժխնդրութեան դիմեցին եւ հաւատարիմ չգտնուե-

ցան Օսմանեան հայրենիքի պաշտպանութեան հարցին մէջ, ա-տոր համար ալ ջարդուեցան»[1]:

Դրվատելի է, որ նա մինչև մեջբերումները քննադատում է այն հայ հեղինակներին, որոնք փորձում են ջարդերը պայմանավորել հայ հեղափոխությամբ: Ընդ որում, Գանգրունին այդպիսի հեղինակների (Լեո, Ա. Կարինյան) թեզերը փորձում է չեզոքացնել հակառակ տեսակետն ունեցող հեղինակներից (Հ. Թամրազյան, Հ. Ղազարյան, Վ. Պարսամյան, Ռ. Հովհաննիսյան և այլն) մեջբերումներ կատարելով:

Խուսափելով կրկնվելուց պարզապես մեկ անգամ ևս շեշտենք, որ **հայ ազատագրական շարժումն օրինաչափ էր, բայց նրա մարտավարությունն ուներ լուրջ թերություններ**: Այս ճշմարտությունը չխոստովանելով՝ ոչինչ չենք շահի:

Հ. Գանգրունին, ինչպես հատուկ է գրեթե բոլոր կուսակցական պատմաբաններին, իր կուսակցության մարտավարության մեջ թերություններ նույնիսկ չի էլ որոնում: Բայց, ահա նույն նպատակով կազմակերպված (օրինակ՝ մեծ տերությունների միջամտության հույսով) դաշնակցական շատ ձեռնարկներ քննադատում է:

Հայոց ջարդերի հիմնական պատճառը նա համարում է պանթուրքիզմն ու պանիսլամիզմը, որոնց ճանապարհին գտնվում էին, ըստ նրա՝ հայը, ռուսը և վրացին[2]: Թեպետ վրացու

---

[1] Տե՛ս Գանգրունի Հ., Հայ յեղափոխութիւնը Օսմանյան բռնատիրութեան դէմ (1890-1910), էջ 22:

[2] **Պանթյուրքիզմը** (Համայթյուրքականություն) գաղափարախոսություն է, որի նպատակը բոլոր թյուրքական ժողովուրդների միավորումն է մի պետության մեջ: Ի հայտ եկավ XIX դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունում և տարածված է թյուրքալեզուներով բնակեցված պետություններում: Հիմքը դրանց էթնիկ, մշակութային և լեզվային ընդհանրությունը: Թուրանիզմը Պանթյուրքիզմին սերտորեն կապված,

այդ ճանապարհին գտնվելը տարօրինակ է հնչում, իսկ ռուսի պարագայում, թերևս ավելի ճիշտ կլիներ նշել, որ այդ աշխարհակալ տերությունն արգելք էր այդ ծրագրին, բայց, հայը իսկապես որ այդ ճանապարհի իրականացմանն արգելք էր, անհերքելի ճշմարտություն է:

Գնահատելի է նաև Հ. Գանգրունու այն միտքը, թե «90ական թուականներու մեր պատմութեան ազատագրական շարժումները խորքին **մէջ ոչ մէկ նուաճողական ձգտում կրնային ունենալ**: Փաստորէն՝ հայ յեղափոխութիւնը, դանակը ճիտին իջեցնել փորձող Սուլթան Համիտի բազուկը, վանելու փորձ կատարած է»[1]: Իհարկե, առանց նվաճողական բառի օգտագործման ինքնին պարզ է, որ մեր ազատագրական պայքարի նպատակը մեր պատմական տարածքների նկատմամբ սեփական իրավունքների վերականգնումն էր: Բայց, դրվատելի է, որ Հ. Գանգրունին այս պարզ ճշմարտությունն արտահայտել է թերևս առաջին անգամ:

Հայ ազատամարտի տնտեսական դրդապատճառներից բացի մեզ համար հետաքրքիր է նաև Գանգրունու կողմից դրանցում հետևյալ պատճառների ներառումը. «...սահմանափակ ըլլալով մեր հնարաւորութիւնը, պարտավոր էինք նկատի ունե-

---

բայց ավելի լայն հասկացություն է: **Պանիսլամիզմը** նախապես եղել է վերազգային կրոնաքաղաքական շարժում՝ ուղղված այլակրոն ժողովուրդների դեմ: Հետագայում տրոհվեց, և տարբեր պետություններ սկսեցին օգտագործել այն իրենց քաղաքական նպատակների համար: Ներկայումս պանիսլամիզմի նպատակն է միավորել իսլամական երկրներին՝ ի հակադրություն Արևմուտքի տնտեսական և մշակութային ներխուժման: Բայց իսլամական երկրների ազգային և պետական շահերն ու հակասությունները մեր օրերում ավելի մեծ դեր են խաղում, քան նրանց միավորմանը ձգտող կրոնական գաղափարախոսությունը:

[1] Տե՛ս Գանգրունի Հ., Հայ յեղափոխութիւնը Օսմանյան բռնատիրութեան դէմ (1890-1910), էջ 40:

նալ 6 Մեծ պետութիւններուն մեջամտելու հնարաւորութիւնը, գիտնալով հանդերձ, որ անոնք աւելի շատ տարուած էին իրենց տնտեսական շահերեն, բայց եւ գիտէինք, որ անոնց հակասութիւններէն օգտուիլը կենսական նշանակութիւն կրնար ունենալ մեր պայքարի յաջողութեան համար»[1]: Եվ որ, առավել, քան հետաքրքիր է՝ «Հայ Յեղափոխութիւնը, հայ մասսայի կազմակերպման վրա աւելի շատ յենած էր, բայց մասսան կազմակերպելը՝ տարիներու երկար պայքարի բովէն անցելէ ետք հնարաւոր պիտի դառնար»[2]:

Անժխտելի է, որ մեծ տերությունների հակամարտություն ասելով պետք է հասկանալ տվյալ պահին Թուրքիայի շուրջ առկա հակասությունները, իսկ սա ինքնին ենթադրում էր, որ ելնելով սեփական քաղաքական շահերից, մեծ տերությունները հայ ժողովրդի ազատագրական ձգտումները կարող էին օգտագործել ընդդեմ Թուրքիայի: Բայց, չէ որ, ինչպես Գանգրունին է խոստովանում՝ հայ կռվող տարրի կազմակերպումը դյուրին գործ չէր: Արդյունքում ստացվում է, որ հայ ժողովուրդն առանց լիարժեք կազմակերպված լինելու, ինչ-որ տերության հույսով, պետք է նետվեր պայքարի դաշտ: Բայց չէ՞ որ այդ տերությունը չէր առաջնորդվում հայ ժողովրդին ազատագրելու անկեղծ նպատակով:

Ուրեմն, կարծում ենք, որ եթե Գանգրունու տեսակետը, թե մեծ տերությունների հակասություններից օգտվելն անհրաժեշտ էր, ճիշտ էր, ապա՝ **դրանից օգտվելու մարտավարությունն էր սխալ**: Հայ ազատագրական պայքարի ընթացքը և բալկանյան ժողովուրդների փորձը ցույց տվեցին, որ հակասությունից օգտ-

---

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում:

վել պետք է նշանակեր առանց շտապելու, մանրակրկիտ նախապատրաստվելուց հետո միայն պատերազմի մեջ մտնել Թուրքիայի հետ կռվող որևէ տերության կողմից: Պարզապես չէր կարելի այն թյուր պատրանքն ունենալ, թե մի ցույցով կամ ահաբեկչությամբ կարող ես ձեռք բերել Թուրքիայի հետ հակասության մեջ գտնվող որևէ տերության միջամտությունը: Հատկապես որ ամեն անգամ այդ միջամտությունը լիարժեք չէր լինում և հայությունը մենակ, լիովին անպատրաստ մնում էր Թուրքիայի դեմ դիմաց: Սա, կարծում ենք, հայոց մեծ ողբերգության հիմնական պատճառներից մեկն էր:

Դրվատելի է, որ Հ. Գանգրունին հայոց ջարդերի պատճառների շարքում չի անտեսում «օտար մեծ տերութիւնների տխուր դերը»[1], բայց դրանով արդեն հակասական վիճակ է ստեղծում վերոհիշյալ դրույթի հետ:

Աշխատության նույն գլխում՝ հատկապես հայ ազատագրական պայքարի գնահատման հարցում, Հ. Գանգրունին ինքնակրկնվում է ասելով՝ հայը զոհ էր, թուրքը ջարդարար: Ոչ ոք սրա դեմ ոչինչ չի կարող պնդել: Բայց ինչպես նա, այնպես էլ շատ հեղինակներ լիարժեք չեն կարողանում պատասխանել մեկ հարցի՝ ինչո±ւ: Իսկ եթե փորձում էլ են պատասխանել պանթուրքիզմին գումարում են մեծ տերությունների խաբկանքը և վերջ: Գրեթե ամբողջովին անտեսվում են սեփական սխալները՝ մեր ժողովրդին զրկելով դրանցից սովորելու, դասեր քաղելու և դրանք շտկելու հնարավորությունից:

Հեղինակն անդրադառնում է նաև հայ ազատամարտի խորհրդահայ պատմագրությանը՝ քննադատելով բոլոր նրանց,

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 41:

ովքեր, ըստ իրեն, սխալ դիրքերից են մեկնաբանել այն: Բացի այդ՝ Գանգրունին միանգամայն ճիշտ համարելով հայերի ռուսական կողմնորոշումը, ինքը ևս հանդես է գալիս որպես դրա կողմնակից: Ցավոք, նա բոլորովին չի ուզում նկատել Ռուսաստանի դերը Հայոց Մեծ եղեռնի և Հայաստանի Առաջին Հանրապետության (1918-20 թթ.) անկման գործում:

Մի փոքրիկ ենթագլխով էլ Հ. Գանգրունին ներկայացնում է հայ-քրդական հարաբերությունները: Իրավացիորեն նշելով, որ հայ-քրդական համագործակցությունը չկայացավ և խորամուխ չլինելով պատճառների մեջ, բավարարվում է սոսկ տարբեր հեղինակներից (զոր. Սմբատ, Մալխաս, Ռ. Հովհաննիսյան և այլն) այդ մասին մեջբերումներ կատարելով: Ի վերջո, նա չի տեսնում այն պարզ ճշմարտությունը, որ **քրդերի սեփական շահի խորապես գիտակցումը, տարածքային նկրտումները, հայերի ունեցվածքին տիրանալու անհագ ձգտումը, քաղաքականապես հասուն չլինելու և մի շարք այլ կարևոր հանգամանքներ հայ ազատամարտի ձախողման կարևորագույն պատճառներ էին:**

Աշխատության Գ գլխում հեղինակը դարձյալ կրկնում է ինքն իրեն: Նույնիսկ վերնագիրը («Հայ ազատագրական պայքարի ընթացքը Օսմանյան բռնատիրութեան օրով») գրեթե չի տարբերվում նախորդ գլխի վերնագրից: Նա կրկին անդրադառնում է այդ շարժումների գնահատման հարցին մէջ հայրենի պատմաբանների երկու տարբեր տեսակետներին: Դրանցից առաջինի հեղինակները, նրա կարծիքով Լեոն և Ա. Հովհաննսիյանն են, «որոնք իրենց գրաւոր ելոյթներուն մէջ կ'աշխատին քննադատել հայ յեղափոխութիւնը իր «անիմաստ» խիզախումներուն համար

եւ կամ կ'աշխատին ջարդերու պատասխանատուները մեր Յեղափոխական շարժումները նկատել Թրքահայաստանին մէջ»[1]:

Երկրորդ տեակետի հեղինակները (խորհրդային պատմաբանների կոմունիստական գաղափարախոսության «թունդ» հետևորդների սերունդը), ըստ նրա՝ ֆիդայական շարժումները դիտելով ազատագրական շարժման օրինակներ, «կը ձգտէին այդ շարժումներուն հագցնել միմիայն «գիւղացիական»շապիկ, եւ նկատելով որ, անոնք համընկած են թրքական հայասպանության ծրագրի գործադրության հետ ուրեմն զանոնք կը նկատեն «ձախող և սխալ»[2]:

Կարծես թե Հ. Գանգրունու այս բաժանումները չեն ստացվել: Ստացվում է, որ երկու պատմագիտական մոտեցումների հեղինակներն էլ հայ ազատագրական շարժումները համարել են սխալ և թուրքերի համար ջարդերի առիթներ տվող: Տարբերությունը միայն նրանում է, որ երկրորդ մոտեցման հեղինակները գնահատել են ֆիդայիների «խիզախումները»:

Իրականում խորհրդահայ պատմագիտությունը սկզբում գնում էր այդ պայքարը կուսակցությունների կազմակերպածը համարելով՝ այն ժխտելու, իսկ ֆիդայական շարժումները գնահատելով՝ դրանք կուսակցություններից տարանջատելու ճանապարհով: Այնինչ, հայտնի է, որ ֆիդայական շարժումներն սկզբնավորվել էին կուսակցություններից առաջ և հետո միայն սկսեցին այնուհետև ամբողջովին ղեկավարվել նրանց կողմից:

Հ. Գանգրունին իր առանձնացրած մոտեցումները չկիսելով՝ քննադատում է դրանք՝ դարձյալ նոր փաստերով փորձելով ապացուցել, որ հայ ազատագրական պայքարն օրինաչափ էր և -

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 57:
[2] Տե՛ս նույն տեղում:

պայմանավորված էր արևմտահայության տնտեսական ծանր կացությամբ: Եվ դա հաստատելու համար դարձյալ հայ հեղինակներից կատարում է բազմաթիվ մեջբերումներ՝ ավելորդ ծանրաբեռնելով իր աշխատությունը:

Հայ ազատագրական պայքարը որոշ փուլից հետո կապելով հայ կուսակցությունների հետ հեղինակը չի սխալվում: Ճիշտ է և դրվատելի նաև նրա այն կարծիքը, որ «Արևմտեան Հայաստանի ազատագրական պայքարը տարուեցաւ ո՛չ միասնական ճանապարհով»[1]:

Սակայն, սրանից անմիջապես հետո գրում է. «Ներքին համերաշխութիւնը պակասեցաւ տեղ-տեղ, բայց **յեղափոխական ուժերու միջեւ վճռական վայրկեանին կարելի եղաւ միասնութիւն ստեղծել՝ յանուն մեր ժողովուրդի ընդհանրական մտահոգութիւններու իրականացման:**

Եթէ 1890ի Գում-Գաբուի, 1894ի Սասունի, 1895-6- Պապը-Ալիի, Սոէտիոյ, Շապին Գարահիսարի, Զէյթունի, Տրապիզոնի, - Հայքի, Կեսարիոյ ընդվզումներուն մէջ Հնչակեան կուսակցութիւնը ստիպուեցաւ առանձին մղել ազատագրական պայքարը Օսմանեան բռնատիրութեան դէմ, ապա Վանի Ա և Բ, Շապին - Գարահիսարի, Սասնոյ Բ. ապստամբութեան (1904), Սուէտիոյ, - Հաճընի, Զեյթունի, Սիսի, Ատանայի, Սարդարապատի, Պաքուի կռիվներուն հայ քաղաքական բոլոր հոսանքները միացեալ ճակատ կրցան կազմել եւ դիմադրել թշնամիին»[2]:

Կարծում ենք, որ հեղինակը միմյանց հետ շփոթում է մի քանի կարևոր հանգամանքներ.

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 64:
[2] Տե՛ս նույն տեղում. էջ 64-65:

ա) Դուրս գալով իր աշխատության կանխագծած շրջանակներից, ակնարկում է 1915թ. Վանի, 1918թ. Բաքվի և այլ իրադարձություններ, բայց իրականում դրանք ազգային-ազատագրական կամ, իր արտահայտությամբ՝ «հեղափոխական»պայքար չէին, այլ՝ ինքնապաշտպանական կռիվներ: Իսկ այդ օրհասական կռվում հայ քաղաքական ուժերը միավորվելուց զատ այլ ելք էլ չունեին:

բ) Մեր ընդգծած նախադասությունն այնքան էլ չի համապատասխանում իրականությանը. 19-րդ դ. վերջի և 20-րդ դ. սկզբի (մինչև 1908 թ.) հայ ազգային ազատագրական պայքարում գրեթե ներքին համերաշխություն չի եղել (ի բացառյալ Վանի 1896 և 1915 թթ. կռիվներում), այլ՝ այն ընթացել է տարանջատ, որն էականորեն ազդել է նրա արդյունավետության վրա:

գ) Միասնական ճակատ ստեղծվել է միայն 1918 թ. մայիսյան հերոսամարտի ժամանակ, քանզի հակառակը կնշանակեր հայության վերջը:

Այնուհետև Հ. Գանգրունին առանձնացնում է հայ ազատագրական պայքարի երկու ճակատ՝ ներքին և արտաքին: Առաջինը՝ լրտեսների, մատնիչների, ամիրաների ճակատն էր, որի դեմ պայքարն ըստ էության սկսվել էր դեռևս 1890-ական թթ.-ից, իսկ երկրորդը՝ օտար պետությունների և օսմանյան այլ ժողովուրդների համագործակցման համար պայքարի ճակատը[1]:

Կարծում ենք, որ հեղինակն այս դեպքում էլ ճիշտ չէ: Հայ ազատագրական պայքարի հիմնական ճակատը Թուրքիան էր, որի դեմ պայքարի ընթացքում կարող էին լրտեսներ և մատնիչներ էլ լինել, բայց դրանց դեմ պայքարը որպես առանձին ճա-

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 65-70:

կատ առանձնացնելը տեղին չէ: Նույնը վերաբերում է մեծ տերություններին: Հայ ազատագրական պայքարը երբեք ուղղված չի եղել մեծ տերությունների դեմ: Իսկ նրանց կամ օսմանյան այլազգիների համակրանքի համար թափած ջանքերը չի կարելի որակել որպես պայքարի ճակատ: Այլ հարց է, որ 1903թ. հետո բացվեց հայ ազատագրական պայքարի կովկասյան ճակատը ևս:

Այնուհետև, շեղվելով բուն նյութից, հեղինակը փորձում է վերլուծել Իթթիհատի, մեծ տերությունների և այլ քաղաքական ուժերի հետ հարաբերությունները: Նրա տեսակետների համար հատկանշական է այն, որ Ս. Սապահ-Գյուլյանի և մյուս հնչակյան կուսակցական պատմաբանների նման, երբեք չի մեղադրում հնչակյաններին: Ընդհակառակը, փորձում է ապացուցել, որ հայ ազատագրական պայքարը սոցիալիստական բնույթ ևս ուներ, քանզի թե՛ Թուրքիայում և թե՛ Կովկասում նպատակ ուներ նաև քանդել ավատապետության հիմքերը: Հեղինակը դարձյալ մեղադրում է մեծ տերություններին, բայց այդպես էլ չի կարողանում լիարժեք պատասխանել այն հարցին, թե ի վերջո ինչո՞ւ նրանք զոհաբերեցին Հայկական Հարցը:

Եվ վերջապես, Գանգրունին այն տեսակետն է հայտնում, որ ավելի ճիշտ էր համագործակցել ոչ թե Իթթիհատի այլ՝ Իթիլիաֆի հետ[1]: Բայց արդյո±ք Իթիլիաֆի իշխանության գալու դեպքում արևմտահայերը ձեռք կբերեին թեկուզև ինքնավարություն: Գրեթե անհնարէ, որ որևէ մեկը կարողանա այս հարցին դրական պատասխան տալ:

---

[1] Տե՛ս նույն տեղում. էջ 76:

Հ. Գանգրունու աշխատության «Հայ քաղաքական հոսանքները» գլուխը, որը նվիրված է մեր երեք՝ Արմենական, Հնչակյան և Դաշնակցություն կուսակցություններին, ճիշտ չի վերնագրված: Այն պարզ պատճառով, որ «կուսակցություն» և «գաղափարական հոսանք» հասկացություններն արհեստականորեն նույնացվում են: Այնինչ, հայ իրականության մեջ քաղաքական հոսանքներն արտահայտել են որոշակի սոցիալական խմբերի աշխարհայացքային պատկերացումներն ազգի կացության և նրա զարգացման հեռանկարների նկատմամբ[1]: Ընդգրկում են մարդկանց, որոնք ելնելով իրենց սոցիալական և դասակարգային վիճակից, ունեն սոսկ գաղափարական ընդհանրություններ, իսկ կուսակցություններն ավելի կուռ կառույցներ են, ունեն ռազմավարական նպատակ-ծրագրեր, գաղափարակից անդամներ, հստակ ծրագրային դրույթներ և դրանք կյանքի կոչելու նախանշված մարտավարություն ու գործելակերպ: Իսկ Հ. Գանգրունին «Հայ քաղաքական հոսանքները» վերնագրի ներքո ներկայացնում է կուսակցությունները: Ընդ որում, սխալ տեսակետներ է արտահայտում Արմենական կուսակցության մասին: Տուրք տալով խորհրդային պատմագիտության առաջին շրջանում տարածված սխալ տեսակետին՝ այն համարում է սոսկ կազմակերպություն կամ «պուրժուական հոսանք»[2] և ավելացնում, որ նման կուսակցություն չի եղել և այն իբրև թե 1888-ի վերջերը Մ. Փորթուգալյանի ստեղծած «Հայոց հայրենասերների միության» շուրջ համախմբված մտավորականներն են իրենց համարել արմենա-

---

[1] Տե՛ս Խառատյան Ա., Հայ հասարակական հոսանքները XIX դ. 50-60-ական թվականներին, ՊԲՀ. թիվ1(27). 2006, էջ 272-284:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 77:

կաններ: Մի բան, որը վաղուց արդեն ապացուցված է և իրականությանը չի համապատասխանում[1]:

Այնպիսի տպավորություն է, որ Հ. Գանգրունին ավելի շատ ոչ թե ներկայացնում է սեփական տեսակետներն արմենականների կազմակերպության մասին, այլ՝ մեջբերումներ անելով Լեոյից, Ալ. Մյասնիկյանից, Գ. Ղարաջյանից և Խ. Բարսեղյանից թերագնահատում է այն՝ համարելով բուրժուական, նացիոնալիստական: Եվ դա այն դեպքում, որ ակնհայտ է, թե այս կուսակցությունը երբեք չի արտահայտել բուրժուազիայի շահերը (Արևմտյան Հայաստանում արմենականների գոյության ընթացքում այդ խավը նույնիսկ գրեթե չէր էլ ձևավորվել), այլ՝ որդեգրել է Արևմտյան Հայաստանն ազատագրելու նպատակը, որն իրագործելու միջոցների մեջ տեղաբնիկներ լինելով հաճախ ավելի խոհեմ ու իրատես է եղել, քան հնչակյանները կամ դաշնակցականները:

Գանգրունին առավել շատ և ընդգծված դրվատանքով է խոսում Հնչակյան կուսակցության մասին: Ընդ որում, ոչ թե նկարագրում է նրա ձևավորման պատմությունը, խորամուխ լինում նրա ծրագրի «մոտակա» նպատակի մեջ, այլ ավելի շատ փորձում է ապացուցել այդ կուսակցության՝ որպես սոցիալիզմը «հե-

---

[1] Տես Է. Կոստանդյան, Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության, Ե., 2005, Ղազարյան Վ., Արմենական կուսակցութիիւնը, Պէյրութ, 1985, Կարապետյան Ա., Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ 1885-1914թթ., Ե., 2003, Սարգսյան Ս., Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն 1908-1921թթ., Ե., 2009, նույնի 1885-1908թթ. հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ, Ե., 2010, նույնի «Արմենիա» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում, Ե., 2014 և այլն:

ռակա» նպատակ որդեգրելու իրավացիությունը: Հնչակյան կուսակցությունն, ըստ նրա, պայքարել է ոչ միայն հայ, այլև ճնշված այլ ժողովուրդների արդար իրավունքների համար: Հ. Գանգրունին Հնչակյանը համարում է մարքսիստական կուսակցություն և, միաժամանակ՝ ազգային և ոչ երբեք՝ ազգայնական[1]:

Այնուհետև նա բազմաթիվ մեջբերումներ է կատարում կուսակցության ծրագրային դրույթներից, տարբեր հեղինակներից և պարբերական մամուլից՝ Հնչակյան կուսակցության սոցիալիստական էությունը բացահայտելու և հիմնավորելու համար:

Ոչ ոք չի ուզում վիճարկել մարդկանց հավասարության համար պայքարելու և դրան հասնելու նպատակի իրավացիությունը: Սակայն, չպետք է մոռանալ մի կարևոր հանգամանք, որ ըստ մարքսիստական տեսության սոցիալիզմին հասնելու համար պետք է ձևավորված լիներ կապիտալիստական կացութաձևը (ֆորմացիան), որը տապալելու շարժիչ ուժն ու «գերեզմանափորը» պրոլետարիատն էր: Բայց խնրո առարկա շրջանում - Թուրքիան դեռևս մարքսիզմի ձևաչափով կապիտալիստական կացութաձևը չէր էլ թևակոխել և այնտեղ լիարժեք ձևավորված պրոլետարիատ էլ չկար: Ուրեմն, սոցիալիզմից առաջ կարևորը ազգային ազատագրության խնդիրն էր, որի շուրջ անհրաժեշտ էր առանց դասային խտրության բոլոր տարրերի միավորումը: Սա էր հայ քաղաքական կուսակցությունների առաջնային խնդիրը և ոչ թե ընկերավարական ավելորդ վիճաբանությունները, որը ոչ միայն խանգարեց «Հայ Յեղափոխականներու Դաշնակցութեան» ստեղծմանը, այլ նպաստեց Հնչակեան կուսակցութեան պառակտմանը:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 82-83:

Հ. Գանգրունին գրում է. «Հնչակեան Կուս.ը եղած է ազգային եւ երբեք ազգայնական, ուզած է հայ ժողովուրդը ազատագրել առանց ճնշումի ենթարկելու այլ ժողովուրդները եւ անոնց ալ ընկերային արդար իրավունքներուն համար պայքարած է»[1]: Բայց միթե ազգայնական լինել անպայման նշանակում է ճնշել այլ ժողովուրդների: Ամենևին՝ոչ: Դա ակնհայտ հնացած բոլշևիկյան թեզ է, որ այսօր բոլորովին քննություն չի բռնում: Իսկ, ընդհանրապես, թեև իրենք կուսակցականները, մեզանում հաճախ իրենց անվանել են ազգայնական, սակայն մերօրյա ըմբռնմամբ դա ճիշտ չի. հայ ավանդական երեք կուսակցություններն էլ իրենց բնույթով ազգային են:

Դաշնակցություն կուսակցության մասին խոսելիս հեղինակը փորձում է գնալ թերագնահատման ճանապարհով: Անցնելով իր աշխատության ընդգրկելիք ժամանակագրական սահմանը. նա այդ կուսակցության գործունեությունը հետևյալ կերպ է ներկայացնում, «Դաշնակցութիւնը 1890-1900-շրջանին դեռ տարածուած չէր Արևմտահայաստանի մէջ, սակայն յետագային լայն չափով իր մասնաճիւղերը, ֆետայիները, մամուլը ունեցաւ: Անոնք **զուտ ազգայնական հողի վրա գործեցին,** մասնակցեցան 1896թ. Վանի, նոյն թուի՝ Պանք Օթոմանի եւ 1897ի Խանասորի արշավանքներուն եւ 1904ի Սասնոյ Բ. ապստամբութիւնը կազմակերպեցին: 1905ի «Եըլտըզի ռումբը» պայթեցուցին, 1903ի Էջմիածնի կալուածներու գրաման շրջանին ցարին դէմ պայքարեցան, տեռորներ կազմակերպեցին, բախումներուն մասնակցեցան, ազատագրական պայքարի մէջ իրենց բաժինը ունեցան: Բանուորական շարժումներէ հեռու մնացին Կովկասի

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 82:

մէջ: Հակադրուեցան ռուս Ս. դեմոկրատներուն: 1907ին Վիեննայի համագումարին Սոցիալիզմը ընդունեցին, **բայց չհետեւեցան անոր**: Իթթիհատի հետ միացան՝ Համիտը տապալելու համար, սակայն տարուեցան անոր սուտ խոստումներէն եւ տուժեցին:

... Իրենց քաղաքական մեղքը պիտի մնայ՝ Իթթիհատի հետ սերտակցութիւնը 1907-1914 և 1921թ. Փետր. ապստամբութիւնը եւ Արեւմտեան օրիենթացիան: Պիտի գնահատուի Սուլթանիզմի դէմ իրենց անշահախնդիր, հետևողական եւ ազնիւ պայքարը»[1]: Ինչպես տեսնում ենք հեղինակն առանց գնահատականներ տալու կամ հետևություններ անելու պարզապես թվարկում է Դաշնակցության կատարած ձեռնարկները: Բայց նրա տողերանքներում մեղադրանքի ակնարկներ են զգացվում: Նախ՝ շեշտվում է, որ դաշնակցությունը ազգայնական էր ու նաև, սոցիալիզմն ընդունելով հանդերձ չի հետևել դրան: Իսկ բացահայտ մեղադրանքներ են տեսանելի երիտթուրքերի հետ համագործակցության և Փետրվարյան ապստամբության դեպքերում:

Սակայն, անաչառ լինելու համար պետք է շեշտել, որ երիտթուրք-ՀՅԴ համագործակցությունը գոնե սկզբնական շրջանում բնական էր, ինչպես որ օրինաչափ էր սոցիալիզմի՝ այդ կուսակցության կողմից հետին պլան մղած լինելու հանգամանքը: Իսկ փետրվարյան ապստամբության մասին հայտնած նրա կարծիքին չենք ուզում անդրադառնալ, քանզի դա մեր խնդրից դուրս է:

Հ. Գանգրունին նաև գնահատում է ՀՅԴ կուսակցության հետևողական և ազնիվ պայքարը սուլթանիզմի դեմ և այդ ազնվության վրա (ինչպես հնչակյանների պայքարի) ոչ մեկը չի կաս-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 95-96:

կածում: Շատ ավելի ճիշտ կլիներ, եթե հեղինակը քննարկեր այդ պայքարի արդյունավետության հարցը, փոխանակ քննադատելու Մ. Վարանդյանի և այլոց իր կուսակցության սոցիալիզմի դեմ թեզերը, որի համար այդ շրջանում պայքարի ոչ անհրաժեշտությունն էր առաջնային և ոչ էլ ժամանակն էր հասունացել:

Աշխատության Ե գլուխը («Հայ Յեղափոխական շարժումները») գրեթե նույն վերնագիրն է կրում, ինչը Բ և Գ գլուխների դեպքում էր: Սակայն ի տարբերություն նախորդ երկուսի, որոշ չափով նկարագրվում են Էրզրումի դեպքից (1890թ. հունիս 20) հետո կազմակերպված հնչակյան հետագա ձեռնարկները: - Պետք է շեշտել, որ նա հնչակյան ձեռնարկները (Գում-Գափուի ցույցը, Սասունի և Զեյթունի ապստամբությունները և այլն) ներկայացնում է ոչ համակարգված: Դրանք կամ ինքն է նկարագրում, կամ ներկայացնում է այլոց վկայությամբ: Հայեցակարգեր երբեմն ներկայացնում է, բայց դրանք չեն բխում հնչակյան ձեռնարկների արդյունավետության ելակետից: Այսպես, Գում-Գափուի ցույցին անդրադառնալիս, նա դարձյալ քննադատելով Լեոյին, որը Եվրոպական միջամտության հույսով ձեռնարկների հետ է կապում հայոց ջարդերը, հետևյալն է գրում. «Օսմանեան Կայսրութեան պատմութեան մէջ մինչեւ 1890 թուականը ո՛չ իսկ թուրքերը համարձակած են այդ կարողութեամբ ցոյց կազմակերպել: Աշխատաւոր ու գիւղացի այդ ցուցարարները ստիպումի տակ քալեցին դէպի Բ. դուռ»[1]:

Ընդունենք մի պահ, որ այս ցույցն իր ժողովրդական զանգվածների ընդգրկվածությամբ, իրոք, Թուրքիայի պատմության մեջ աննախադեպ էր: Բայց, ինչ տվեց այն: Կարևորն այս հարցի

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 109:

պատասխանն է, որ հեղինակը չի կարողանում տալ: Նրա կարծիքով սա Արևմտյան Հայաստանում «ազատագրական վսեմ շարժումին» սկիզբն էր»:

Այս ցույցին անդրադառնալուց հետո հեղինակը դարձյալ շեղվում է դեպի իր սիրած թեման և զանազան մեջբերումներով (նույնիսկ Լենինից) ձգտում է ապացուցել, որ հայ ազատագրական պայքարը պայմանավորված էր Թուրքիայի դաժան քաղաքականությամբ, քննադատում է Ս. Մարկոսյանին և Լեոյին, որոնք Գում-Գափուն համարել են «ավանտյուրա»: Այնուհետև նա հետևյալն է գրում. «1890ի հուլիս 15ի Գում Գափուի ցույցը խոշոր անդրադարձ ունեցաւ Եւրոպայի հանրային կարծիքին մոտ»[1]: Եվ այդ մասին դարձյալ վկայություններ բերելով, ցույցն «ավանտյուրա»համարողներին կոչում՝ «ավանտյուրիստ պատմաբաններ»:

Մի պահ ենթադրենք, թե ցույցն իսկապես ազդել է Եվրոպայի հանրային կարծիքի վրա, բայց արդյոք դրանից արևմտահայության կացությունը փոխվել է: Հասկանալի է, որ ոչ: Նույնը վերաբերում է հնչակյան այլ ձեռնարկներին հեղինակի անդրադարձներին, որոնց չենք անդրադառնում, քանզի նրա նման կընկնենք կրկնությունների գիրկը:

Ընդհանուր առմամբ, Գանգրունին այն տպավորությունն է ստեղծում, թե պատվավոր մահը նախընտրելի էր ստրկական կյանքից: Բայց ինչո՞ւ զոհվել, երբ թշնամին հենց այդ էր ուզում: Ինչո՞ւ չընտրել պայքարի այնպիսի ձևեր, որոնք ավելի քիչ զոհողություններով ավելի մեծ արդյունք կարող էին բերել: Աշխատության Զ գլխում էլ («Հայ և օտար վկայութիւններ օսմանեան

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 114:

բռնակալութեան եւ հայ ազատագրական պայքարի մասին») Հ. Գանգրունին նոր խոսք չի ասում, այլ կրկին փորձում է ապացուցել, որ.

ա) հայ ազատագրական պայքարն օրինաչափ էր,

բ) այդ պայքարի սկզբնավորողը Հնչակյան կուսակցությունն էր, որի գործողությունների ճշմարտացիությունն ընդունում է անվերապահորեն,

գ) թերագնահատում է Արմենական և Դաշնակցություն կուսակցությունների գործունեությունը,

դ) կրկնելով իրեն՝ Հնչակյանների կողմից սոցիալիզմի գաղափարախոսության որդեգրումը համարում է միանգամայն ճիշտ և արդարացված:

Հենց այս վերջին կետին է նվիրված աշխատության **«Կուսակցական ներքին տարակարծութիւններ»Է գլուխը**: Այստեղ անդրադառնալով կուսակցության պառակտմանը (1896 թ., Լոնդոն) և Ա. Նազարբեկյանի թևի կողմնակիցը լինելով, դիմում է տարաբնույթ փաստերի և փորձում է ապացուցել և ընթերցողին համոզել, որ սոցիալիզմի որդեգրումը ճիշտ էր: Ճիշտ կամ սխալ լինելու հարցը մի կողմ թողնելով, կարելի է մի եզրակացություն միայն կատարել՝ սոցիալիզմի որդեգրման կամ դրանից լիարժեք հրաժարվելու դեպքում էլ արևմտահայության ազատագրության խնդիրը պայքարի նման մեթոդներով չէին լուծվելու: Այս փաստի գիտակցումը միանգամայն անտեղի է դարձնում դրա ընդունման կամ մերժման առավելություններին ապացուցելու ջանքերը: Հետևապես այն տպավորությունն է ստեղծվում, որ այդ խնդիրը քննարկելն ընդամենը կուսակցության գործունեության արժևորման միտումով է պայմանավորված:

Գրքի Ը գլուխը («Օսմանեան բռնատիրութեան դէմ հայ ազատագրական պայքարի գնահատման հարցի շուրջը») նոր ասելիք գրեթե չի պարունակում և դարձյալ նպատակ ունի ցույց տալու հայ ազատագրական պայքարի օրինաչափությունը, ապացուցելու, որ հայոց ջարդերը պայմանավորված չէին այդ պայքարով կամ հայ կուսակցությունների գործունեությամբ: Անաչառ լինելու համար պետք է նշել, որ այս առումով նրա բերած փաստերը բավական առատ են: Նույն անաչառությունը պահանջում է նաև նշել, որ գիրքն այդ առատ փաստերով գիտական նորույթ գրեթե չի բերում, սակայն շրջանառության մեջ են դրվում հետևյալ հայեցակարգային մոտեցումները:

ա) Հայ ազատագրական պայքարը պայմանավորված էր Թուրքիայի դաժան տնտեսական և ազգային քաղաքականությամբ,

բ) Հնչակյան կուսակցությունը հայ ազատամարտի սկզբնավորողներից մեկն էր, ճիշտ էր նրա մարտավարական ուղին, ինչպես նաև՝ նրա կողմից սոցիալիզմի որդեգրումը,

գ) Մեծ տերությունները հետամուտ լինելով սեփական շահերին, հայ ժողովրդին պարբերաբար խաբել են:

Գրքի Բ մասը («Հայ Յեղափոխությունը իթթիհատի բռնատիրութեան շրջանին») վերլուծելը նպատակահարմար չենք համարում, որովհետև նախ՝ մենք փորձում ենք գնահատել մինչև 1908թ. պատմագիտական միտքը և երկրորդ՝ Իթթիհատի բռնատիրության շրջանում հայ «հեղափոխություն»որպես այդպիսին, չի եղել: Իրենցից առանձին հետաքրքրություն չեն ներկայացնում և հայեցակարգային առումով նորություն չեն պարունակում նաև ՀՅԴ-Իթթիհատ հարաբերություններին նրա անդրադարձները: Նա հիմնականում կրկնում է Սապահ-Գյուլյանի և մյուս հեղի-

նակների տարածված այն տեսակետը, որը մեղադրեում է ՀՅԴ-ին Իթթիհատի հետ համագործակցության համար և ճիշտ համարում իր կուսակցությանը, որն այդ համագործակցությունը մերժեց:

Հ. Գանգրունու աշխատությունը գնահատելի է նրանով, որ փաստական առատ նյութ է բովանդակում Հնչակյան կուսակցության գործունեության վերաբերյալ: Բայց այդ նյութից անհրաժեշտ եզրակացությունները կամ բացակայում են կամ ընդունելի չեն, կամ էլ թերի են: Սա է օբյեկտիվ ճշմարտությունը:

Արևմտահայ նշանավոր հասարակական քաղաքական գործիչ, մամուլի անխոնջ մշակ և երախտավոր, լուռ ու մունջ հայոց փրկության բովում տապակվող **Պետրոս Տեփոյանի**[1] հատորնե-

[1] **Պետրոս Տեփոյանը** (Խարբերդ 1884 – 1956 Կահիրե) ավարտելով տեղի Եփրատ քոլեջը նշանակվում է Մալաթիայի Ազգային վարժարանի տեսուչ: Բժիշկ դառնալու մտադրությամբ 1908թ. մեկնում է Բոստոն, սակայն նյութական միջոցների բացակայության պատճառով կիսատ է թողնում ուսումը: Այստեղ անդամակցում է Վերակազմյալ հնչակյան (Ազատական)

ը, որոնք նա հրատարակել է «Ուխտուածներ»շարքով, հետաքրքրություն են ներկայացնում երկու առումով. ա) դրանց ներածություններում առկա են հեղինակի որոշ յուրահատուկ գնահատականներ 19-րդ դ. վերջի և 20-րդ դ. սկզբն ընդգրկող իրադարձությունների վերաբերյալ, բ) դրանք Վերակազմյալ հնչակյան կուսակցության գործիչների հուշեր են, որոնք ինքը վերապատմում է, և ներկայացնում այդ գործիչների մոտեցումները նույն ժամանակաշրջանի պատմական անցքերի վերաբերյալ:

Միհրան Տամատյանին[1] նվիրված հատորի ամենաբովանդակալիցն ու մեր տեսանկյունից ամենահետաքրքրականը դրա

կուսակցությանը: Զբաղվում է առևտրով և դառնում կոշիկի գործարանի սեփականատեր: 1915թ. որպես կամավոր մեկնում է Թիֆլիս, որտեղ ամուսնանում է Սաթենիկ Մուրադյանի հետ և ունենում է դուստր Անահիտին: Ծանր վիրավորվում է ռազմաճակատում և դառնում է Անդրանիկի խորհրդականը: 1917-1918թթ. խմբագրում է «Հայկաշեն» թերթը և ակտիվ համագործակցում ՀԺԿ-ի հետ: Զանքեր է գործադրում գաղափարակից կուսակցությունների միավորման համար: Մեծ ներդրում է ունենում հայ որբերի փրկության գործում, այնուհետև անցնում է Եգիպտոս: Հիմնադիր անդամ է 1921 թ. ստեղծված ՌԱԿ-ի: 1947-48թթ. «Արևի» խմբագիրն էր: Կարևոր պաշտոններ է զբաղեցրել ՌԱԿ կառույցներում: Հանդարտաբարո էր, լրջախոհ, զգուշավոր և խիստ գաղտնապահ: Սկսել է ստեղծագործել 1901-ից: Աշխատակցել տարբեր պարբերականների, հեղինակ է մի շարք գեղարվեստական և պատմագիտական աշխատությունների:

[1] Արևմտահայ նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ Միհրան Տամատյանը (1863-1945) 1880թ. ավարտել Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը: Տիրապետել է ֆրանսերեն, անգլերեն, հունարեն, թուրքերեն, իսպաներեն և արաբերեն լեզուների: Զբաղվել է ուսուցչությամբ: Անդամագրվելով Հնչակյան կուսակցությանը: եղել է 1890թ. Գում Գափուի ցույցի ակտիվ մասնակիցներից, որի համար հայածվել է հեռացել Աթենք: 1891թ. Վերադարձել է Սասուն և տեղի հայերին նախապատրաստել ինքնապաշտպանության: 1893 թ. ձերբակալվել է և մեկ տարի բանտարկվել է Կ. Պոլսում: 1897թ. հեռացել է Հնչակյան կուսակցությունից: Եղել է Ազգային պատվիրակության Կիլիկիայի լիազոր ներկայացուցիչը: փորձել է 1920թ. օգոստոսի 4-ին Կիլիկիայում

ներածությունն է, քանզի այնտեղ առկա են հայեցակարգային նշանակության գնահատականներ՝ կապված վերոնշյալ ժամանակաշրջանի հայ ազգային-ազատագրական պայքարի դրվագների և, առհասարակ, նրա որդեգրած մարտավարական և ռազմավարական խնդիրների հետ: Իսկ հատորի բուն շարադրանքը, որը անվանված է «Տամատեան և իր գործը»[1], հեղինակի կողմից Տամատյանի գրած հուշերի վերաշարադրանքն է և սոսկ սկզբնաղբյուրային արժեք ունի: Ընդհանուր առմամբ, այնտեղ Մ. Տամատյանի գործունեության, հայ ազատագրական պայքարի ընթացքում թեկուզև հնչակյանների Արևմտյան Հայաստանի ազատագրության ռազմավարության և այդ նպատակով կազմակերպած մարտական գործողությունների վերաբերյալ որևէ գնահատական կամ կարծիք գրեթե չի ներկայացված: Ուստի մենք անհրաժեշտ ենք համարում հիմնականում վերլուծել հուշերի ներածական մասում արտահայտված մեր կարծիքով խիստ հետաքրքրական որոշ տեսակետներ[2], որոնք վերաբերում են հայ ազգային-ազատագրական պայքարի զարթոնքին և հետագա ընթացքին:

Նախ՝ արժանի է առանձնացնել ընդդեմ Թուրքիայի ձևավորված հայ (և ոչ միայն հայ) ազատագրական շարժումների դրդապատճառների մասին Պ. Տեփոյանի արտահայտած տեսակետները: Նա այն ընդունելի կարծիքն է հայտնում, որ որևէ

Ֆրանսիայի հովանավորության ներքո հայկական ինքնավար պետություն ստեղծել: Զբաղվել է նաև գրական գործունեությամբ:

[1] Տե՛ս Պետրոս Յ. Տեփոյեան, Միհրան Տամատեան (1863-1945), Պէյրութ, 1964, նույնի՝ Ատոմ Ասլանեան, Պէյրութ, 1988:

[2] Ինչ վերաբերում է Մ. Տամատյան-գործիչի ազգային-ազատագրական պայքարի մարտավարական և ռազմավարական մոտեցումներին, ապա դրանք մանրազնին վերլուծել ենք մեկ այլ աշխատությունում, տե՛ս Սարգսյան Ս., Միհրան Տամատյանի հրապարակախոսությունը, Ե., 2020:

գործչի, տվյալ պահին՝ Մ. Տամատեանի, գործունեությունը ներկայացնելիս, անհրաժեշտ է «գոնէ հապճեպ գնահատումով, անդրադառնալ ժամանակագրական Թուրքիոյ վրայ իբր քաղաքական, տնտեսական, ընկերային եւ ցեղագրական միջավայր եւ նոյնպէս պէտք պիտի ըլլայ ճանչնալ երկրին օրինաւոր եւ ապօրինի բազմիշխանութիւնը, որ տոն տուաւ մեր վերջին դարաշրջանի պատմական անցքերուն եւ պատճառ դարձաւ օտար եւ հայ ազատագրական շարժումներուն, անոնց անխուսափելի հետեւանքներուն, ուղղութիւն տուող ներքին ու արտաքին քաղաքական, տնտեսական ու հոգեբանական թնճուկներուն և անոնց համադրութեամբ ստեղծուած վտանգաւոր մթնոլորտին եւ վերջապէս Հայկական Հարցին հետ աղերս ունեցող պատմական այլազան գործոններուն եւ իրերաբախ շահերու աղետաւոր ներկայութեան վրայ»[1]:

Այստեղ հեղինակը միաժամանակ երեք կարևոր հարցադրում է կատարում.

ա) Հայ ազգային-ազատագրական շարժումների դրդապատճառներից կարևորագույնը փնտրում է Թուրքիայի՝ որպես պետության բուն էության մեջ և հարցը ներկայացնում է այնպես, որ քաղաքական, տնտեսական, սոցիալական և ցեղային տարբեր հատկանիշներով ապրող ժողովուրդները (հայերը, հույները և այլն) պետք է փորձեին առաջ ընթանալ ազատություն տանող ճանապարհների որոնումներով:

բ) Պ. Տեփոյանը չի անտեսում հայ (և ոչ միայն հայ) ազատագրական շարժումների վրա արտաքին գործոնների ազդեցությունները և ցույց է տալիս, որ մեծ տերությունների միջամ-

---

[1] Տե՛ս Տեփոյեան Պ., Միհրան Տամատեան (1863-1945), Պէյրութ, 1964, էջ 5:

տությամբ էր պայմանավորված նաև Թուրքիայի ներքին իրավիճակի օրեցօր ավելի ու ավելի բարդացումը:

գ) Հայկական Հարցը նա չի ընկալում միայն որպես հայերի կողմից բարձրացված խնդրի, այլև այն պայմանավորում է դրսի ուժերի «իրերաբախ շահերու աղիտաւոր ներկայութեամբ»:

Այս հարցադրումները հարմար ենք համարում առանձնացնել այն պարզ պատճառով, որ դրանք օգնում են հայոց մեծ ողբերգության պատճառների մասին կատարել ճիշտ եզրահանգումներ: Պատճառներ, որոնք ցայսօր, ցավոք, գնահատվում են ավելի հաճախ միակողմանիորեն, իսկ երբեմն էլ՝ոչ ճիշտ: Իսկ այդ դրդապատճառների համադրված ներկայացումը և ներքին պատճառական կապերի բացահայտումն ունի արդիական նշանակություն: Դա ժամանակին ճիշտ է հասկացել հենց Պ. Տեփոյանը, քանի որ գտնում է, որ Մ. Տամատյանի մասին խոսելուց առաջ «պետք է կմախքային համեմատութեամբ գոնէ տալ պատմաշրջանը բնորոշող կամ ժամանակաշրջանի ընդհանուր նկարագիրը պատկերացնող պատճառները, շարժումներն ու գործոնները, որոնց թելադրութեամբ ու անմիջական գործակցութեամբ սաղմնաւորուեցաւ, ծնունդն առաւ եւ զարգացաւ հայ ազատագրութեան պատմական տռամը եւ հայ ժողովրդի չար բախտին հասաւ իր ահաւոր լուծումին: Անշուշտ այստեղ պէտք է արձանագրել թէ այդ լուծումը հայ ժողովուրդի գնահատումով միայն դժբախտ հանգրուան մըն էր եւ ոչ թէ վերջնական հաշուեյարդար մը»[1]:

---

[1] Տե՛ս նույն տեղում. էջ 6:

Դրվատելի է Պ. Տեփոյանի համարձակությունը, քանզի միայն քչերն են փորձում խոստովանել[1], որ 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ ազատագրական պայքարն ավարտվեց պարտությամբ: Ավելին՝ նա գտնում է, որ մեր դատի լուծման ջանքերը հանգեցրին «դժբախտ հանգրուանի», որը թեև հաշվեհարդարի անմիջապես չհանգեցրեց, սակայն այնքան էլ չուշացավ՝1915 թվականը (հետագա 7-8 տարիները ևս) արևմտահայության համար վերջնական հաշվեհարդարի տարիներ եղան:

Պ. Տեփոյանի աշխատության մեջ խիստ կարևոր է նաև դեպքերի գնահատման ընթացքում պատճառահետևանքային կապի փնտրտուքը: Դա, ընդհանուր առմամբ, նրան հաջողվում է, քանզի հետազոտողին մղում է այն եզրահանգմանը, որ միայն առարկայական հիմքով վերլուծությունները կբերեն մեր պարտությունների ճիշտ պատճառների բացահայտմանը: «Պատմութեան խղճամիտ ուսանողին գործը չէ, - գրում է նա, - մետասաներորդ ժամու իմաստութեամբ կշռել ու չափել հին օրերու դէմքերուն արժանինքները եւ կատարուած պատմական դէպքերուն արժեքը: Պէտք էր ու պէտք չէր՝ները պատմութեան անցած անձերու եւ անցքերու մասին ողջամիտ դատողութիւն չեն ենթադրեր: Դէմքերու եւ դէպքերու գնահատումը պէտք է ընել տրուած ժամանակի փաստական տուեալներով եւ օրուան տիրապետող հոգեբանական հիմունքներով»[2]:

Հիրավի, առանց պատմական իրադարձությունների մասին խորը, առարկայական ուսումնասիրության տեսակետներ հայտ-

---

[1] Առաջիններից էր բազմավաստակ Լեոն, որը մեծ ցավով է քննարկում այդ խնդիրը հատկապես իր «Անցյալից» և «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» մեծարժեք երկերում:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 7:

նելը, դատարկ փիլիսոփայություն է: Տասնյակ կամ հարյուրավոր տարիների հեռավորությունից փաստերի անտեսումով եզրակացություններ կատարելը հետին թվով մարգարեանալու ձգտումների հետևանք են: Փաստերի բարեխիղճ ուսումնասիրության արդյունքում մարտավարական կամ ռազմավարական սխալների վերհանումը միանգամայն ընդունելի երևույթ է, բայց դրան զուգընթաց անհրաժեշտ է որոնել նաև սխալների բուն պատճառները: Այս ամենի գիտակցումով է հայեցակարգային նշանակության տեսակներ մատուցում Պ. Տեփոյանը: Փորձենք առավել խորությամբ համոզվել դրանում:

Պ. Տեփոյանը հիշյալ գրքի առաջաբանում նախ անդրադառնում է արևմտահայ ազատագրական մտքի զարթոնքին: Նա այն կարծիքն է արտահայտում, որ այդ զարթոնքը տեղի է ունեցել 19-րդ դարի երկրորդ քառորդի վերջերին թուրքական քաղաքական մտածողության մեջ ազգայնամոլության զարթոնքի զուգորդությամբ:

Այնուհետև նա հղում է կատարում սուլթան Ազիզին Ֆուատ փաշայի կողմից ուղղված քաղաքական կտակից, «որուն մէջ քաղաքագիտական լեզուով կը թելադրուէր Օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ ցեղերու միաձուլումը եւ անկարելի պարագային անոնց բնաջնջումը իրականացնել միատարր Թուրքիա մը ստեղծելու համար»[1]:

Կարելի է թերևս համաձայնել հեղինակի այս տեսակետի հետ, այն վերապահությամբ միայն, որ այս ըմբռնումը թուրքական իշխանությունների մուտ տիրապետող դարձավ ոչ սվյալ ժամանակահատվածում, այլ՝ 19-րդ դարի վերջին քառորդին:

---

[1] Տե՛ս նույն տեղում:

Բայց ակնհայտ է այն ճշմարտությունը, որ ցանկացած գաղափարախոսություն նախորդում է հանուն դրա իրականացման գործնական քայլերին, որը կարող է բավական ժամանակ պահանջել: Հօգուտ այս տեսակետի ճշմարտացիության են խոսում աշխարհի շատ ժողովուրդների անցած ճանապարհը, իսկ որպես օրինակ կարելի է դիտարկել և այն, որ 19-րդ դարի 60-70-ական թթ. արդեն ձևավորվում էր հայ ազատագրական պայքարի գաղափարախոսությունը, իսկ այն գործնական հուն սկսեց թևակոխել միայն նույն դարի 80-ական թթ. կեսերից:

Ինչպես նշեցինք, ըստ Պ. Տեփոյանի՝ **հայ ազգային-ազատագրական և թուրք ազգայնամոլական գաղափարների զարթոնքը տեղի ունեցան միմյանց զուգահեռ, միաժամանակ ու համատեղ**[1]:

Իսկ ազգայնականության և ազգայնամոլության[2] տարբերությունն ակնհայտ փաստ է: Ազգայնական գործիչը դուրս գալով արդարացի պայքարի իր դարավոր և ի վերուստ տրված իրավունքների բռնադատողների ու ոտնահարողների դեմ, դնում է իր պատմական ոտնահարված իրավունքները վերականգնելու խնդիր՝ իսկ ազգայնամոլը պատրաստ է ոչնչացնել մի ամբողջ ցեղ կամ ժողովուրդ՝ հանուն իր ազգի գերակայության: Հայի և թուրքի զարթոնքը այսպիսով հանգեցնելու էր անխուսափելի հակընդդեմության:

---

[1] Ընդգծումները հեղինակին են:

[2] **Ազգայնականությունը** (նացիոնալիզմ) ազգի անփակական կենսունակությունն իր հայրենիքում հարատևելու բնական ձգտումն է: **Ազգամոլությունը**՝ (ռասիզմ, շովինիզմ) ծայրահեղական ազգայնականություն է, «թերարժեք» ազգերի վրա բացառիկ իրավունքով օժտվածների կողմից գերիշխելու ձգտումը:

Ոչ պակաս հետաքրքիր են մինչև թուրանիզմի որդեգրումը և դրանից առաջ ազգերի նկատմամբ թուրքական իշխանությունների որդեգրած նպատակների տարբերությունների Պ. Տեփոյանի զատորոշումները: Անդրադառնալով այս խնդրին նա գրում է. «Հին թուրքը գաղթական ազգի մը սովորամոլութեամբ եւ նախնական մարդու ըմբռնումով բռնակալութիւնը նկարագիր դարձուցած էր իր մէջ: Նոր թուրքը. սակայն, պահելով հինի գիծը նոր տարր մը կ'աւելցնէր անոր վրայ: **Եթէ հինին քով բռնակալութիւնը նկարագրի վերածուած պահանջ մըն էր, նորին ըմբռնումով օտարացեղ տարրերը միաձուլել թրքութեան մէջ կամ բնաջնջել զանոնք ցեղային կենսապայքարի անխուսափելի պարտադրութիւն մը կը նկատուէր: Հին սխալներու սրբագրութիւն մը, որ նոր սերունդը պիտի առաջնորդէր նոր եւ ուժեղ կայսերական տարածութեամբ ազգ մը կերտելու աշխատանքին**»[1]:

Այլ արտահայտությամբ, եթե հնում թուրքերը կոտորում էին իրենց ճանապարհին կանգնած ժողովուրդներին կրոնական մոլեռանդությունից և տիրելու մարմաջից դրդված, միանգամայն հեռու լինելով ազգ, հայրենիք և նման հասկացությունների նույնիսկ պարզ ընկալումներից, ապա այժմ արդեն, ունենալով **հայրենիքի հիմնավորման** (քանզի ինչին տիրել էին, իրենցը չէր) անհրաժեշտությունը, պատրաստ էին հիմնովին վերացնել ցեղեր և ժողովուրդներ:

Կարծում ենք, որ այս հայեցակարգային եզրահանգումը, որին մղում է Պ. Տեփոյանը, կարևոր է ոչ միայն հիշյալ ժամանա-

---

[1] Տե՛ս նույն տեղում:

կաշրջանն ուսումնասիրող հայ պատմաբանների, այլև բոլոր թուրքագետների համար:

Թուրք ցեղի քաղաքական գերակայության հասնելու ձգտումն իրականացնելն այնքան էլ դյուրին գործ չէր, որովհետև անտեսված էին դրան խանգարող ներքին և արտաքին խոչընդոտները: Իսկ հանուն իր պատմական հայրենիքում իր իրավունքները վերականգնելու ոտքի կանգնած հայությունն էլ կոչված էր դրա ճանապարհին կրելու դաժան փորձություններ, որոնք հիմնականում պայմանավորված էին հետևյալ դրդապատճառներով՝ ա) իր ազգային-ազատագրական պայքարի անմիասնականությամբ, բ) Թուրքիայում բնակվող քրիստոնյա և ոչ քրիստոնյա տարրերի քաղաքական գիտակցության անհամատեղելիությամբ, ինչը վարպետորեն օգտագործվում էր թուրքական իշխանությունների կողնից, գ) մեծ տերությունների հակասական և դավադիր դիրքորոշմամբ:

«Թուրքը՝ օտարացեղ ազգերը թուրքութեան մէջ միաձուլելու կամ զանոնք բնաջնջելու, մասնաւորապէս հայկական խոչընդոտը միանգամ ընդ միշտ վերցնելու ծրագիրը կը հետապնդէր, - գրում է Պ. Տեփոյանը: Իսկ հայը՝ ուրիշներու ազատագրական շարժումներու յաջողութենէն ներշնչուած եւ իրեն զլացուած գոնէ իր քաղաքացիական իրաւունքները ապահովելու ձգտումով կ՚առաջնորդուիր: Այսպէս երկու ազգերու նոր սերունդները իւրահատուկ պահանջներէ մղուած ժամանակի ընթացքին նոր դէպքերու զարգացումով կը դառնային իրապէս թշնամի կողմեր: Այս հոգեբանական զարգացման մէջ, անշուշտ, արտաքին քաղաքական ազդեցութիւններ որոշ տարողութեամբ բացուած վիհը ընդլայնելու կը ծառայէին: Հոգեբանական այս երկու հակընդդէմ

ձգտումներուն մէջ է որ ծրագրուած է հայկական ազատագրական շարժումի լուծումին ներքին ծալքերը»[1]:

Այս մեջբերումից ընդհանրացումը մեկն է՝ հայի և թուրքի միջև անդունդը խորացել էր այն աստիճանի, որ հայ ազգային-ազատագրական պայքարն անխուսափելի էր դարձել և օրինաչափ, բայց արդյունք այդ անջրպետի ընդլայնմանը նպաստող արտաքին ուժերը հայության նկատմամբ անկեղծ էին: Միանշանակ՝ ոչ:

Արտաքին այդ ազդակներին անդրադառնալով Պ. Տեփոյանն սկսում է վկայակոչումներ անել ֆրանսիական հեղափոխությունից, որի կարգախոսների ազդեցությունն իր կարծիքով կրել են եվրոպական ու հարևան երկրների բոլոր ժողովուրդները: Ֆրանսիական հեղափոխության գաղափարական ազդեցությունները ընկալումների առումով գրեթե նույնն էին բոլոր ժողովուրդների մոտ: Բայց տարբեր էին այդ կարգախոսներն իրականություն դարձնելու հնարավորությունները: Այս իսկ պատճառով, ինչպես նկատում է հեղինակը, Հայկական Հարցը Թուրքիայում նախ դրսևորվեց քաղաքացիական իրավունքներն ապահովելու ձգտումներով, որի արտահայտություններն էին Խաթթը Հումայունը, Խաթթը Շերիֆը և Թանզիմաթները: Իսկ արդեն Սան-Ստեֆանոյի և Բեռլինի դաշնագրերից հետո հայ ժողովուրդը դուրս եկավ քաղաքական պայքարի և «Թուրք իշխանաւորին եւ ժողովուրդին կազմակերպուած հակահայ քաղաքականութիւնը անգիր յաճախ ալ գրաւոր հրիտակ: Այդ օրէն սկսած

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 10:

թուրք եւ հայ նախապէս գոյացած հակակրութիւնը վերածուեցաւ բացահայտ թշնամութեան»[1]:

Այսպիսով, ըստ Պ. Տեփոյանի հայի և թուրքի **բացահայտ** հակակրանքը վերածվեց բացահայտ թշնամության: Բավականին տարողունակ, ճշմարտացի ու համարձակ է նրա խոստովանությունը. «Թէեւ երեւոյթները փրկելու ճիգերը երկուստեք կիրարկուեցան հետեւողականօրէն, բայց մահուան ու կեանքի գոյամարտը շարունակեցաւ կողմերու սպարբերական յաջողութիւններով եւ վրիպումներով: Այս պայքարին հետեանքը եղաւ ծանօթ պայմաններու տակ Թուրքիոյ սահմաններուն մէջ տկար կողմին բնաջնջումը»[2]: Պ. Տեփոյանի եզրահանգումից կարևոր է այն, որ հայ ժողովրդի պայքարն անխուսափելի էր: Նա մատնանշում է նաև այդ պայքարի արտաքին շարժիչ ուժերը և լուսաբանում պարտության պատճառները: Իսկ դրանցից անհրաժեշտ է առանձնացնել հատկապես հետևյալները.

ա) Հայկական Հարցը միջազգային ատյանների վճիռներով իրավականորեն լուծվել է ի նպաստ հայ ազգի, բայց վերջիններիս կողմից որպես հիմք չեն բերվել անհրաժեշտ իրավական փաստերը ('իրողական փաստականությամբ'):

բ) Թուրքական բռնապետությունը հպատակ ազգերին ընկալել է որպես իրեն սնուցող ճորտի և ստրուկի և դա նրա համար դարձել է հոգեբանական գիծ:

գ) Այս նույն հոգեբանական գիծը սերմանվել է գրեթե նույն ցեղային հատկանիշներով ապրող, սակայն ոչ տնտեսվարող ցեղերի, մասնավորապես, քրդերի մեջ, որոնք հասու չլինելով

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 14:
[2] Տե՛ս նույն տեղում:

իրենց քաղաքական շահերի ճիշտ ընկալմանը, հայության նկատմամբ որդեգրել են նույն կործանարար դիրքորոշումը:

Ավելորդ չենք համարում անդրադառնալ նաև այսպես կոչված համաթուրանական ծրագրի ձախողման վերաբերյալ Պ. Տեփոյանի արտահայտած մի քանի տեսակետներին:

«Պէտք է ընդունիլ, - գրում է նա, - թէ բացի ռուսական ահարկու ոյժէն, Հայկական Հարցը իրողաբար այն խոչընդոտն է, ինչպես ակնարկուեցաւ ժայռային սեպն է, որ մխուած է այս հողային կենսական տարածութեան մէջ եւ կ'արգիլէ իրագործումը համաթուրանական երազին»[1]: Կարծում ենք այստեղ չափազանցություն կա: Հայ ժողովրդի թուրքական պետականության մեջ նույն պետականության մեղքով ժողովրդագրական պատկերի առումով ցրված նկարագիրը, նրա մարտականորեն ոչ պատրաստ լինելը, չէին կարող վճռական պատճառ հանդիսանալ թուրանականության կամ պանթուրքիզմի քաղաքականության դեմ: Անշուշտ, ցարական Ռուսաստանը հանդիսանում է այդ քաղաքականության կրախի մատնողներից մեկը, բայց չպետք է մոռանալ, որ եվրոպական տերություններից որևէ մեկը նույնպես, անկախ պատմական որոշակի պահին Թուրքիային թիկունք լինելու հանգամանքից, չէր կարող չխոչնդոտել նույն պանթուրքիզմի իրականացմանը: Այնպես, որ այդ գաղափարախոսության իրական հող ձեռք չբերելու պատճառները պետք է ներկայացնել իրենց ամբողջության մեջ: Հայկական Հարցի պարագայում պետք է պնդել, որ նա այնքանով էր պատվար այդ գաղափարախոսության դեմ, որքան հայության պայքարն ընդդեմ Թուրքիայի խրախուսվում էր մեծ տերությունների կողմից: Համոզված ենք,

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 17:

որ հայությունը միայնակ չէր կարող խոչընդոտել այդ ծրագրի իրականացմանը: Եվ սա ակամա հաստատում է նաև հեղինակը. «Թուրքիոյ հպատակ ազգերուն մէջ ամենադաժան մարտիրոսութեան բաժինը վիճակուեցաւ հայերուն: Արտաքին շահակից պաշտպանութենէ զրկուած հայերն էին, որ իրենց պամական հայրենիքին մէջ թուրքերու կողմէ դարերու ընթացքին գործադրուած բնաջնջման տեսական քաղաքականութեամբ միւսիլման ցեղերու ամբողջական թիւին հետ բաղտատելով իրենց նախկին միատարութենէն վերածուեցան նախքան իրենց վիճակուած բնաջնջումը զօրաւոր փոքրամաւնութեան: Եւ այս անժխտելի փաստն է ցեղային դիմադրական արժանիքին»[1]:

Թեև «զորաւոր փոքրամասնութիւն»արտահայտութեան հետ դժվար է համաձայնվել, ինչպես և այն բանի, որ դրան վերածվելը հետևանք էր միայն հայի դիմադրական արժանիքների: Համենայն դեպս, սկսած 1880-ական թթ. կեսերից մինչև 1918 թ. մայիսյան հերոսամարտերն ընդգրկող ժամանակահատվածը, դա այդպես էր: Ինչպես նաև դժվար է կասկածի տակ չառնել Հայկական Հարցի պանթուրքիզմի խոչնդոտողի վճռորոշ գործառույթը:

Հայկական Հարցը չպետք է ընկալել միայն որպես հայ ժողովրդի ազատագրման խնդիր, այլ լինելով Արևելյան հարցի բաղկացուցիչ մասը, այն հաճախ մեծ տերությունների քաղաքական ծրագրերին ծառայող հարց է եղել: Հայկական Հարցը - Թուրքիայի հանդեպ ծառացնելով այդ տերություններն էին ավելի շատ խոչընդոտում նրա պանթուրանական նպատակների ի-

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 17:

ռականացմանը, քան հայերը: Սա է պատմական ճշմարտությունը:

Եվ վերջապես, կարևոր ենք համարում նաև Պ. Տեփոյանի կողմից Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների համեմատությամբ հայության առավել զարգացած լինելու հանգամանքի մատնանշումը: Տնտեսական զարգացմանը զուգընթաց 19-րդ - դարի երկրորդ կեսերին սկսեց դրսևորվել հայության մտավոր կարողությունների աննախադեպ աճ և դարավոր ընդարմացումից զարթոնք, որն էլ հենց նախապատրաստեց հայ ազգային-ազատագրական պայքարը: Եվ այդ պայքարը պարտվեց ոչ միայն Թուրքիայի հայակործան քաղաքականության, այլև մեծ տերությունների տնտեսական շահերի բախման արդյունքում, շահեր, որոնց գերակայությունը տասներորդական պլան էր մղում Հայկական Հարցը, որի լուծմանը հայ քաղաքական ղեկավարների կողմից նույն տերությունների հետ կապելը ինչ որ տեղ աղետալի եղավ մեր ժողովրդի համար:

Պ. Տեփոյանի երկրորդ գործը, որը նվիրված է ազատագրական պայքարի հայտնի գործիչներից **Ատոմ Ասլանյանին**[1], նույնպես ունի բավական հետաքրքիր առաջաբան («Յետադարձ ակնարկ մը մեր ազատագրական շարժման վրայ») և ներառում է Ա. Ասլանյանի հուշերի հեղինակի կողմից վերաշարադրանքը: Այն տարբերությամբ, որ դրանցում ազատագրական պայքարի շատ

---

[1] Ատոմ Ասլանեանը (1865-1954) 1880-ական թթ. մտավորականության այն սերնդից էր, որը գործնականում մտավ Հայաստան, քաղաքական մտածողությունը դուրս բերեց ինքնապաշտպանության սաղմնային վիճակից և կազմակերպական բնույթ հաղորդեց դրան: 1890թ. անդամագրվել է Հնչակյան կուսակցությանը, մասնակցել ազատագրական մի քանի գործողությունների, հալածվել թուրքական իշխանությունների կողմից: Ավելի ուշ կարևոր դերակատարություն է ունեցել Եգիպտոսում հայ լեգեոնի կազմակերպման գործում:

դրվագների նկարագրությանը հետևում են կարևոր եզրահանգումներ և գնահատականներ[1]:

Նախ՝ առաջաբանի մի քանի հայեցակարգային նշանակության դրույթների մասին: «Դաժան բռնակալութիւնն է որ սաղմնաւորած, ծնած եւ դիեցուցած է բոլոր ազատագրական շարժումները: Մեր հին ու նոր ազատագրական շարժումներն ալ ենթակայ նոյն պատճառական տուելներու՝ չէին կարող զարտուղութիւն կազմել: Մեր ժամանակակից փորձը անխուսափելի հետեւանքն էր թրքական անտանելի բռնակալութեան, որուն ծրագրուած հեռակետն էր ժողովրդի մը բնաջնջումը իր իսկ պատմական հայրենիքին մէջ»[2]: Աշխատության հենց սկզբում հեղինակի այս ընդհանրացումը նույնպիսի նշանակություն ունի ոչ միայն հայ, այլև՝ բոլոր ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների համար: Հարկավ, այս տեսությունը նորություն չէ, և ազգային-ազատագրական շարժումները միշտ էլ արդյունք էին բռնակալական վարչակարգերի վարած դաժան քաղաքականության: Սակայն ավելի կարևոր է նրա հետևյալ ընդհանրացումը. «Տկարը սահմանուած է սպառելու՝ եթէ՝ ինքզինք պաշտպանելով չհակագործէ»[3]: Անհնար է չհամաձայնել նաև նրա հետևյալ տեսական ընդհանրացման հետ. «Ազատագրական բոլոր շարժումներուն ծնունդն ու զարգացումը տեղի կ'ունենան միայն բռնակալութեան հեղձուցիչ մթնոլորտին մէջ»[4]:

Հայտնի ճշմարտություն է, որ Բեռլինի վեհաժողովում Հայկական հարցի ձախող արծարծումը ազդակ հանդիսացավ հայ

---

[1] Տե՛ս Տեփոյեան Պ., Ատոմ Ասլանեան, Պէյրութ, 1988
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 9:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 10:

ազատագրական պայքարի վերելքի համար: Ուստի և, կարելի է համաձայնել Պ. Տեփոյանի հետևյալ ընդհանրացման հետ ևս. «Երբ յետահայեաց կարճ ակնարկ մը նետենք Հայկական Դատի ողբերգութեան վրայ, կը տեսնենք թէ 1878-ի Յունիս 13-էն մինչեւ Յուլիս 13 Պերլինի յօդուածը աղիտաւոր բովանդակութիւն մը ծրարած էր մեր յաջորդական շրջաններու պատմութեան համար: Միջազգային քաղաքական Հարցին վերարծարծումը Արևելյան Խնդրոյն մէջ կ'աւելցներ նոր թնճուկ մը, որ պատմական դէպքերու հետեւողական զարգացումով առանձին բարդութիւններ կը ստեղծէր եւ նոր լուծում մը կ'առաջադրէր»[1]:

Այլ արտահայտությամբ՝ հենց մեծ տերությունների կողմից վարած քաղաքականության մեջ նաև պետք է փնտրել հայերի մեծ ողբերգության պատճառները: Եվ միանգամայն հիմնավորված է Պ. Տեփոյանի հետևյալ դատողությունը ևս. «Եւ Հայկական միջազգայնացած Դատը յոյսի ու յուսախաբութեան կէս դարու փոփոխակի դիմայեղումներով կամ դիմափոխութիւններով ստեղծեց ճգնաժամային անցքեր հայ ժողովրդին համար, մինչեւ որ իր եզրափակումը ստացաւ միջազգային դիւանագիտական դատարաններու արդարամտութեան անփառունակ սնանկացումով»[2]:

Հիրավի, **Հայկական հարցի միջազգայնացումն, ըստ էության, ոչինչ դրական չբերեց Թուրքիայի կողմից արևմտահայության նկատմամբ վերաբերմունքի փոփոխության առումով:** Ավելին՝ թուրքական իշխանություններին առավել գազազեցնում էր Հայկական հարցի լուծումը մեծ տերություններից

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 12:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 13:

կախյալ համարելու հայ քաղաքական որոշ ուժերի համոզմունքը, որն իրեն ամենևին չարդարացրեց:

Հետաքրքիր է այն, որ Պ. Տեփոյանը հայոց ողբերգությունները գնահատում է մեկ ընդհանուր շղթայի մեջ, թե՛ մեծ տերությունների և թե՛ Թուրքիայի որդեգրած դիրքորոշումներին համադրված և **այն ճիշտ տպավորությունն ես ստանում, որ հայոց ջարդերի քաղաքականությունը Թուրքիայի կողմից ուղիղ համեմատական էր այդ տերությունների Հայկական հարցով միջամտությանը, անշուշտ, իրենց քաղաքական շահերի հաշվառումով:** Միանգամայն անաչառ է Պ. Տեփոյանը նաև հետևյալ եզրակացությունը կատարելիս. «Մենք կատարուածին (մեծ տերությունների կողմից – Ս.Ս.) մէջ չենք տեսներ թշնամութիւն մեզի դէմ, այլ՝ միայն ու միայն իւրաքանչիւր կողմի համար սեփական շահու հետապնդում»[1]:

Մնում է խոստովանել, որ միամիտը մենք էինք, որ երբեք չկարողացանք գնահատել խաբված մնալու հնարավորությունը մեծ տերությունների կողմից Հայկական հարցի արծարծման կամ ներարծարծման տարբեր փուլերում:

Պ. Տեփոյանն այն կարծիքն է հայտնում, որ 1878թ. հետո խնդիրը հետևյալ կերպ էր դրված՝ կամ թուրքը պետք է ապրեր կամ հայը և ուրիշ այլազգին: Բավական հետաքրքրական է հեղինակի այն համոզմունքը, որ «տիրապետող տարրը չունէր թուական գերակշռող առաւելութիւն՝ տիրապետուած ժողովուրդներու յարաբերութեամբ, եւ ոչ ալ քաղաքակրթական գերակայութիւն զանոնք համաձուլելու գոնէ օսմանցիութեան շահերու ըմբռ-

[1] Տե՛ս նույն տեղում:

նումով, պիտի դիմէր ոչ յանձնարարելի արտակարգ միջոցների»[1]:

Իսկ ինչու այդ տիրապետված ժողովուրդներն ի վերջո պարտվեցին: Պատճառը մեկն է՝ որովհետև չունեցան ընդհանուր պայքարի դուրս գալու գիտակցությունը: Այդ կարծիքին է նաև Պ. Տեփոյանը: Հատկանշական է նաև այն, որ բալկանյան ժողովուրդների ազատագրության գործում խոշոր տերությունները դրական իմաստով մեծ նպաստ ունեցան: Մի բան, որ նրանք չարեցին հայերի նկատմամբ, դրանով խիստ բացասական դերակատարություն ունենալով վերջիններիս հետագա ճակատագրում: Եվ պատահական չէ, որ նա Բեռլինի վեհաժողովին հաջոդած տարիները համարում է հայերի «մտաշվարումի»շրջան, որին շատ չանցած հետևեց հայ ազատագրական պայքարը, որն արդեն ձևավորման ընթացքի մեջ էր, երբ ծնվեցին հայ կուսակցությունները:

Պ. Տեփոյանը հետաքրքիր է վերլուծում Հնչակյան կուսակցության 1890-ական թթ. գործունեությունը[2]: Նա իրավացիորեն գրում է, որ «առաջին համահայկական չափանիշով կազմակերպուած կուսակցութիւնը հրապարակ իջաւ Հնչակեան անունով եւ շուտով իր կազմակերպական ցանցը տարածեց Երկրին բոլոր կողմերը»[3]:

Հայ քաղաքական իրականության մեջ ծնված այս երկրորդ կուսակցությունն իրոք կազմակերպչական-կուսակցական կառույցներն ստեղծեց թե՛ Արևմտյան Հայաստանում, թե՛ Փոքր -

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 16:

[2] Այդ գործընթացների մասին մեծաքանակ արխիվային նյութեր կան ՀԱԱ, 1456 ֆոնդում, ինչպես նաև գրվել են մի շարք բարձրարժեք ուսումնասիրություններ:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 18:

Հայքում ու Կիլիկիայում և թե՛ Թուրքիայի այլ քաղաքներում, այդ թվում և Կ. Պոլսում: Անվիճելի է հեղինակի այն պնդումը, որ «Հնչակեան կուսակցութեան շարժումը շատ կարճ ժամանակի մը ընթացքին ուժեղ արմատներ նետեց արդէն իսկ յեղափոխական տրամադրութիւններով հասունացած Պոլսոյ եւ Թուրքիոյ ներքնամասի հայկական շրջանակներում մէջ, մասամբ ալ տարածուեցաւ դէպի Կովկաս: Եւ իր մասին ստեղծեց արտակարգ հմայք՝ իբր զինական ուժ եւ ժողովուրդի պաշտպանութեան նուիրուած կազմակերպութիւն»[1]:

Բայց դրվատելի է, որ նա խոսում է նաև կուսակցության կենտրոնի սխալների մասին, որը հիմնականում պայմանավորում է Թուրքիայի ներքին կացության մասին գիտելիքների անբավարարությամբ՝ հատկապես առանձնացնելով հետևյալ սխալները.

«Ա) Թրքերէն գրուած եաֆթաներուն մզկիթներու եւ հասարակաց վայրերու պատերուն վրայ փակցնել տալու ձեռնարկը, որուն անմիջապէս հետեւեցան բազմահարիւր հայերու ձերբակալութիւններն ու խոշտանգումները, ինչպէս նաեւ խուզարկութիւններն ու հարստահարութիւնները:

Բ) Արաբկիրի Պոլսէն ղրկուած փոլիս-քոմիսէրին Եուսուֆի սպանութիւնը իբր կուսակցութեան կողմէ գործուած պատժական արարք մը ներկայացնելը մամուլով, որուն ալ հետեւեցան դարձեալ ծանր անդրադարձումներ Արաբկիրի շրջանակին մէջ եւ ուրիշ քաղաքներու յեղափոխական գործին վրա:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 19:

Գ) Սասունի ապստամբութեանը նախորդող լրատուական յայտարարութիւնը, որ թուրք կառավարութեան աչքերը բացաւ եւ Սասնոյ աղէտը փութացուց:

Ահա այս և նման արարքները, - ընդհանրացնում է հեղինակը, - երկրին մէջ գործող ղեկավարներու շինած գործը քանդելու միայն ծառայեցին եւ թուրքերու հակահայ կիրքը գրգռեցին»[1]:

Այս ընդարձակ մեջբերումը կատարեցինք ցույց տալու համար, որ ի տարբերություն շատ այլ հեղինակների, Պ. Տեփոյանն ունի դրվատելի համարձակություն՝ մեր ազատագրական պայքարի անհաջողություններն այդ գործընթացի ժամանակ գործած սխալներով պայմանավորելով: Նա ընդունում է, և միանգամայն ճիշտ է վարվում, որ այդ սխալները ջարդերի հավելյալ առիթներ էին տալիս թուրքական իշխանություններին: Եվ այս հանգամանքը նա իրավացիորեն տարածում է նաև Դաշնակցության վրա, գրելով, թե այդ կուսակցության դերակատարությունը նրանում էր, որ Սասունի 1904թ. դեպքերից առաջ (որը նա համարում է աղետ), արդեն թմբկահարում էին սպասվելիք իրադարձությունների մասին: Հնչակյան կուսակցության ժամանակավրեպ, աղմկարար գործողությամբ է Պ. Տեփոյանը պայմանավորում նաև 1895-96թթ. ընդհանուր ջարդերից հետո նրա հեղինակության կտրուկ անկումը և այն, որ «այլեւս Հնչակեան Կուսակցութեան համահայկական չափանիշով հմայքը արմատապէս տուժած էր եւ պայքարի ճակատն ալ չափազանց թուլցած»[2]:

Ցավոք, այդ ճակատն այլևս երբեք չուժեղացավ: Անհնար է վիճարկել Դաշնակցություն կուսակցության վերաբերյալ հեղինակի արտահայտած հետևյալ մտքերի ճշմարտացիությունը ևս.

---

[1] Տե՛ս նույն տեղում. էջ 19:
[2] Տե՛ս նույն տեղում. էջ 20:

«Հ. Յ. Դաշնակցութիւնը որ միայն իր ծնունդով արեւելահայ էր, այլեւ իր ղեկավարութեամբ մնաց մշտապէս արեւելահայ: Այս կուսակցութիւնն ալ առաջնորդուեցաւ ցուցական նոյն առաջադրութիւններով, գործելու նոյնանման մտածողութեամբ, եւ այս՝ թէ՝ մամուլի եւ թէ՝ բեմի օգտագործումով ու դիւանագիտական շրջանակներէ համակրանքի նոյն անսրբագրելի միամտութեամբ եւ այս նոյն գիծը դեռ կը շարունակուի ներկայ Հայաստանը ազատագրելու առնչութեամբ»[1]:

Պ. Տեփոյանի այս տողերն ունեն արդիական հնչեղություն, քանզի այսօր էլ հայ քաղաքական շրջանակներում շատերն են համակված նույն՝ մեծ տերությունների նկատմամբ «անսրբագրելի միամտութեամբ»և տոգորված են գրեթե անփոփոխ 300-ամյա քաղաքական ռոմանտիզմով:

Ըստ Պ. Տեփոյանի հայ ազատագրական պայքարի խոցելի կողմերից մեկն այն եղավ, որ թե՝ Հնչակյան և թե՝ ՀՅԴ կուսակցությունների ծնունդը և զարգացումը կրեցին արևելահայ «յեղափոխական մտքի դրոշմը, եւ անոնց շարժումները ընթացան նոյն սայթաքումներով»[2]: Իսկ **արևելահայ քաղաքական միտքը համեմված էր ռուս հեղափոխական-նարոդնիկական գաղափարախոսությամբ, որն անհամատեղելի էր արևմտահայ քաղաքական գործիչների հեղափոխական ըմբռնումներ հետ:** Պատմական փորձն էլ ցույց տվեց, որ այլ ժողովրդի, այլ իրականության արգասիք գաղափարախոսության արհեստական տեղայնացումը երբեք էլ լավ բանի չի հանգեցնի:

Հնչակյան կուսակցության պառակտման գործընթացի հետ կապված Պ. Տեփոյանը կատարում է տեսական ընդհանրացում-

---

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում:

ներ, որոնց մեջ կարևորում և առանձնացնում է այդ կուսակցության ծրագրային դրույթները. «Երբ արեւմտահայ առաջնորդող յեղափոխական դեմքերը (ինչակեան) համիտական դաժան հալածանքներէն դուրս եկան թրքական գեհենէն, միացան արտասահմանի մէջ գործող իրենց ղեկավար ընկերներուն եւ պահանջեցին Նազարբէկեան կեդրոնէն գլխաւորաբար՝ ա) նիւթական ու բարոյական համարատուութիւն, բ) գաղափարական գծով հրաժարում ընկերվարական վարդապետութիւններէ և քարոզութիւններէ՝ Կուսակցութեան տալով իր բուն, ազգային-ազատագրական դիմագիծը միայն, ինչ որ անոր առաքելութեան հիմնական էութիւնը կը կազմէր, գ) ծանր փորձառութեան դասերէն օգտուելով՝ հրաժարիլ ցուցական գործունէութենէ, որդեգրելով անաղմուկ լուրջ պատրաստութեան ուղեգիծը»[1]: Այսինքն, ապագա վերակազմյալներն առաջ էին քաշում միանգամայն լուրջ և հիմնավորված խնդիրներ, որ՝ա) արևմտահայությունն իր ազգային-ազատագրության խնդիրը լուծելու համար ուներ նյութական և բարոյական աջակցության կարիք, բ) սոցիալիզմի վարդապետությամբ տարվելը տակավին տարաժամ էր, գ) մասնակի, ցուցադրական գործողությունները ոչնչով չէին նպաստում արևմտահայ դատի լուծմանը, դրա փոխարեն պետք էր լուրջ և անաղմուկ նախապատրաստվել: Այս տարրական ըմբռնումները երբևէ Արևմտյան Հայաստանում չեղած նազարբեկյանները չունեին, որը և նպաստեց հայ ազատագրական պայքարի անմիասնականությանն ու Հնչակյան կուսակցության պառակտմանը: Այս ամենի ճշմարտացիությունն ընդունում է նաև ինքը՝Պ. Տեփոյանը.

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 21:

«Շարժումի ներդաշնակութեան պակասը առաւելապէս պէտք է վերագրել գործելակերպի ըմբռնումին անջատականութեան»[1]:

Եվ վերջապես, ճիշտ է Պ. Տեփոյանը, երբ հայ հոգևոր և քաղաքական ուժերի բոլոր կողմնորոշումներում չի տեսնում հայ ազատամարտի հաջողության երաշխիքը: Ազատամարտ, որը վերելք ապրեց Բեռլինի վեհաժողովից հետո և որն իր գոյության գրեթե 30 տարիների ընթացքում կրեց քաղաքական ռոմանտիզմի կնիքը: Հեղինակի հետևյալ տողերը լիարժեք պատշաճում են այդ շրջանի հայ ազատագրական պայքարին. «Զո՛հուիլ ժողովուրդին համար եւ նո՛ւիրուիլ մեծ երազի իրագործման, մինչեւ իսկ հաշտուելով մահուան հետ: Ահա՛ այդ օրերու հայ երիտասարդութեան ծաղիկին հոգեկան պահանջը»[2]: Բայց ինչո±ւ մեռնել, երբ դրանից ոչինչ չի շահում քո ժողովուրդը, ինչու գործել չգիտակցելով և միայն մեռնելու «արդյունավետությամբ»: Այս հարցը մինչև 1904թ. ներառյալ գրեթե չէր տրվում: Իսկ երբ տրվեց, արդեն և մեծ ժամանակ էր կորսվել և ազատամարտի մեծ ռեզերվներ:

Պ. Տեփոյանի գրքի հաջորդ, առավել ստվար մասը նվիրված է Ա. Ասլանյանի հուշերին, ավելի ճիշտ դրանց իր կողմից վերաշարադրանքն է, որում նույնպես առկա են հայեցակարգային նշանակության ընդհանրացումներ:

1890թ. Հնչակյան գործիչ Ատոմ Ասլանյանը (1865, Սեբաստիա-1954, Կահիրե) «մէկն էր այն գաղափարական երիտասարդներէն, որոնք գիտակցաբար նուիրուեցան իրենց ժողովուրդի ազատագրական գործընթացին»[3]: Անհրաժեշտ ենք տեսնում

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 22:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 26:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 28:

վերլուծել ու գնահատել այդ պայքարի նկատմամբ նրա գնահատականները, որոնք, մեր կարծիքով, տեսական, պատմագիտական առումով իրենցից որոշակի արժեք են ներկայացնում:

Հայտնի է, որ հնչակյանները միշտ էլ հպարտացել ու դրվատանքով են խոսել Գում-Գսափուի ցույցի մասին (1890թ. հուլիս): Իսկ ահա թե ինչ է գրում այդ մասին Ա. Ասլանյանը. «Այս անիմաստ ցոյցին հետեւանքով Պոլսոյ մէջ Կուսակցութիւնը ենթարկեցաւ խոշոր ցնցումներու»[1]: Իսկապես որ, ըստ էության, անիմաստ ցույց էր այն, որը ոչ միայն ոչնչով չօգնեց հայ դատին, այլև ոչնչով չբարձրացրեց Հնչակյան կուսակցության հեղինակությունը: Բայց առավել հետաքրքիր է նրա հետևյալ խոստովանությունը. «Աշըգեան Խորէն պատրիարքը այս դէպքերուն վրայ հրաժարեցաւ եւ անդրդուելիօրէն կը պնդէր իր հրաժարականին վրայ: **Կուսակցութեան նպատակն էր անիշխանութիւն ստեղծել, եւ՝ յաջողեցաւ: Ազգային իշխանութիւնը անգործութեան դատապարտուեցաւ: Լուծուած էին ժողովները եւ պատասխանատու մարմին չկար պատրիարքարանին մէջ: Այս վիճակը տեւեց մի քանի ամիսներ»**[2]:

Փաստորեն, այս ձեռնարկով Հնչակյան կուսակցությունը ոչ միայն նպատակ է հետապնդել Հայկական Հարցի վրա սևեռելու Եվրոպական տերությունների ուշադրությունը, այլև՝ անդամալուծել ազգային մարմինների՝ Պատրիարքարանի և ազգային ժողովների գործունեությունը: Հարց է առաջանում՝ ինչո±ւ: Պատասխանը միանշանակ պարզ է. Աշըգեան պատրիարքը համարվում էր պահպանողական գործիչ, թուրքական իշխանությունների հետ վարում էր զգուշավոր քաղաքականություն, որը

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 42:
[2] Տե՛ս նույն տեղում:

հայ «հեղափոխական» կազմակերպությունները չէին կարող հանդուրժել: Այն տպավորությունն եւ ստանում, որ հայ, մասնավորապես՝Հնչակյան և Դաշնակցություն կուսակցություններն ավելի շատ նման ձեռնարկների գնում էին Եվրոպայի աչքում «հեղափոխական» երևալու համար, քան թե դատում էին սեփական ժողովրդին դրանցով օգտակար լինելու մասին: Սակայն, դրվատելի է այն, որ հնչակյան Ա. Ասլանյանը գոնե հիշյալ ցույցը համարում է «անիմաստ», մի խոստովանանք, որը հակադրվում է այլ հնչակյանների՝ դրա արդյունավետության կամ անհրաժեշտության մասին թյուր հիմնավորումներին:

Այն, որ թե՝ այդ ցույցը և թե՝ 1890-ական թթ. մյուս ձեռնարկներն ավելի շատ վնասակար էին, քան թե օգտակար, ակամա հաստատվում է նաև Ա. Ասլանյանի հետևյալ տողերով. «Այս արդիւնաւիր աշխատանքը գրեթէ անարգել շարունակեցաւ մինչեւ 1895-ի ջարդերը (նկատի ունի Հնչակյան կուսակցության Կ. Պոլսի Վարիչ մարմնի աշխատանքները, որոնք իրականում այնքան էլ «արդիւնաւոր» չէին – Ս. Ս.): Այդ 1895-96-ի ջարդերը, թուրք կառավարութեան այլապէս հակայեղափոխական հետապնդումները եւ, իր կարգին հայ ժողովուրդին սպառումները պարտադրեցին ղեկավար գործիչներուն որ վերատեսութեան ենթարկեն ամբողջ կատարուածը եւ նոր գործելակերպ որդեգրեն, իրենց նկատակը իրագործելու ուղիներ որոնել: Այդ շարժումը դարձաւ գլխաւոր պատճառներէն մէկը, որ Կուսակցութենէն ներս գոյանան գործելակերպի մասին ընբռնումի անհաշտելի շերտաւորումներ, ուստի միասնականութեան քայքայում եւ բաժանում, որուն մասին արդէն իսկ ակնարկուած է որոշապէս»[1]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 44:

Այս մեջբերումից ինքնստինքյան բխում են հետևյալ եզրակացությունները.

1. Թեպետ մինչև 1895թ. ներառող գործունեությունը նա համարում է «արդիւնաւոր», բայց հետագա տողերում իրավացիորեն հաստատում է դրանց ոչ «արդիւնաւորութիւնը»:

2. Հայ քաղաքական ղեկավարները, ըստ Ա. Ասլանյանի, փաստորեն, այդ դեպքերից հետո ըմբռնել են իրենց գործունեության ոչ արդյունավետությունը և մտածել են վերանայել ու փոխել այդ գործունեության մարտավարությունը:

3. Հենց գործունեության ոչ արդյունավետության գիտակցումն էր, որ հանգեցրեց Հնչակյան կուսակցության պառակտմանը:

Ա. Ասլանյանը հետաքրքիր անդրադարձ է կատարում ՀՅԴ և Հնչակյան կուսակցությունների միության փորձերին: Հետաքրքիր է, որ նա այդ միության չկայանալու մեջ չի մեղադրում սեփական կուսակցությանը: Այն տպավորությունն ես ստանում, որ նա կողմ է եղել այդ միությանը, ինչի մասին են վկայում նրա հետևյալ տողերը. «Այս բանակցությունները (ՀՅԴ և Հնչակյան կուսակցությունների միջև - Ս. Ս.) եզրակացության մը հասած էին եւ համաձայնագիր մը ստորագրուած բանակցող կողմերու միջեւ: Ըստ այդ համաձայնագրին, նորակազմ կուսակցութիւնը պիտի ունենար իր պաշտօնական օրկանը, իսկ «Հնչակը» պիտի զբաղէր միայն գաղափարական եւ տեսական հարցերով: **Այս յաջողութեան մակընթացութիւնը արտակարգ խանդավառութիւն յառաջացուցած էր բոլոր շրջանակներուն մէջ** եւ առաջնորդող տարրերը արդէն մեկնած էին զանազան շրջաններ՝

միացեալ կուսակցութեան համար համահայկական շարժում ստեղծելու»[1]:

Հատկապես մեր ընդգծված նախադասությունից այն եզրակացությանն ես հանգում, որ իսկապես կուսակցությունների միությունը ողջունելի էր հայ բոլոր քաղաքական և թերևս հոգևոր շրջանակների համար: Այդ միությունը, որի կայացման դեպքում հայ ազատամարտն առավել իրական մարտավարություն կորդեգրեր, ցավոք, չկայացավ:

Ա. Ասլանյանը թեպետ տեսականորեն չի հիմնավորում այդ կուսակցությունների միության անհրաժեշտությունը, սակայն դրանում մեղադրում է Ա. Նազարբեկյանին. «Հնչակյան Կուսակցութեան կողմէ իբր գլխավոր բանագնաց յիշեալ խորհրդաժողովին կը մասնակցէր Ռ. Խանազատը, իրեն հետ ունենալով մի քանի ուրիշ ընկերներ: Ստորագրուած նախագիծը կը ղրկուի «Հնչակին»՝ հրատարակելու եւ միութիւնը պաշտօնապէս յայտարարելու բոլոր յեղափոխական կազմակերպութիւններուն: Նազարբէկեանը, սակայն, յետոյ, յարձակողական ուժեղ յօդուածով կ'արտայայտուի եղածին դէմ»[2]: Բացառիկ դեպք է, երբ Հնչակյան գործիչն իր իսկ կուսակցության ղեկավարին թեկուզ անուղղակիորեն մեղադրում է այս միության չկայացման մեջ: Բացառիկ այն առումով, որ թե' հնչակյան և թե' դաշնակցական գործիչները դրանում միշտ մեղադրում են հակառակ կողմին: Ա. Ասլանյանը փորձում է հնարավորինս անաչառ լինել, թեպետ լիարժեքորեն չի բացահայտում իր տեսակետները: Ընդգծենք, որ այս միության չկայացման համար մեղքի բաժին ունեին երկու կողմն էլ և, ցավոք, չկար այն հստակ գիտակցությունը, որ արդեն 1890-

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 50:
[2] Տե՛ս նույն տեղում:

ական թթ. կեսերի իրադարձություններն ապացուցում էին, որ հայ ազատագրական պայքարի անհաջողության գաղտնիքը նաև նրա անմիասնականության մեջ էր:

Հետաքրքիր են Բաբը Ալիի ցույցին (1895թ.) Ա. Ասլանյանի անդրադարձները և տված գնահատականները, որոնք ճշմարիտ են և իրավացի. «Պոլսոյ Վարիչ մարմինը տեսնելով որ սուլթան - Համիտին եւ իր կառավարութեան վարած մասնաւոր քաղաքականութեամբ բարենորոգումներու ծրագրին գործադրութիւնը անվերջ ձգձգումի կ'ենթարկուի եւ մասնաւորաբար ներքին գաւառներու մէջ հարստահարութիւնները կը յաւերժանան՝ Եվրոպական ազդոց միջամտութիւն մը հրաւիրելու դիտումով կ'որոշէ հանգամանօրէն պատճառաբանուած յիշատակագիր ուղղել վեց մեծ պետութիւններու դեսպաններուն: Այս յուշագրին մէջ կատարուելիք խաղաղ ցոյցին նպատակն ալ պիտի բացատրուէր: **Յիշատակագրերը յանձնուեցան պատկան դեսպանատուններուն եւ ցոյց կատարուեցաւ, բայց ոչ մէկ միջամտութիւն տեղի ունեցաւ: Ընդհակառակը, Համիտին կառավարութիւնը հայերու հանդէպ աւելի խստացուց իր վերաբերումը, որ յետոյ պիտի հասնէր 95-96-ի ընդհանուր կոտորածներուն»**[1]:

Այսպիսով, Ա. Ասլանյանը մեծ տերությունների՝ հօգուտ հայկական բարենորոգումների միջամտության հույսով ինչպիսի կուսակցության կազմակերպած ցույցերը համարում է ոչ արդյունավետ: Իսկ նրա հետևյալ տեսակետը՝կապված 19-րդ դ. 90-ական թթ. ցուցադրական ձեռնարկների հետ, համարժեք է պատմագիտական հայեցակարգի. «Թուրքիոյ մէջ կատարուած շուրջ

[1] Տե՛ս նույն տեղում:

տասը տարիներու ցուցական շարժումները հայ ժողովուրդի շահերուն համար բացասական արդիւնքի հասած էին»[1]:

Այս տեսակետը որքան էլ անողոք լինի, մնում է անհերքելի ճշմարտություն:

Այսպիսի ըմբռնումներն էին հիմնական պատճառը, որ Ա. Ասլանյան հարեց Վերակազմյալ հնչակյաններին, որոնց ձևավորումով, փաստորեն, Հնչակյան կուսակցությունը որպես քաղաքական ամբողջական կազմակերպություն, այլևս չվերագտավ իրեն: Իսկ կուսակցության պառակտման պատճառը նա բացատրում է հետևյալ կերպ. «Դժբախտաբար կուսակցական ղեկավարութեան մէջ գտնուող արեւելահայ տարրեր, առաջնորդուելով իրենց մենատիրական ձգտումներով, մերժեցին լսել իմաստութեան ձայնը եւ ընթացք տուին իրենց սովորամոլութեան»[2]:

Եթե փորձենք առանձնացնել **Պ. Տեփոյանի Ա. Ասլանյանին նվիրված հատորում** հայ ազատամարտի մասին արտահայտած տեսակետները, ապա կունենանք հետևյալ պատկերը.

1. Հայ ազգային-ազատագրական պայքարը հետևանք էր հայության նկատմամբ Թուրքիայի որդեգրած բռնատիրական քաղաքականության:

2. Բեռլինյան ձախողումից հետո այն տպավորությունն է ստեղծվում, որ Հայկական հարցի լուծումը չպետք է կախյալ համարվեր մեծ տերություններից, բայց այդ կախյալությունը 19-րդ - դարի 90-ական թթ.-ի ամբողջ ընթացքում պահպանվեց:

3. Հնչակյան կուսակցության գործունեությունը չի ընթացել բուն Արևմտյան Հայաստանում մասնավորապես և Օսմանյան կայսրությունում՝ընդհանրապես, տիրող քաղաքական և տնտե-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 124:
[2] Տե՛ս նույն տեղում:

սական վիճակի մասին տեսական ընդհանրացումներով և դրանից բխող գործնական վճռական գործողություններով; այլ այն իր բնույթով ռոմանտիկ եղավ, իսկ կազմակերպական տեսակետից՝անմիասնական:

4. Ա. Ասլանյանի և կուսակցության շատ նվիրյալ հերոսների գործունեությունն ընտրված սխալ մարտավարության և ռազմավարության հետևանքով չի տվել սպասված արդյունքը:

Ռուբեն Խանազատի տեսակետները հայ ազատագրական պայքարի հիմնախնդիրների վերաբերյալ

Բավական հետաքրքիր և միաժամանակ արժեքավոր են Հնչակյան կուսակցության հիմնադիր գործիչներից **Ռուբեն Խանազատի**[1] **հուշերը**: Վերջինս նաև մասնակցել է ՀՅԴ հիմնադր-

[1] Հայ մարքսիստական սոցիոլոգիական մտքի հիմնադիր Խանազատը (Նշան Կարապետյան՝1862-1929) Ա. Նազարբեկի և Մ. Վարդանյանի հետ Ժնևում 1887թ. հիմնել է «Հնչակ» թերթն ու նույնանուն կուսակցությունը: 1889թ. Տրապիզոնում ստեղծել է հնչակյան կենտրոն: 1890թ. Կ. Պոլսում

ման աշխատանքներին, որը նախ ձևավորվեց որպես Հայ հեղափխականների դաշնակցություն և նպատակ ուներ իր մեջ միավորելու հայկական իրականությունում գործող բոլոր հեղափոխականներին, այդ թվում նաև՝Հնչակյան կուսակցությանը, սակայն որպես այդպիսին չկայացավ: Հուշերի նախաբանում Խանազատը շեշտում է, որ դրանք անաչառ են և ոչ կուսակցականացված և դա պայմանավորում է նրանով, որ 1905թ. ինքը հեռացել է Հնչակյան կուսակցությունից և, ընդհանրապես, քաղաքական գործունեությունից, հետևաբար իր «դատողություններն ու քննադատությունները լինելու են ըստ ամենայնի անաչառ և անկողմնապահ»[1]:

Իսկապես, իր հուշերում նա ձգտում է լինել այդպիսին, միևնույն ժամանակ՝ զերծ մնալ ինքնագովեստից և սեփական անձի դերի գերագնահատումից:

Հուշերի Ա. գլխում Խանազատը մի հետաքրքիր տեսակետ է առաջ քաշում, ըստ որի հայոց նորագույն պատմությունն սկսվել է 1877թ. ռուս-թուրքական պատերազմով, կամ «այդ պատերազմի առիթով Բեռլինում կայացած մեծ պետութիւնների վեհաժողովով»[2]: Հասկանալի է, որ նա իր այս ենթադրության համար որպես հիմք է ծառայեցրել այդ վեհաժողովից հետո հայության մեջ մեծ ծավալների հասած ազգային զարթոնքը և Բեռլինի վեհաժողովում առաջին անգամ արծարծված, բայց և ձախողված Հայ-

---

ղեկավար մասնակցություն է ունեցել Գում-Գափուի ցույցին: 1905թ. կուսակցության 5-րդ համագումարից հետո, հեռացել է քաղաքականությունից: Հեղինակ է մի քանի արժեքավոր աշխատությունների:

[1] Տե՛ս Խանազատ Ռ., Հայ յեղափոխականի հիշողություններ, «Հայրենիք» ամսագիր. Բոստոն, 1927-29, էջ 60:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 61:

կական հարցը: Իհարկե, դա ամենևին չի նշանակում, որ դրանով է սկսվում մեր պատմության նորագույն շրջանը: Սրան հակառակ, որում նա ճիշտ է յուրովի, Ռ. Խանազատը ճիշտ է մեկնաբանում Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16 և Բեռլին կոնգրեսի 61-րդ հոդվածների տարբերությունները և այստեղից բխեցնում այն պատճառները, որոնք թղթի վրա թողեցին դրանք: Նա միանգամայն ճիշտ է, որ այդ հոդվածների չիրականացման պատճառը բացատրում է նրանով, որ եթե 16-րդ հոդվածով հայկական նահանգներում նախատեսված բարենորոգումների իրականացումը պետք է վերահսկեր Ռուսաստանը, ապա 61-րդով՝ «Թուրքիան պարտաւորվում է բարենորոգումներ մտցնել հայկական վիլայէթներում եւ այդ մասին պարբերաբար հաշիւ տալ Եւրոպական բոլոր վեց պետութիւններին: Այլ խոսքով, - ընդհանրացնում է հեղինակը, - Թուրքիային ազատութիւն էր տրվում, մեծ պետութիւնների հակամարտ շահերից օգտուելով, ո՛չ մի բարենորոգում չի մտցնել Հայաստանում»[1]:

Ռ. Խանազատը դրսևորում է Հայկական Հարցի նկատմամբ մեծ տերությունների հակասական քաղաքականության կարևոր ըմբռնողունակություն: Հիրավի, մեծ տերությունների հակասությունները արգելք էին ծառանում Թուրքիայի վրա համատեղ ճնշմանը, որը վերջինս ձեռքերին ազատություն էր տալիս հայերի նկատմամբ որդեգրած դավադիր նպատակադրումների իրականացման առումով: Ցավոք, այս ըմբռնումն ուներ հայ քաղաքական գործիչների ոչ ստվար մասը: Արդյունքում մնում էր այդ նույն տերությունների կողմից իրենց համար նպաստավոր պահերին Թուրքիայի վրա ճնշում գործադրելը, որից արևմտահա-

[1] Տե՛ս նույն տեղում:

յությունը գործնականում ոչինչ չէր շահում: Սա Ռ. Խանազատը նույնպես լավ է ըմբռնել գրելով, որ 61–րդ հոդվածը զենք դարձավ այդ տերությունների ձեռքին՝ «ուզած ժամանակ վախեցնել - Թիւրքիային Հայաստանի բարենորոգումներու ուրուականով ու իր սեփական շահերն առաջ տանել: Բայց դրանով հայերի դրութիւնը Թիւրքիայում մազաչափ անգամ դէպի լաւը չէր փոխւում»[1]:

Անդրադառնալով հայ մտավորականության՝ 61–րդ հոդվածի նկատմամբ ունեցած միամիտ ոգևորությանը, Ռ. Խանազատն այս առումով չի խնայում նույնիսկ կովկասահայ քաղաքական մտքի առաջնորդ Գր. Արծրունուն, քանզի վերջինս այն կարծիքին էր, թե «Թիւրքիան Անգլիայի կամ Ռուսաստանի ստորադրեալ վասալն էր երեւում, որին ամէն րոպէ կարող էին հրամայել՝ Հայաստանին ազատութիւն տալ, եւ նա պիտի տար անպայման»[2]: Եվ իրոք, հիշյալ տերությունների մասին այս թյուր ըմբռնումը հայ ազատագրական պայքարի տարանջատ ընթացքի կարևոր պատճառներից մեկն էր, քանի որ հայտնի է այդ պայքարի հույսով մեծ տերությունների միջամտությանն հասնելու հայ քաղաքական գործիչների և ապա՝ կուսակցությունների անհիմն համոզումը: Դա հաստատում է նաև Խանազատը, գրելով, որ շուտով իջնում է հայ ժողովրդի ոգևորությունը և այն համոզումն է առաջ գալիս, որ անհրաժեշտ է բուլղարացիների օրինակով՝ ապստամբական շարժումներ առաջացնեն, որպէսզի մեծ պետութիւնները առիթ ունենան միջամտելու ի պաշտպանութիւն հայերի»[3]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 61:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 61-62:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 62:

Իսկապես, Խրիմյան Հայրիկի, Գամառ-Գաթիպայի (Ռ. - Պատկանյան), Ռաֆու և այլոց գաղափարների ազդեցության տակ հայությունը հակվեց դեպի այդ գաղափարը, առանց լուրջ վերլուծելու և իր համար պարզելու այն խիստ կարևոր հարցը, թե ինչ պետք է հասկանալ ապստամբական շարժումներ ասելով: Եվ միանգամայն տրամաբանական են հնչում նրա հետևյալ հարցադրումները՝ «Ներկայումս կարդալով Գամառ - Գաթիպայի եւ մանաւանդ Ռաֆֆու չափազանց մանկամիտ եւ ոչ մի քննադատութեան չդիմացող յեղափոխական ծրագիրները, մարդ զարմանում է, թէ ինչպէս կարող էին լուրջ, հասարակական ու գրական բարձր դիրք ունեցող մարդիկ ոգեւորվել ու տարուել այդ աշխատութիւններով»[1]: Դրանց յուրովի պատասխանելով, Խանազատը գտնում է, որ հայ ազգն իր մանուկ հասակն էր ապրում, իսկ մանուկի ոգևորությունը ներելի է: Հասկանալի է, որ այստեղ խոսքը գնում է հայ ժողովրդի, կամ ավելի ճիշտ նրա ղեկավարների քաղաքականության մեջ մանուկ լինելու մասին, որը գեղարվեստական ստեղծագործությունները համարել էր քաղաքական ծրագրեր և առաջնորդվել դրանցով: Եվ սա հատուկ էր նաև Հնչակյան կուսակցությանը:

Հայ ազատագրական պայքարի վերելքի դրդապատճառների մեջ չանտեսելով տնտեսական գործոնը, Խանազատն այնուհետև դրա վերելքը պայմանավորում է ռուս հեղափոխական նարոդնիկների գաղափարական ազդեցությամբ: Դա ինքնին ենթադրում է, որ **այդ պայքարը չի ձևավորվել տեղական պայմանների ուսումնասիրության և դրա հիման վրա քաղաքական ծրագրերի մշակման արդյունքում:** Նարոդնիկների ազդե-

---

[1] Տե՛ս նույն տեղում:

ցության առումով Խանազատը մի հետաքրքիր տեսակետ է առաջ քաշում: Նա գտնում է, որ հայ ուսանողները տարվելով ռուսական բռնապետությունը տապալելու նարոդնիկների գաղափարներով, չնչին բացառությամբ չէին գնում նրանց հետ աշխատելու, այլ՝ իրենց հայացքն ուղղում էին դեպի Արևմտյան Հայաստան: Ստացվում է, որ նրանք արհեստականորեն փորձում էին Արևմտյան Հայաստանում տեղայնացնել բոլորովին այլ իրականության մեջ և հողի վրա ձևավորված գաղափարներ: Իսկ թե ինչու էին նրանք ընտրել այդ և ոչ թե Ռուսաստանի դեմ պայքարում նարոդնիկներին միանալու ուղին, Ռ. Խանազատը բացատրում է նրանով, որ հայերը բնածին ազգայնական էին, որի հետ դժվար է համաձայնել՝ հաշվի առնելով նրանց գրեթե 600-ամյա գերությունը: Այդ ընթացքում նրանք ավելի շատ ապավինում էին օտարին, քան թե սեփական ուժերին, որը ազգայնականների թիվ մեկ խնդիրն է: Թերևս կարելի է համաձայնել մյուս պատճառի հետ, ըստ որի՝ Ռուսաստանն իրենից ներկայացնում էր հզոր մի պետություն, որին տապալելը դյուրին խնդիր չէր, մանավանդ, որ այնտեղ արդեն իշխում էր ռեակցիան և նարոդովոլցիներն արդեն հուսախաբ էին եղել իրենց գործելավոճից: Ահա այս պատճառով, ըստ նրա, այն կարծիքն էր իշխում, որ հետամնաց և ռուս-թուրքական պատերազմից հետո «այնպէս ջախջախուած, այնպէս ոչնչացած» Թուրքիային տապալելը դյուրին խնդիր էր: Թյուր համոզմունք, որը չունի արդարացման ոչ մի հիմք. նարոդնիկական մարտավարությամբ տապալել մի երկրի իշխանություն, առանց խորամուխ լինելու նրա ներքին էության մեջ, առանց ըմբռնելու այն դիրքորոշումները, որոնք ունեին շահագրգիռ տերությունները Թուրքիայի նկատմամբ: Որ համակ միամտություն էր բուրում նրանց մտածելակերպից, երևում է նաև

Խանազատի հետևյալ վկայությունից. «Շատ լավ յիշում եմ, որ դուրս էին եկել մարդիկ, նոյնիսկ զինուորականի աստիճանով, որոնք ամենայն լրջութեամբ ու վստահութեամբ խոստանում էին մի քանի հարիւր զինուորներով գնալ եւ մի քանի օրուան մէջ - Վանը վերցնել:

Թիւրքիայում աշխատելու պայմանները ռուսահայերի երեւակայութեան մէջ նամանաւանդ հեշտացնում էին այն խիստ տարածուած համոզումով, թէ մեծ պետութիւնները, եւս առաւել Անգլիան, առիւծի պէս կանգած են հայերի թիկունքում եւ մի աննշան առիթի են սպասում, որպէսզի վրայ հասնին եւ թիւրքերին դուրս վռնդելով հայկական նահանգներից, ազատ Հայաստան ստեղծեն»[1]:

Այնուհետև Խանազատն իրավացիորեն նկատում է, որ մարդիկ այնքան էին տարվել Անգլիայի միջամտության հույսով, որ անտեսում էին վերջինիս և Թուրքիայի միջև կնքված գաղտնի դաշնագիրը, որով Կիպրոսը խլած Անգլիան պարտավորվում էր Թուրքիային պաշտպանել Ռուսաստանի ոտնձգություններից: Ավելացնենք, որ նրանք մոռանում էին նաև, որ 16-րդ հոդվածը 61-ի վերածվեց և չիրականացավ նույն Անգլիայի մեղքով: Այս բոլորը մոռացվում էր, իսկ թե ինչու, որովհետև «Այսպէս եւ այսչափ էր միայն հայ ղեկավար մտաւորականութեան դիւանագիտական ամբողջ ըմբռնումը մեր նորագոյն պատմութեան սկզբին»[2]:

Խանազատի այս ընդհանրացումն ունի հայեցակարգային նշանակություն:

---

[1] Տե՛ս նույն տեղում. էջ 64:
[2] Տե՛ս նույն տեղում:

Այնուհետև նա իր հուշերում անդրադառնում է Բեռլինի վեհաժողովից հետո Երևանում ստեղծված մի գաղտնի կազմակերպության գործունեությանը, որն իր առջև նպատակ էր դրել ազատագրել Արևմտյան Հայաստանը: Ըստ նրա, այս խմբակի հիմնադիր-ղեկավարներ բժիշկ Լևոն Տիգրանյանը, փաստաբաններ Վասիլ Եղիազարյանը, Ռուբեն Ջալալյանը, Տրդատ - Վարդանյանը, ապրանքներ տեղափոխող ընկերության նախագահ Թովմաս Միերյանը, բացի վերջինից, համալսարանական կրթության տեր անձնավորություններ էին և հիմնականում աշխատում էին գաղափարական նախապատրաստման ուղղությամբ, «մտքեր պատրաստելու» ապագա ապստամբության համար: Խումբը Բ. Թավաքալյանին, Դարալագյազի Տեր Գրիգորին և էլի ուրիշների ուղարկում է Արևմտյան Հայաստան՝ տեղի պայմաններին ծանոթանալու համար: Խմբի մեջ էր նաև Սամսոնը՝ Ռաֆու ապագա հերոս Վարդանը: Արևմտյան Հայաստան առաքվածները Ալաշկերտում զբաղվում են քարոզչությամբ, սակայն կառավարությունն իմանում է այդ մասին և նրանք ձերբակալվելուց խույս տալով վերադառնում են Երևան: Ահա այս Թավաքալյանի ազդեցությամբ էլ Խանազատը Երևանի Դասական գիմնազիան ավարտելուց հետո անցնում է Թիֆլիս՝ տեղի ռեալական դպրոցում սովորելու: Այս խումբը երկար չի գոյատևում և նրա ղեկավարները մատնության հետևանքով ձերբակալվում են ու աքսորվում Ռուսաստանի տարբեր քաղաքներ: Խմբի պատմությանն այս փոքրիկ անդրադարձը խոսում է այն մասին, որ իսկապես 1880-ական թթ. վերջերին հայ ազգային ազատագրական պայքարը զարթոնք էր ապրում և Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցի շուրջ ձևավորվում էր ոչ թե արևմտահայ, այլ համահայության ազգային-ազատագրական պայքարը:

Խանազատը բավական հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում ռուսական իշխանությունների կողմից հայերի նկատմամբ հալածանքների մասին և հրապարակային հարց հնչեցնում, որը, կարծում ենք, այսօր էլ արդիականություն ունի. «Ռուսաց կառավարութեան հալածանքը, - գրում է նա, - Թիւրքիայում ազատ Հայաստան ստեղծել ցանկացողների դէմ, առաջին անգամից մեծ իրարանցում առաջացրեց հայ հասարակութեան շրջանակներում: Մարդիկ չէին կարողանում հասկանալ, թէ ինչպէս կարող է «Հայկական հարցի»հեղինակ կառավարութիւնը հակառակ լինել այժմ այդ հարցին»[1]: Այս հարցադրումն այսօր էլ հաճախ է հնչում՝ կապված այս կամ այն առիթով Ռուսաստանի մեր հանդեպ ունեցած քաղաքականության դիրքորոշման փոփոխության հետ, որը վկայում է այն մասին, որ իրականում շատ բան չի փոխվել և որ հայ քաղաքական միտքն այն օրերի համեմատ քաղաքականապես այնքան էլ շատ չի հասունացել:

Ճշմարիտ է, թեև հատկապես 1894թ. ցարական կառավարության կողմից հայկական ծխական դպրոցների փակումը հակառուսական տրամադրություններ առաջացրեց և ինչպես վկայում է Խանազատը՝ հայ երիտասարդներին տրամադրեց իր դեմ, բայց հայոց քաղաքական զարգացումները ցանկացած հայանպաստ արտահայտության պահին հետագայում էլ ընթանում էին ռուսական աշխարհակալական շահերին տրվելու միտումով՝ առանց լուրջ հաշվեկշռի ենթարկելու դրանց վնասը հայ դատին: Սա է պատմական անողոք ճշմարտությունը:

Ռ. Խանազատը բավական անաչառ է գնահատում Մ. Փորթուգալյանի գործունեությունը, մանավանդ նրա «Արմենիայի»

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 67:

ոգևորիչ նշանակությունը հայ երիտասարդության համար: Բայց չնայած դրան՝ Մ. Փորթուգալյանն, ըստ նրա, հիասթափեցնում է այդ նույն երիտասարդությանը, երբ թերթում հայտարարություն է տպագրում այն մասին, որ իր նպատակն է «մեծ զարկ տալ հայ վաճառականությանը»[1]: Սա հեղինակը բացատրում է այն հանգամանքով, որ Մ. Փորթուգալյանն իր էությամբ հեղափոխական չէր, այլ՝ լիբերալ դեմոկրատական գաղափարախոսության հետևորդ, բացի այդ՝ ուներ դրամ հայթհայթելու խնդիր: Այս ամենով հանդերձ, Ռ. Խանազատն այն տեսակետն է հայտնում, որ «Արմենիան»չդարձավ վաճառականների թերթ, այլ շատ հեղափոխական և այն աստիճանի, որ արգելվեց նրա մուտքը Թուրքիա և Ռուսաստան[2]:

Հետաքրքիր է նաև նրա այն տեսակետը, որ «Արմենիայի»երիտասարդների վրա թողած ազդեցությունն իր նպաստն ունեցավ հեղափոխական կազմակերպություններ ստեղծելու գործում և չի սխալվում: Չմոռանանք, որ նախ՝ Մ. Փորթուգալյանի աշակերտները Վանում ստեղծեցին Արմենական կուսակցությունը: Եվ հետո՝ Խանազատի վկայությամբ, այդ նույն անձնավորության թերթն իր նպաստն է ունենում, որ ինքը, Գաբրիել Կաֆյանը, Մկրտիչ Մանուչարյանը և Նիկոլայ Մատինյանը, որոնք Ժնևում համալսարանական կրթություն էին ստանում, տարվեն հեղափոխական կազմակերպություն ստեղծելու գաղափարով: Հետաքր-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 67:

[2] Այս և հայ ազգային-ազատագրական պայքարի վերաբերյալ Մ. Փորթուգալյանի ու նրա «Արմենիայի» արտահայտած տեսակետները մանրամասն և խորությամբ վերլուծված են մեր երկու ստվարածավալ մենագրություններում, տե՛ս Սարգսյան Ս., «Արմենիան» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում, Ե., 2014 և Մկրտիչ Փորթուգալյանի հասարակական-քաղաքական կյանքը, Ե., 2018:

քիր է նաև այն, որ նույն Խանազատի վկայությամբ Փարիզի և - Մոնպելյեի շատ հայ ուսանողներ հոդվածներ էին տպագրում «Արմենիայում», որոնցից հայտնի էր հատկապես թավրիզեցի - Լեոնենցը՝ Ավո Նազարբեկյանը: Վերջինս Մարիամ Վարդանյանի հետ 1886թ. գալիս են Ժնև, ուր հաջորդ տարի վերոհիշյալ անձանց և վերջիններիս խորհրդակցությունների արդյունքում էլ հենց ծնունդ է առնում Հնչակյան կուսակցությունը: Գ. Կաֆյանի կողմից խումբը համալրվում է Մոնպելյեից եկած զգալի թվով ուսանողներով, որոնց մեջ էին Գևորգ Ղարաջյանը (հետագայում բոլշևիկ՝ Արկոմեդ անունով), Քրիստափոր Օհանյանը, Պողոս Աֆրիկյանը, Մաթևոս Շահազիզյանը և ուրիշներ: Հետաքրքիր է Խանազատի այն տեղեկությունը, որ Ա. Նազարբեկյանն առաջարկում է Մ. Փորթուգալյանին՝ նախաձեռնել հեղափոխական կազմակերպության ստեղծումը, ժամանակավորապես ստանձնել դրա գանձապահի պաշտոնը և գումարներ հավաքել նորաստեղծ հեղափոխական կազմակերպության համար: Բայց վերջինս մերժում է, թերթում տպելով և՝ Նազարբեկյանի առաջարկը և՝ իր մերժումն այն պատճառաբանությամբ, որ ինքն է նոր կազմակերպություն ստեղծում, խորը հիասթափություն և զայրույթ է առաջացնում հայ ուսանողության մեջ: Նազարբեկյանը գրում է «Հայակեր քամելեոնը» ֆելիետոնը, որը նրա կողմնակիցները տպագրում և տարածում են սմենուր: Անհրաժեշտ ենք համարում որոնել և պատասխանել այն հարցին, թե ինչու է Մ. Փորթուգալյանը մերժում այդ առաջարկը: Պատճառն, ինչպես նշեցինք, ըստ Խանազատի, Փորթուգալյանի կողմից նոր կազմակերպության ստեղծումն էր, որը շուտով ի հայտ եկավ «Հայրենասիրաց միություն» անունով, «որի նպատակն էր՝ Հայաստանից պատանիներ բերել Եւրոպա, կրթել, ուսում տալ

նրանց, որպէսզի նրանք, հայրենիք վերադառնալով, բարեկարգեն երկիրը»[1]:

Մ. Փորթուգալյանի նման վերաբերմունքը սակայն, ուներ մեկ այլ պատճառ: Ի տարբերություն եվրոպահայ ուսանողության, որոնք երբևէ նույնիսկ չէին էլ եղել Արևմտյան Հայաստանում, Փորթուգալյանն այդ միջավայրի ծնունդ էր, տարիներ շարունակ գործել էր Օսմանյան բռնակալ կայսրության դժնդակ պայմաններում, ճշգրիտ գաղափար ուներ տեղի պայմանների մասին և վստահաբար գիտեր, որ այն գաղափարները, որոնցով տոգորված էին նազարբեկյանները, Արևմտյան Հայաստանում կյանքի կոչելը տվյալ ժամանակաշրջանում գործնականում անհնարին էր: Անհրաժեշտ էր նախ՝ գաղափարապես նախապատրաստել ժողովրդին, զինել հանուն ինքնապաշտպանության և ոչ թե հեղափոխության, որը դեռ չէր հասունացել և որի համար անհրաժեշտ նախապայմանները դեռևս բացակայում էին: Պատահական չէ, որ այս ըմբռնումներով էին Վանում գործում նրա աշակերտներ արմենականները՝ Մ. Ավետիսյանի գլխավորությամբ: Ահա սա էր մերժման բուն պատճառը, որն էլ նպաստեց Հնչակյան կուսակցության ծննդին: Կուսակցություն, որի ստեղծման մանրամասների մասին Խանազատը բավական հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում արդեն իր հուշերի հաջորդ գլխում: Մենք զերծ ենք մնում այդ մանրամասներին անդրադառնալուց, որոնք վերաբերում են հատկապես Մ. Փորթուգալյանի մերժումից հետո դրամական միջոցներ հայթայթելու

---

[1] Նույն տեղում, էջ 71: «Արմենիա» թերթ 1885 և 1886 թթ.-երի մի քանի համարներում առկա են նմանաբնույթ հրապարակումներ, որոնցում Մ. Փորթուգալյանը հստակ ու միանշանակ հայտարարում է, որ այդպիսի կազմակերպություն արդեն կա (նկատի ունի Հայոց Հայրենասիրականը) և նորն ստեղծելու անհրաժեշտություն չի տեսնում:

գործընթացին: Պարզապես հարկ ենք համարում շեշտել, որ Հնչակյան կուսակցությունը հրապարակ է իջել բավականին յուրահատուկ ձևով:

Նախ ձևավորվում է Նախաձեռնող խումբ, որի ջանքերով պետք է գումարվեր ընդհանուր ժողով և որի աշխատանքների արդյունքում էլ պետք է հիմնադրվեր կուսակցությունը: Սակայն նախապես նրանք մշակեցին դրա ծրագիրը, ստեղծեցին կազմակերպության կորիզը և նոր միայն հայ երիտասարդութանը իրենց միանալ կոչ ուղղեցին: Ծրագիր մշակելու համար ստեղծվել էր մի հանձնախումբ, որի անդամներ էին ընտրվել Մ. Վարդանյանը, Ա. Նազարբեկյանը և Գ. Ղարաջյանը: Ստեղծվելիք կազմակերպության որդեգրվելիք գաղափարախոսական ուղղությունների մասին պատկերացում կազմելու համար հարկ ենք համարում մեջբերել Խանազատի հետևյալ վկայությունը.

«Այդ առաջին հայ յեղափոխական ընկերութեան ծրագիրն ու ոգին լաւ ըմբռնելու համար անհրաժեշտ է ի նկատի ունենալ հետեւեալ հանգամանքները.

Նախ այն, որ հայ յեղափոխական ընկերութիւն հիմնողներիս ամբողջ խմբակը ռուսահայեր էինք, կը նշանակէ՝ ամբողջապէս ռուս յեղափոխական հոսանքների ազդեցութեան տակ գտնուողներ: Իսկ այդ ժամանակ 1886թ. ռուս յեղափոխականների մէջ երկու գլխավոր եւ միմեանց դէմ խիստ մաքառող հոսանքներ կային. «**Նարոդովոյլցիներ» եւ «Մարքսիստներ**»:

Առաջինը թէեւ կատարել էր իր պատմական դերն ու խիստ անյաջողութեան հանդիպել Ալեքսանդր Բ. ի սպանութիւնից յետոյ, բայց եւ այնպէս նա դեռ իր զէնքերը վայր չէր դրել: Ընդհակառակը՝ Նարոդովոյլցիները իրանց դեռ բավական ուժեղ էին զգում. յեղափոխականօրէն տրամադրուած ռուս մտաւորակա-

նութեան մեծագոյն մասը, թէ՝ Ռուսիայում եւ թէ արտասահմանում՝ նրանց կողմն էր:

Երկրորդը՝ Մարքսիստների հոսանքը նոր էր սկսել երեւան գալ ռուս իրականութեան մէջ: Ռուս մարքսիստներին այդ ժամանակ կարելի էր լինում մինչեւ իսկ մէկ ձեռքի մատներով համրել: Դրանք էին՝ յայտնի տարագիրներ՝ Գ. Պլեխանով, Ա. Աքսելրոդ, Վերա Զասուլիչ, Դէյզ եւ ... իրենց գրաշար Ռայդչինը»[1]:

Խանազատի այս վկայությունը հանգեցնում է երկու կարևոր հետևությունների. ա) ստեղծվելիք կազմակերպության ծրագրային դրույթներն ամենևին չէին բխելու արևմտահայության իրավիճակի խորը վերլուծությունից, այլ՝ հիմնականում ռուսական հեղափոխական գաղափարների ազդեցության արդյունք էին, բ) նրանցում միախառնված էին լինելու նարոդնիկական և մարքսիստական գաղափարախոսությունները միաժամանակ: Այսպիսով, հայ հեղափոխական կազմակերպություն էր ի հայտ գալիս, որի ծրագրերը ամենևին կիրառելի չէին կարող լինել արևմտահայության համար, քանի որ Թուրքիայում Ռուսաստանից էլ ցածր մակարդակի վրա էր արդյունաբերությունը և բոլորովին ձևավորված չէր պրոլետարիատը: Դասակարգ, որն ըստ մարքսիզմի տեսաբանների սպասվելիք հեղափոխության շարժիչ ուժն էր: Իսկ նարոդնիկների հեղափոխական-ահաբեկչական գործունեությունն արդյունավետության առումով Ռուսաստանում իրեն բոլորովին չարդարացրեց, ինչը նշանակում էր, որ նույնը կարող էր լինել Թուրքիայում:

Հանձնախումբն, այնուամենայնիվ, վերոհիշյալ գաղափարախոսությունների միահյուսմամբ գրում է ծրագրի նախագիծը,

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 52:

որն էլ չնչին խմբագրումներով դառնում է Հնչակյան կուսակցության ծրագիրը: Ըստ հեղինակի, վեց բաժիններից բաղկացած այդ ծրագրին ծանոթանալիս հստակ եզրակացնում ես, որ նարոդնիկական և մարքիստական գաղափարական հիմքերի վրա կառուցվում էր հայության ազատագրման ծրագիրը, որը ժամանակի ընթացքում քննություն չբռնեց: Ծրագրում[1] առանձնացվում էին Հեռակա և Մոտակա նպատակները, որոնց չենք անդրադառնում, քանզի դրանք գիտական և ընթերցող շրջանակներին վաղուց հայտնի են: Խանազատը սակայն մի հետաքրքիր տեղեկություն է հաղորդում, որը չգիտես ինչու ցայսօր անտեսվել է և որը, կարծում ենք, շատ հետաքրքիր է ու կարևոր: Բոլոր ուսումնասիրություններում և նույնիսկ դասագրքերում որպես Հնչակյան կուսակցության Մոտակա նպատակ մատնանշվում է Արևմտյան Հայաստանի ազատագրումը: Իսկ ըստ Խանազատի՝ մոտակա նպատակը հետևյալ կերպ է ձևակերպված եղել. «Կուսակցութեան մօտակայ նպատակն է - կռիւ մղել՝ միապետական կարգերը տապալելու համար եւ նրանց փոխարինել հանրային ռամկավարական կարգերով»[2]: Այսինքն, փաստորեն, ծրագրում չի դրվել միայն միապետական Թուրքիան տապալելով արևմտահայությանն ազատագրելու խնդիրը, այլ նաև Ռուսաստանի ու Պարսկաստանի միապետական համակարգերը: Այս մասին վկայելուց հետո Խանազատը հետևյալ հարցադրումն է անում՝

---

[1] Հնչակյան կուսակցության ծրագրի տարբեր տարիներին, տարբեր խմբագրություններով լույս տեսած բոլոր տարբերակներին ծանոթ ենք: Դրանցից կարևորում ենք Ծրագիր Հնչակեան Սոցիալիստ-Յեղափոխական կուսակցութեան, Ժնև, 1891, Ծրագիր Սոցիալ-դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան (Տաճկաստանի համար), Կ. Պոլիս, 1910 և այլն:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 56:

ինչպիսի գործունեություն պետք է ծավալեր կուսակցությունը, որպեսզի հայության երեք հատվածներում էլ կարողանար իր նպատակն իրագործեր: Պարզ է, որ դա անհնարին էր: Իր առաջադրած հարցին նա ինքն էլ պատասխանում է. «Ծրագրի 3-րդ - բաժինը կարդալով, մենք տեսնում ենք, որ 2-րդ բաժնի մէջ նշանակուած մօտակայ նպատակը դեռ էլի մի որոշ աստիճանով հեռաւոր նպատակ է հանդիսանում եւ որ նրանից մի ավելի շատ **մօտակայ նպատակ կայ,** որը **պատմական մի առաջնակարգ անհրաժեշտութիւն է իրանից ներկայացնում:**

Այդ պատմական առաջնակարգ անհրաժեշտութիւն ներկայացնող մօտակայ նպատակը **Թիւրքիայում անկախ Հայաստան ստեղծելն է**»[1]:

Ստացվում է, որ անկախ Հայաստանի ստեղծումը մոտակա նպատակների մեջ առաջնահերթն էր, իսկ կուսակցության մոտակա նպատակն, ինչպես նշեցինք երեք միապետությունների տապալումն էր: Սա կարևոր դիտարկում-պարզաբանում է՝ Հնչակյան կուսակցության պատմության անդրադարձներում: Իսկ որ դրա կարիքն իսկապես կա, երևում է ծրագրի հետևյալ հոդվածներից.

«1) Որ հայ յեղափոխական գործունէութիւնն **այսօր** բացառապէս նուիրուէ **թիւրքահայ** ժողովրդային դատի պաշտպանութեան ու լուծման, համաձայն **մօտակայ նպատակի**.

2) Որ ուրեմն, յեղափոխական գործունեութեան ասպարէզն է Թիւրքա - Հայաստանը.

3) **Որ հայ ժողովրդի ու Հայաստանի ճակատագիրը միանգամից ընդմիշտ պէտք է զատուէ թիւրքական կայսրութեան**

---

[1] Տե՛ս նույն տեղում:

ճակատագրից, ըստ որում պատմական պահանջ ու անհրաժեշտություն է ներկայացնում-հայ ազգային անկախությունը, որն էլ, այդպիսով կազմում է մոտակայ նպատակի մի հիմնական մասն ու առաջին պայմանը»[1]:

Թուրքիայում այս նպատակն իրականացնելուց հետո, որն ընդ որում, ինչպես խոստովանում է Խանազատը, պետք է իրականանար նարոդնիկներից փոխառնված պրոպագանդա, ագիտացիա, տեռոր և յոյներից ու բուլղարներից փոխառնված՝ ասպատակային գնդերի կազմակերպում մարտավարությամբ, նույն ձևով այնուհետև պետք է ազատագրվեին Ռուսահայաստանն ու Պարսկահայաստանը, որոնք կցելով «արդէն ստեղծուած անկախ Հայաստանի հետ, մի ընդարձակ հայկական պետութիւն կազմել:

Այլ խոսքով՝ ծրագիրը ձգտում է հին անկախ Հայաստանը վերականգնել իր վաղեմի պատմական ընդարձակ սահմաններու մէջ»[2]:

Այսպիսով, Ռ. Խանազատը բավական հստակություն է մտցնում Հնչակյան կուսակցության ծրագրային դրույթների մեջ, որոնք օգնում են ավելի ճիշտ հայեցակարգային մոտեցում մշակել այդ քաղաքական կազմակերպության մոտակա նպատակների վերաբերյալ: Ծրագրի 5-րդ բաժնում, ուր առկա է եղել հիշյալ ձևակերպումը, խոսվում է նաև հեղափոխական պայքարում դաշնակից այլազգիներին գրավելու մասին, որոնք էին ասորիները, քրդերը, մակեդոնացիները, հույները և այլն: Այնուհետև Ռ. Խանազատը մի հետաքրքիր դիտարկում էլ է անում, որի հետ կարելի է համաձայնել. «Ճիշտ 40 տարի է անցել այն օրուանից

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 57:
[2] Տե՛ս նույն տեղում:

եւ ինչպէս ասում են, բազմաքանակ ջրեր են հոսել ու անցել կամուրջների տակից: Եւ եթէ մենք փորձենք, ներկայ ժամանակի ու պայմանների ակնոցներով նայիլ այդ ծրագրի վրայ, անշուշտ շատ թերի կողմեր պիտի գտնենք: Բավական է նկատել հէնց այն, որ Թիւրքիայի սահմաններում աշխատող սոցիալիստ կուսակցութեան ծրագիրը ո՛չ մի խոսք չի ասում թիւրք ժողովրդի մասին, կարծես թէ այդ երկրում թիւրք ժողովուրդ իսկի չի էլ ապրում»[1]: Իսկապես, կարծես թե Թուրքիայի տերն ու տնօրենը հայերն էին, որոնց պետք է զատեին թուրքերից, չհաշված այն, որ սոցիալիզմի համար պայքարում մարքսիզմը ենթադրում է բոլոր աշխատավորների միավորում:

Ռ. Խանազատի հուշերի մնացյալ մասը չենք վերլուծում, քանզի դրանք ավելի շատ սկզբնաղբյուրային, քան թե հայեցակարգային նշանակություն ունեն: Միայն ավելացնենք, որ դրանք որպես սկզբնաղբյուր հետաքրքրական են Հնչակյան կուսակցության ձևավորման յուրօրինակ պատմության լուսաբանման առումով: Այդ յուրօրինակությունը կայանում է նրանում, որ սկզբնական շրջանում այդ կուսակցությունն իրենից ներկայացրել է գործիչների մի փոքրիկ խումբ, որն հրատարակել է «Հնչակը» (առաջին համարը լույս է տեսել 1887թ. նոյեմբերին) և որի շուրջ աստիճանաբար համախմբվել են շատ երիտասարդներ ու վերածել այն կուսակցության: Նորաստեղծ այդ կուսակցությունն էլ խմբի հրատարակած թերթի անունով կոչվել է Հնչակյան: - Փաստորեն, Ռ. Խանազատի հուշերում ներկայացվող գործըն-

[1]Տե՛ս նույն տեղում:

թացի նկարագրությամբ[1], Հնչակյան կուսակցությունը հրապարակ չի իջել որպես ընդհանուր ժողովի արդյունքում հիմնադրված կուսակցություն (ինչպես դա ներկայացվում է մասնագիտական գրականության մեջ) և կուսակցության նկարագիր է ստացել ոչ կոնկրետ 1887թվականին, այլ՝ավելի ուշ և շարունակական գործընթացի արդյունքում:

Հարություն Ճանկյուլյանը[2] (1856–1915) Հայ ազգային-ազատագրական պայքարի և Հնչակյան կուսակցության առաջին սերնդի այն նվիրյալներից էր, որ հավասարապես հերոսական պայքար էր մղում թե՛ գաղափարական և թե՛ գործնական ասպարեզներում: Վանում ծնված Հ. Ճանկուլյանը պատանեկան

---

[1] Իսկ Ռ. Խանազատի հուշերի հավաստիությունը չենք վիճարկում, քանի որ հեղինակը եղել է այդ ամբողջ գործընթացի ոչ շարքային մասնակիցն ու ակտիվ գործիչներց մեկը:

[2] **Հ. Ճունկլյանը** 1890թ. Գում Գափուի ցույցի առաջնորդներից էր, որի համար դատապարտվել է մահապատժի: Վճիռը հետո փոխվել է ցմահ բանտարկությամբ: 1897-ից աշխատել է հաշտեցնել հնչակյան երկու թևերը: Այդ առիթով 1698 թ. Կահիրեում հրապարակում է «Դիմակավորներ» գրքույկը, որտեղ սուր քննադատում է վերակազմյալ թևին: Փորձել է համագործակցություն ստեղծել հնչակյանների և դաշնակցականների միջև, սակայն՝ ապարդյուն: 1908թ.-ից հաստատվում է Կ.Պոլսում, պատասխանատու պաշտոններ վարում հնչակյան մարմիններում: Ընտրվել ազգային երեսփոխան: 1915թ. հունիսի 15-ին նահատակվել է աքսորի ճանապարհին, Մեծ եղեռնի ժամանակ

տարիքից Մկրտիչ Խրիմյանի ազդեցության ներքո, հետաքրքրվում և ոգևորվում էր ազատագրական պայքարի գաղափարներով: Ակտիվորեն մասնակցում է 1870-ական թթ. Վասպուրականում գործած «Սև Խաչ»գաղտնի հեղափոխական կազմակերպության գործունեությանը, ապա անդամագրվում է Հնչակյան կուսակցությանը և մինչև կյանքի վերջին րոպեն հավատարիմ մնում և ծառայում դրան: Հատկապես հետաքրքիր է այն փաստը, որ նա արևմտահայ լինելով հանդերձ, դատապարտել Վերակազմյալ հնչակյանների գաղափարախոսությունն ու գործելաձևերը: Եվ դա այն դեպքում, երբ վերջիններս քաջածանոթ լինելով Արևմտյան Հայաստանում տիրող դժնդակ կացությանը, ավելի իրատեսական պատկերացում ունեին իրավիճակի վերաբերյալ և պայքարի ավելի զուսպ և հավասարակշռված միջոցներ էին առաջարկում:

Իր անցած հեղափոխական ուղու մասին Հ. Ճանկուլյանը թողել է հուշեր[1], որոնք ավելի շատ սկզբնաղբյուրային արժեք ունեն: Սակայն դրանցում կան նաև հայ ազգային-ազատագրական պայքարի հարցերին առնչվող գնահատելի տեսակետներ, որոնք էլ կփորձենք ներկայացնել ստորև:

Թեպետ թեմայի կանխագծված շրջանակներից դուրս է, բայց կարևոր է 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմին հաջորդած Վանում տիրող իրավիճակի քննությունը նրա կողմից: Առաջին հայացքից կարող է զարմանալի թվալ, բայց դեպքերին ականատես լինելու արդյունքում ծնված նրա տեսակետով այդ պատերազմով արևմտահայերից և թուրքերից ավելի շա-

---

[1] Տե՛ս Ճանկուլեան Յ. Կ., Յիշատակներ հայկական ճգնաժամէն (պատկերազարդ), մասն Ա. եւ Բ., մասն Գ., մասն Դ., Վերջին հատոր. Կ. Պոլիս, 1913:

հագրգռված են եղել քրդերը[1]. «Վասպուրականի հայութիւնը լաւ գիտէր թէ այդ պատերազմին պատճառաւ պիտի հարստահարուի, կեղեքուի, տնտեսապէս պիտի քայքայուի, և անլուր չարչարանքներու ենթարկուելէն վերջ շատ հավանական էր որ իր կորսնցուցած նիւթական դիրքին հետ օր մ'ալ իր կեանքը վրայ պիտի տար: Վասպուրականի լեռն ու ձորը, դաշտն ու բլուրը և - փողոցները անմեղ Հայերու արիւնով պիտի ներկուէին: Ասոնք բոլորն ալ ճակատագրական էին Վասպուրականցիին համար, ուզէր չուզէր պէտք էր համակերպէր, ուրիշ միջոց չկար և ոչ ալ փախուստի ճամբայ:

Թուրք տարրը տարբեր տեսակէտով ցաւոք սրտի լսեց պատերազմի յայտարարութիւնը: Թուրք զինուորը պէտք էր երթար և կռուէր. ինչ վստահութիւն և ապահովութիւն թէ ողջ պիտի դառնար պատերազմի դաշտէն դէպի իր հայրենիքն և ընտանիքի ծոցը: Ուրեմն Հայ և Թուրք տարրի վիշտերն և կսկիծներն այնչափ շատ իրարմէ չէին տարբերեր:

Վասպուրականի վաչկատունները բոլորովին կը տարբերէին Հայ և Թուրք տարրէն: Անոնք ուրախութեամբ և սրտի հրճուան-

---

[1] Խորհրդահայ պատմագիտությունը կիսավայրենի և չափազանց հետամնաց լինելու պատճառաբանությամբ քրդերին անմեղսունակ էր որսկել ու «ելնելով կոմունիստական ինտերնացիոնալիզմի սկզբունքներից»՝ համարում էր նրանց սոսկ կույր գործիք թուրքերի ձեռքին: Դրանով անուղակիորեն արդարացնում ոչ միայն XIX դարի երկրորդ կեսին և հետագա տարիներին հայերի նկատմամբ նրանց կատարած ոճրագործությունները, այլև ոգևորված ու ընդգծված ջանասիրությամբ առանձնացող նրանց դերակատարությունը Հայոց եղեռնի ժամանակ անմեղ տասնյակ հազարավոր հայերի սպանելու, հոշոտելու և նրանց հողերին և ունեցվածքին բռնությամբ տիրանալու եղկելի գործընթացներում: Ավելի մանրամասն տե՛ս Հովհաննիսյան Ն., Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը. Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում. Ե., 2016:

քրվ լսեցին այդ յայտարարութիւնը, որովհետեւ աւարառութեան, կեղեքման, ճնշումներու, ոճրագործութեան ու մասնավորապէս - Հայ տարրը ոչնչացնելու բերկրառիթ ժամն հնչած էր: Քիւրտը այլ եւս իբր պարզ մահկանացու չպիտի նկատուէր, Թուրքին նման իբր պահեստի զինուոր չպիտի երթար թշնամիին դեմ կռուելու: Քիւրտին ըրած մեծ զոհողութիւնն էր որ ինքնաբերաբար պատերազմի դաշտը կ'երթար ու ինքն իբր առանձնաշնորհեալ մը իր լեռներէն մինչեւ բանակ հասնիլն ազատ էր իր ուզածին պէս շարժելու, ապրելու, մէկ խոսքով իր քմահաճոյքին գոհացում տալու, կարծես իրեն ֆէրման մը տրուած ըլլար. հետեւաբար տուժողն ով պիտի ըլլար. Հայը. չէ որ ան «ֆլլայ»էր, և խեղճ հայուն հարստութիւնն և տունն ու տեղը «հէլալ»էր, մանաւանդ այն պարագային որ թուրքը կ'երթար Մոսկոֆին դէմ կռուելու»[1]:

Այս երկար մեջբերումը հայ, թուրք և քուրդ տարրերի վերաբերմունքի առումով բոլորովին նոր հայեցակարգային մոտեցում է հուշում ռուս-թուրքական պատերազմի նկատմամբ: Ըստ այդմ՝ հայը ամենևին շահագրգռված չէր այդ պատերազմով, որովհետև նրա համար անորոշ էր դրա ապագան, հասարակ թուրք ժողովուրդը նույնպես այն չէր ուզում, որովհետև տվյալ իրավիճակում, ի տարբերություն ռուսական իշխանությունների, ծավալապաշտական խնդիրներ չէր հետապնդում: Մնում էր վաչկատուն քուրդը, որին թերևս ավելի շատ հետաքրքրում էր իր թալանն ու հարստահարությունը, քան հաղթանակը ռուսների դեմ, որովհետև թե ում տիրապետության ու թողտվության պայմաններում նա կգբաղվեր իր ավարառությամբ, այնքան էլ մեծ տարբերություն չկար: Հ. Ճանկուլյանը լինելով այս ամենի ականատե-

---

[1] Տե՛ս Ճանկուլեան Յ. Կ., նշվ. աշխ., էջ 9-10:

սը, վկայում է նաև, որ այնքան էլ միանշանակ ճշմարտացի չէ այն թեզը, թե հայերն անպայման ձգտել են մտնել ռուսական տիրապետության տակ: Եվ առհասարակ, այդ ձգտումը նախորդ դարերում էլ եղել է որոշ (բայց ոչ բոլոր) հոգևոր և քաղաքական դեմքերի մտորումների կիզակետում՝շատ հաճախ հենց ռուսական իշխանությունների կողմից ներշնչված: Առհասարակ, սարևմտահայության մոտ ավելի շատ առկա է եղել անկախության, սեփական պետությունն ունենալու (երբեմն ամբողջովին անկախ, երբեմն ինքնավարության տեսքով) ձգտումը: Իսկ ավելի ուշ այդ մղումները փոխանցվեցին հայ քաղաքական կազմակերպություններին: Ինչ վերաբերվում է թուրքին, ապա նա քրդերի միջոցով հայերին վերացնելով, ցանկացել է մեջտեղից վերացնել մեծ տերությունների՝ իր վրա ներգործելու խաղաթղթերից մեկը: Սա ամենևին չի նշանակում, որ թուրքերն էլ այլ ելք «չունեին», այլ ավելի շուտ այն, որ մենք հատկապես՝մեծ տերությունների խոստումների նկատմամբ միշտ դյուրահավատ ենք եղել:

Չմանրամասնելով պատերազմից առաջ և նրա ընթացքում - Վասպուրականում տիրող իրավիճակի վերաբերյալ հեղինակի նկարագրությունները, ասենք միայն, որ իրավիճակը շատ ողբերգական էր: Որ այդ իրավիճակի անմիջական հետևանք ու արդյունք էր այնտեղ ազգային-ազատագրական մտքի զարթոնքը, որում, ըստ հեղինակի, քիչ դերակատարություն չեն ունենում նաև կովկասահայերը և հատկապես՝Վանի «Սև Խաչ» կազմակերպությունը: Իր իսկ արտահայտությամբ «մտքի զարթնումը»տեղի է ունենում համատեղ, որը նշանակում է, որ ճիշտ է այն հայեցակարգային մոտեցումը, ըստ որի 19-րդ դարի 70-80-ական թթ. սկզբնավորվում էր ոչ թե արևմտահայ, այլ՝ հայ ազգային ազատագրական պայքարը, որն, անշուշտ, պայմանավ

ված էր նախ և առաջ Արևմտյան Հայաստանի ազատագրման հիմնախնդրով:

Հ. Ճանկուլյանի հուշերը բավական հետաքրքիր և սկզբնաղբյուրային արժեքավոր տեղեկություններ են պարունակում Կ. Պոլսում իր ունեցած գործունեության, այնտեղ գործող գաղտնի կազմակերպության և վերջինիս Հնչակյան կուսակցությանը միավորվելու մասին: Ձեռնպահ մնալով նկարագրական մասերին անդրադառնալուց, փորձենք վերլուծել ու արժևորել Հնչակյան կուսակցությանը Հ. Ճանկուլյանի և Կ. Պոլսի կազմակերպության մյուս անդամների անդամագրվելու գործընթացն ու վերհանել այդ կուսակցության գործունեության վերաբերյալ նրա որոշ հայեցակարգային մոտեցումները: Հ. Ճանկուլյանի տեղեկությունների համաձայն՝ Կ. Պոլսի կազմակերպությունն ուներ - Վարիչ մարմին, որի մեջ մտնում էին Մարգար Մոմճյանը, Գրիգոր Աչըքպաշյանը, Հարություն Չաքրյանը, Հակոբ Սրապյանը և Երվանդ Պոյաճյանը: Այս մարմնի կազմը հետո փոխվում է և անդամներ են դառնում Մուրատը, Մոմճյանը, Աչըքպաշյանը, Անպարճյանը, Գըլճյանը և Ճանկուլյանը: Սկզբնական շրջանում Կ. Պոլսի գաղտնի կազմակերպությունը կապված էր Մ. Փորթուգալյանի «Արմենիայի» հետ, բայց շուտով հակվում է դեպի Հնչակյան կուսակցությունը: Ըստ Ճանկուլյանի՝ հնչակյանների հետ բանակցությունները նախաձեռնում է իրենց կազմակերպությունից Տերոյան ազգանունով մի անձնավորություն: Հասկանալի է, որ նման ցանկություն ունեին հնչակյան առաջին գործիչները ևս, քանզի իրենց կազմակերպությունն ընդլայնելու խնդիր ունեին: Հուշերից կարելի է ենթադրել, որ բանակցությունները տեղի են ունեցել 1890թ.-ին: Հնչակյաններից դրանց մասնակցում են Գ. Կաֆյանը, Ռ. Խանազատը, Հ. Մեղավորյանը

և Ս. Դանիելյանը: Հետաքրքիր է Հ. Ճանկուլյանի հատկապես հետևյալ տեղեկությունը. «Բանակցութիւնն սկսուեցաւ պաշտօնապէս և Վարիչ Մարմինը պնդեց իր տեսակէտին վրայ թէ Սոցիալիզմի վարդապէտութիւնը և գաղափարը մեզ համար անմարսելի է և մեր երկրին մէջ դեռ հող չունի:

Բանակցութիւնը տեւեց մօտաւորապէս երկու ամիս և վիճաբանութիւնները երբեմն շատ բուռն եղան: Ժողովատեղերնիս - Բանկալթի էր ու շատ ապահով տեղ մը: Բանակցութիւնը վերջ գտած էր, ծրագրին մէջ կարեւոր փոփոխութիւն մը մտցնելով համաձայն էինք, **Սոցիալիզմը հեռաւոր նպատակ թողլով**: - Հետեւաբար Պոլսոյ և գաւառներու մէջ ունեցած մեր կազմակերպութիւններով **Հնչակեան կուսակցութեան դրօշին մտած էինք, Հնչակեան անունը կրելով**:

Ուրեմն Հնչակեան կուսակցութիւնը որչափ որ 1887ին հիմնուած էր, բայց Թուրքիոյ մէջ պաշտօնապէս իր հիմը կը դնէր 1890ին»[1]:

Այսպիսով, ըստ Հ. Ճանկուլյանի տեղեկության, Հնչակյան կուսակցության ծրագրում սոցիալիզմի խնդիրը որպես հեռավոր նպատակ որդեգրելը պայմանավորված է եղել նրա և ընկերների ճնշումով: Սակայն, այս տեղեկությունը բացարձակ ճշմարիտ համարել հնարավոր չէ, որովհետև կուսակցության մեկ այլ հուշագիր Խանազատն իր հուշերում հայտնում է, որ սոցիալիզմը որպես հեռավոր նպատակ որդեգրվել է հենց Ժնևում՝ ապագա կուսակցության ծրագիրը ձևավորելու ընթացքում: Կարևորն այստեղ այնքան դա չէ, որքան այն, որ արևմտահայ գործիչներն հենց սկզբից հասկացել են Արևմտյան Հայաստանում տվյալ ժա-

---

[1] Տե՛ս Ճանկուլեան Յ. Կ., նշվ. աշխ., Մասն Գ., էջ 6-7:

մանակաշրջանում եղած պայմաններում այդ վարդապետության ժամանակավրեպությունը: Հ. Ճանկուլյանի հետ թերևս կարելի է համաձայնել այն հարցում, որ Հնչակյան կուսակցությունը Օսմանյան կայսրության տարածքում գործնականում սկսել է հիմնավորվել է 1890 թ.: Իսկ մինչև այդ թվականը այն իրենից ավելի շուտ ներկայացնում էր «Հնչակ» թերթի շուրջ համախմբված և աստիճանաբար մեծացող գաղափարակից համախոհների խումբ և, դասական իմաստով, դեռևս լիարժեք քաղաքական կուսակցության համարում չուներ: Դա հաստատվում է նաև Հ. - Ճանկուլյանի հետևյալ վկայությամբ. «Ծրագրէն վերջ կազմուեցաւ Կազմական կանոնագիրը: Ժողովին **Գոնֆերանս** կամ պատգամավորական ժողով անունը տալով, հետեւեալ կարեւոր որոշումները տրուեցան.

Խմբագրութիւն մը ընտրուեցաւ՝ Հնչակը հրատարակելու համար Ժընէվի մէջ, որուն խմբագրապետ ընտրուեցաւ Աւետիս Նազարբէկեան:

Հնչակեան կուսակցութեան կեդրոնը որոշուեցաւ Տրապիզոն, Կեդրոնական Վարչութիւնը պիտի բաղկանար երեք անդամներէ և որ ընտրուեցան Պետրոս Մարիմեան, Հմայեակ - Խուշպուլեան, ևն: Կեդրոնը պիտի հրատարակէր Մարտ անունով թերթ մը, իսկ Հնչակ պիտի ըլլար օրական և զուտ գաղափարական:

Պոլիս կը մնար Վարչական կամ նորէն Վարիչ Մարմինը: Որչափ որ իր գործունեութիւնը սահմանափակ չպիտի ըլլար, բայց նորէն պիտի ենթարկուէր Պոնտոսի Կեդրոնական Վարչութեան. Կեդրոնական Վարչութիւնը գաւառի մէջ հաստատելը արդէն այն նկատումով որոշուեցաւ որ երկրին և Պոլսոյ մօտ էր և հարկ չէր մնար որ երկրին մասնաճիւղերը ամիսներով սպասէին

Եւրոպայէն եկած իրենց նամակի պատասխանին կամ իրենց տրուած հրահանգներուն:

Կեդրոնական Վարչութիւնը Պոլսոյ Վարիչ Մարմնոյն հետ համախորհուրդ պիտի գործէր միշտ:

Ծրագրական և կազմակերպական գործեր այլ ևս վերջացած էին: Վարիչ Մարմինը սկսաւ իր ներքին գործերով զբաղիլ, իր մէջ ունենալով իբր օժանդակ կամ հիւր Խան Ազատեան, Շմաւոն (Գ. Կաֆյանը – Ս. Ս.), Մեղավորեան և Սիմէոն ընկերները: Իսկ քանի մը օրէն Շմաւոնը դէպ ի Փոքր Հայք ղրկելու որոշումը տուաւ»[1]:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ՝

ա. Հնչակյան կուսակցությունը թեև ձևավորվել էր 1887թ. - Լոնդոնի հիմնադիր համագումարում, սակայն Արևմտյան Հայաստանում գործնականում վերջնականապես հիմնավորվեց 1890թ.ին:

բ. 1890թ. Կ. Պոլսում տեղի ունեցած կոնֆերանսում ստեղծվել է Կենտրոնական վարչությունը, որը կոորդինացնում էր կուսակցության գործունեությունն ամբողջ Թուրքիայի տարածքում:

գ. Արձանագրվում է, որ «Հնչակը»Լոնդոնում լույս էր տեսնում որպես կուսակցության գաղափարական պաշտոնաթերթ, որի խմբագիրն էր Ավ. Նազարբեկյանը:

Այս ամենը նաև նշանակում էր, որ կուսակցական մարտավարական ուղղվածությունը որոշում էր կենտրոնական վարչությունը, որին ենթարկվում էր Կ. Պոլսի մարմինը:

Այս կոնֆերանսից հետո է, որ առարկայական է դառնում Հնչակյան կուսակցության գործունեությունը, որի առաջին խոշոր

---

[1] Տե՛ս Ճանկուլեան Յ. Կ., նշվ. աշխ., Մասն Գ., էջ 7-8:

դրվագը եղավ Գում-Գափուի ցույցը: Այդ ցույցի գլխավոր կազմակերպիչներից մեկը՝ Հ. Ճանկուլյանը ներկայացնում է դրա կազմակերպման դրդապատճառները, որոնք հետաքրքիր լինելով հանդերձ, խոցելի են: Ուստի հարկ ենք համարում դրանք ներկայացնել:

Անդրադառնալով Կարինի 1890թ. արյունոտ դեպքերին, ապա՝ Մուշի պատուհաս դարձած ավազակաբարո քուրդ ցեղապետ, աշխատավոր հայ մարդկանց հանդեպ բազմաթիվ հանցագործություններ կատարած Մուսա բեկի ապօրինի ազատ արձակմանը, Հ. ճանկյուլյանը զարգացնում է այն տեսակետը, որ կառավարությունը նպատակ ունի խստացնելու հայերի հարստահարության քաղաքականությունը. «Ամէն տեղ մեծ պիտի ըլլար լքումն և յուսահատութիւնը, եթէ երբեք Կառավարութեան հարուածին Հայոց կողմէ բուռն հակահարուած մը չյաջորդէր, եթէ Հայութեան ընդհանուր ժողովրդային զայրոյթը չգտնէր իր հզօր արտայայտութիւնը: Ահա այդ զայրոյթին արտայայտութիւնը պիտի ըլլար Պոլսոյ մէջ ցոյց մը ընել...»[1]:

Ակամա ծնվում է հետևյալ հարցադրումը՝ եթե հայության հակահարվածն իսկապես օրինաչափ էր, ապա այն միթե պետք է ցույցի բնույթ կրեր: Ցույցը ոչ թե հակահարվածի, այլ բողոքի արտահայտություն է: Ինքնին հասկանալի է, որ դրանով մեծ տեղ էր հատկացվում մեծ տերությունների միջամտությանն հասնելու ցանկությանը, քանի որ հակահարվածը, այն էլ Օսմանյան կայսրության նման երկրում, հնարավոր էր միայն զենքի միջոցով:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 9:

Այնուհետև, հեղինակը փորձում է հիմնավորել ցույցի անհրաժեշտությունը:

Ա. Եթե ի պատասխան Արևմտյան Հայաստանի մեջ տեղի ունեցած կոտորածներին Կ. Պոլսում հրապարակային ցույց չարվեր, ժողովուրդը կվիատվեր, իրեն միայնակ, անօգնական և անկարեկից կզգար: Ցույցը կարող էր ոգի հաղորդել հեղափոխական ծագող շարժմանը: Այնինչ, մեր կարծիքով, հակառակը պետք է մտածվեր՝ անզեն ցույցը Թուրքիայի նման ոստիկանական պետության պայմաններում անպայման նոր բռնությունների և զոհերի առիթ էր դառնալու, ինչը հանգեցնելու էր ոչ թե ոգևորության, այլ՝ հուսահատության:

Բ. Հայաստանում տեղի ունեցող կոտորածները Եվրոպային կարող էին տարբեր գույներով ներկայացվել, իսկ Կ. Պոլսում, եվրոպական դեսպանների աչքի առաջ կատարված ցույցը ուշադրություն կհրավիրեր Թուրքիայի վրա, քանի որ «միջազգային շահերու հանդէպ Կ. Պոլսոյ բացառիկ կարեւորութիւնը անծանօթ չէր ոչ ոքի»[1]: Իսկապես, ինչ աստիճանի միամիտ պետք է լինել այսպիսի եզրակացության հանգելու համար: Ուրեմն ստացվում է, որ Եվրոպան Կ. Պոլսի ցույցի միջոցով պետք է հասկանար իր շահերը Թուրքիայում: Անտեսվում է այն հանգամանքը, որ եթե այդ նույն Եվրոպային պետք լիներ միջամտել Թուրքիիայի ներքին գործերին, ապա ինքն առանց որևէ ցույցի էլ կգտներ հարմար առիթը: Բացի այդ, մոռացվում էր, որ այդ նույն Եվրոպան էր Բեռլինի վեհաժողովում Հայկական հարցը ձախողել:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 9-10:

Գ. Եթե հայկական հուզումներ կազմակերպվեին Արևմտյան Հայաստանում, ապա դրանք կարժանանային գլխավորապես - Ռուսաստանի ուշադրությանը: Այնուհետև դրանք տարածվելով կգրավեին նաև մյուս տերությունների ուշադրությունը ևս, մասնավորապես՝Անգլիայի, որին Հայ դատին ավելի համակիր էին համարում, քան Թուրքիային: Համակ միամտություն է բուրում հատկապես հեղինակի հեևյալ տողերից. «Հայկական խնդիրը պետութեանց միջեւ խնդիր մը դարձնելը աւելի նպաստաւոր էր մեր ազգային շահերուն»[1]:

Կրկին անգամ շեշտենք, որ մեծ տերությունների ուշադրությունը Հայկական հարցի վրա սևեռվել է միայն այն ժամանակ, երբ դա բխել է տվյալ ժամանակաշրջանում նրանց քաղաքական շահերից, կամ էլ առանց հայկական գործողությունների էլ դարձյալ նույնով պայմանավորված է առաջ քաշվել: Այնպես որ, նրանց տրամադրելը հօգուտ հայոց, դյուրին խնդիր չէր: Իսկ ինչ վերաբերում է Հայկական հարցը պետությունների միջև քննարկման խնդիր դարձնելուն, այդ մասին կարելի է պնդել հետևյալը՝ ոչ թե Հայկական հարցը, այլև մեծ հաշվով հենց Օսմանյան կայսրությունը կարող էր նրանց միջև քննարկման խնդի դառնալ, քանզի Ռուսաստանի դարավոր երազանքն էր նեղուցներին տիրելը, որին մշտապես հակադիր էր ու նրա այդ ծրագրորը մշտապես խափանում էր Անգլիան: Իսկ Հայկական հարցը նրանց համար պարզապես առիթ կարող էր լինել ցանկացած ժամանակ առավել կարևոր նպատակների հասնելու համար:

Դ. Հայության ցրված վիճակն ու Արևմտյան Հայաստանի գավառներում մահմեդական ցեղերի բազմաքանակ լինելը կա-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 10:

րող էին անհաջողության մատնել այդ պայքարը: Մինչդեռ, Կ. - Պոլսում կային 200000 հայեր, ներառյալ պանդուխտները: Բայց արդյոք Կ. Պոլսում միայն հայեր էին բնակվում և այնտեղ չկային այլազգիներ: Բացի այդ, ազատագրական պայքարին պետք է նախորդեր զինվելու գործընթացը, որը, մեղմ ասած, զրոյական վիճակում էր: Իսկ ինչ պետք է աներ այդ հայությունն առանց զենքի, այն էլ կայսրության մայրաքաղաքում: Պարզ է, որ՝ոչինչ: Իսկ հայկական նահանգներում զինվելն համեմատաբար ավելի դյուրին էր, քան Կ. Պոլսում:

Ե. Չարիքի գլխավոր աղբյուրը հենց Կ.Պոլիսն էր, այնտեղ էր հյութվում հայության բնաջնջման ծրագիրը, ուստի հարմար էր առաջին բողոքն այնտեղ կատարել: Սակայն բացի ջարդերի ա-ռիթ հանդիսանալուց ամբողջատիրական վարչակարգի պայ-մաններում բողոքն ի±նչ կարող էր տալ:

Զ. Հեղափոխության տրամադրությունն ժողովրդին հասցնե-լու համար անհրաժեշտ էր հեղափոխական գործունեություն ծա-վալել: Բայց չէ որ հեղափոխական գործունեությունն այլ խնդիր է, ազգային-ազատագրական պայքարը՝ մեկ այլ: Հայության առջև դրված էր ազգային-ազատագրության հարց, որի լուծումը պետք է սկսվեր զինման աշխատանքներից: Իսկ հեղափոխու-թյունն ընդդեմ բռնապետության հնարավոր էր միայն ճնշված բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև թուրքերի հետ դաշինքի առկայության պայմաններում: Ինչպես հենց թուրքերի հետ հա-մատեղ պայքարով հնարավոր եղավ սուլթան Համիդի տապա-լումը: Այնպես որ, այդ շրջանում և այդպիսի անպատրաստ վի-ճակում հայկական հեղափոխության հաջողության մասին խո-սելն առնվազն ճիշտ չի լինի:

Է. Թուրքական իշխանությունները և կրոնամոլ խուժանը տեսնելով հայության միասնականությունը, նրա համերաշխությունը այլ ցեղերի հետ և վախենալով իր ոչնչով չպայմանավորված արտոնյալ վիճակը կորցնելուց, ավելի զգուշավոր կդառնար և նոր կոտորածներ չէր ձեռնարկի:

Ամփոփելով նշենք, որ այդ ցույցը հաստատ հակահարված չէր օրստօրե խստացող թուրքական բռնատիրությանը, իսկ որպես հայության միավորման նախապայման՝բավական կասկածելի: Այնպես որ, Գում Գափուի ցույցը ձեռնարկելու տեսական հիմնավորումները համոզիչ չեն և լինելով երիտասարդական զգացմունքայնության արդյունք՝ ավելի շուտ ռոմանտիկ բնույթ ունեն: Դրանում համոզվելու համար բավական է ծանոթանալ դրա ընթացքին և հետևանքներին, որոնք ամենայն մանրամասնությամբ Հ. Ճանկուլյանը ներկայացնում է: Իհարկե, մենք չենք վիճարկում դրա մասնակիցների հայրենասիրությունը, բայց կարծում ենք, որ ցույցի ավարտից հետո գոնե պետք է լուրջ հաշվեկշռի ենթարկվեր այն: Որովհետև, կարծում ենք, որ այդպիսի խորը և լուրջ վերլուծության արդյունքում հետագայում այդ նույն գործիչներն ու կուսակցությունը կհասկանային, որ նման մարտավարությունը արդյունավետ չէր և կհրաժարվեին դրանից:

Հ. Ճանկուլյանն իր հուշերում անդրադարձել է նաև Սասունի 1894թ. ապստամբությանը: Այդ ժամանակ նա Աքիայի բանտում էր, ուստի և կազմակերպչական շատ մանրամասներ չգիտեր, բայց դարձյալ այնպիսի գնահատականներ է տալիս, որոնց հետ դժվար է համաձայնել:

«Սասունցին մինչեւ վերջ արիաբար կռուեցաւ, - գրում է նա, - և դիմադրեց, իսկ երբ ամբողջ Դ. զորաբանակն և հազարաւոր Քիւրտեր իր վրայ քալեցին, սասունցին պարտուեցաւ և ջարդո-

ւեցաւ, բայց բարոյական յաղթութիւնը Հնչակեան կուսակցութեան և Սասունցիին մնաց: Եվրոպան միջամտեց, որով ձեռք բերուեցաւ Մայիս 11-ի ծրագիրը, որ կը գերազանցէ 61-րդ յոդուածը, Սասունցին Հնչակեաններուն ղեկավարութեամբ, իր առնականութեամբ քաջի պէս մինչեւ իր վերջին շունչը իր կիներով կռուեցաւ»[1]:

Սասունը 1891-93թթ. ինքնապաշտպանական կռիվների ժամանակ, հետ մղելով քրդական հրոսակների հարձակումները, հաղթականորեն էր իրեն դրսևորել և պահպանել էր կիսաանկախ վիճակը, իսկ հնչակյան ժամանակավրեպ ձեռնարկի պատճառով շուրջ 15000 զոհ տվեց: Այսինքն՝ բնակչության մի ստվար մասը կոտորվել էր: Այսքանից հետո Հ. Ճանկուլյանը գտնում է, որ բարոյական հաղթանակը Հնչակյան կուսակցությանը և սասունցիներին մնաց: Եվս այդպիսի մի բարոյական հաղթանակ և Սասունում հայություն այլևս չէր մնա: Իսկ որն էր բարոյական հաղթանակը: Մայիսյան բարենորոգումների ծրագիրը: Բայց չէ որ այդ ծրագիրը մնաց թղթի վրա: Ավելին, երբ հոկտեմբերին դրանք որոշ վերապահումներով սուլթանն ընդունեց, արևելյան նահանգներ ուղարկեց Շաքիր փաշային, որն էլ իրականացրեց հայոց առաջին զանգվածային կոտորածները: Նա, որ նշանակված էր հայկական վեց վիլայեթների (Էրզրում, Վան, Բիթլիս, - Դիարբեքիր, Խարբերդ և Սեբաստիա) կառավարիչ և հայերի վիճակը փոքր ինչ թեթևացնելու համար պիտի իրականացներ բարենորոգումներ, իրականում «հայկական բոլոր գավառներուն մէջ ընդհանուր ջարդ կազմակերպելու պաշտոնով էր, որ ճամ-

[1] Տե՛ս նույն տեղում. մասն Դ., էջ 87:

բայ ելած էր»[1]: Ահա բարոյական հարթանակի վերջնական արդյունքը:

Հ. ճանկուլյանի հուշերը որպես սկզբնաղբյուր կարող են շատ արժեքավոր տեղեկություններ հաղորդել նրա գործունեության և Հնչակյան կուսակցության պատմության մասին, սակայն մեզ հետաքրքրող խնդրի առումով դրանցում ավելին գտնել հնարավոր չէ:

***

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև 1885 - 1908 թթ. հայ ազգային-ազատագրական պայքարի պատմությանն առնչվող հնչակյան ոչ շատ հայտնի գործիչ **Համայակ Արամյանցի**[2] մի քանի տեսակետներին, որոնք նա արտահայտել է իր

---

[1] Տե՛ս Սարգիս և Միսակ Բդեաններ, Հայազատ պատմութիւն Տարոնոյ, Գահիրէ, 1962, էջ 96:

[2] 1914 թ. հուլիսի 16-ին Արշավիր Սահակյանի (Արթուր Եսայան) մատնությամբ երիտթուրք պարագլուխներ Թալեաթի, Էնվերի, Ջեմալի ահաբեկչությունը կազմակերպկու համար ձերբակալվեցին ՍԴՀ կուսակցության 120 անդամներ: 1915թ. մայիսի 10-ին սկսված և 17 օր տևած դատավարությունից հետո Ռազմական ատյանը երկու տասնյակից ավելի գործիչների դատապարտում է տարաժամկետ բանտարգելման, իսկ քսաներկուսի նկատմամբ՝ մահապատժի վճիռ կայացնում (Ս. Գյուլյանի և Վարազդատի նկատմամբ հեռակա, քանի որ երկրում չէին): 1915թ. հունիսի 15-ին Կ. Պոլսի Սուլթան Բայազիտ հրապարակում հրապարակավ նրանց կախաղան են բարձրացնում: Ահաբեկչության կազմակերպիչ և ղեկավար ՍԴՀԿ կենտրոնական վարչության անդամ Փարամազը (Մաթևոս Սարգսյան), նախքան կախվելը արտասանում է. «Դուք մեր մարմինը կրնաք սպանիլ, բայց մեր գաղափարը՝ ոչ: Վաղն ան պիտի երևի Արևելքի հորիզոնին վրա: Հայութիւնը պիտի ողջունէ ինքնավար սոցիալիստական Հայաստանը» մարգարեական խոսքերը: Անմեղ է ճանաչվում 6 մարդ, այդ թվում՝ Համայակ Արամյանցը, ով հետագայում՝ 1909-1913 թթ. եղել է Կ. Պոլսի «Կոհակ» թերթի խմբագիրը: Ավելի ուշ նա գրում է «Վերածնունդի երկունքը», «Քսան կախաղանները»,

երեք փոքրիկ հատորներից բաղկացած աշխատության Ա. հատորում[1], ինչպես նաև հնչակյան «Կոհակ» թերթի էջերում, որի խմբագիրն էր 1909-1913 թթ.: Նշված թերթում Արամյանցը մեկ առ մեկ լուսաբանվել են 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի Հայկական հարցի նկատմամբ մեծ տերությունների վարած շահամոլ քաղաքականությունը[2]: Ընդգծված է, որ Հայկական հարցը սոսկ միջոց է եղել նրանց համար[3]: Այս հիմնավոր և միանգամայն իրավացի տեսակետին զուգընթաց հեղինակը, տուրք տալով սոցիալիստական գաղափարախոսությանը, բավական պարզունակ և միամիտ եզրակացության է հանգում: Ըստ նրա, «Օսմանցի աշխատավոր ժողովուրդները պետք է միանան և ամուր պատվար մը կանգնեն արտաքին շահագործուներուն առջեւ»[4] և առաջ է քաշում օսմանցի աշխատավոր բոլոր ժողովուրդների դասակարգային համերաշխության անհրաժեշտությունը: «Մի բան, որ օբյեկտիվ մի շարք պատճառներով տեղի չունեցավ և չէր կարող ունենալ»[5]: Այսպես, «Անկախ Հայաստան» հոդվածում[6] Արամյանցն անդրադարձել է Օսմանյան կայսրությունում և նրա սահմաններից դուրս տարածված այն տեսակետին, թե

«Հարգանք սոցիալ-դեմոկրատ հնչակյան 20 անդամներուն» երկերը, որոնք հիշյալ դատավարության մասին մեզ հասած հիմնական աղբյուրներն են: Ի դեպ, նրա համար միջնորդել էր Պոլսի հայոց պատրիարք Զավեն եղիայանը «Կոհակ» թերթի 1909-1913 թթ. համարները, «Ջահուկիր» շաբաթաթերթ, թիվ 1523, 17 հունիսի, 2004, Կ. Պոլիս: Հովհաննիսյան Գ., Հնչակյան, նշվ. աշխ., էջ 259-260:

[1] Տե՛ս Արամեանց Հ., Վերածնունդի Երկունքը, Պատմութիւն Հնչակեան կուսակցութեան Հատոր Ա., Կ. Պոլիս, 1918:

[2] Տե՛ս «Կոհակ» թերթ, թիվ 2, 6 հունիսի, 1909:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Հովհաննիսյան Գ., նշվ. աշխ., էջ 205:

[6] Տե՛ս «Կոհակ» թերթ, թիվ 1, 30 մայիսի, 1909:

արևմտահայությունն անջատողական հակումներ ու նպատակ ունի, ձգտում է մասնատել Թուրքիան և ստեղծել Հայկական անկախ պետություն: Հեղինակը փաստերով ցույց է տալիս, որ արևմտահայության գլխավոր նպատակը ոչ թե անկախ Հայաստանի ստեղծումն է, այլ իր տարրական, մարդկային իրավունքների պաշտպանությունը, որոնք միշտ ոտնահարվել են[1]:

Ի դեպ, Հմ. Արամյանցի խմբագրած «Կոհակի» էջերում արծարծվել են նաև կուսակցություն-եկեղեցի փոխհարաբերություններին եկեղեցու հանդեպ դիրքորոշման հարցը[2], որը հայ ազգային-ազատագրական պայքարի կարևորագույն հարցերից մեկն էր: Այս համատեքստում հերքվում է Հնչակյան կուսակցության աթեիստական լինելու և հայ եկեղեցու դերի թերագնահատման հարցերը: Թերթի էջերում Արամյանցը որպես հայ ազատագրական պայքարի հաջողության կարևոր գրավականներից մեկը առաջ է քաշել և պաշտպանել նաև ժողովրդի լուսավորության, պարտադիր աշխարհիկ կրթության և մի շարք այլ կարևոր հարցեր:

Ընդհանուր առմամբ, Հ. Արամյանն այդ առնչությամբ գրեթե նոր բան չի ասում: Մասնավորապես, Հնչակյան կուսակցության կազմակերպած ազատագրական շարժումների նրա գնահատականները և հիշեցնում են նախորդ հեղինակներին, որոնց նման դրանց դրական հետևանքները չափազանցված են: Ահավասիկ, անդրադառնալով հայրենի գեղարվեստական գրականության հայ ազատագրական պայքարի զարթոնքի առումով ունեցած դերին, նա գրում է. «Հայաստանի մթագնած երկնակամարին վրայ շողաց Ազգային Ինքնորոշման Փայլակը, որուն իսկոյն պի-

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս «Կոհակ» թերթ, թիվ 16, 30 մայիսի, 1909:

տի յաջողէին տարերային Որոտման ձայները, ընդունակ արթնցնելու ամենէն աւելի ընդարմացած սրտերն անգամ: Հայրենասիրութեան օրհներգը այլևս չ'պիտի կառչէր թղթին: Զսպուած բողոքի զգացումը կը պոռթկար բռնաւորներու երեսն իվեր: **Հալածական ժողովուրդը հրաժեշտ կուտար անիմաստ ու անպտուղ աղերսներուն և իր բացայայտ Պահանջներով սպառնագին կը ցցուէր դահիճներուն դէմ: Երէկի գլխիկոր ու ամեն անիրաւութեան համակերպող Բայան՝ իբր կազմակերպուած Ազգ՝ Ս. Սթէֆանօի և Պերլինի դաշնագրութիւններով միջազգային դիվանագիտութեան կը թելադրէր իր բանաձևուած պահանջները»**[1]:

Որքան էլ ցանկալի են, սակայն ընդգծած տողերում արտահայտված մտքերը միանգամայն անհիմն են: Հայ ազատագրական պայքարին նախորդած Սան Ստեֆանոյի և Բեռլինի դաշնագրերի հայտնի հոդվածները, որոնք քիչ ազդակ չհանդիսացան այդ պայքարի համար, ամենևին էլ պայմանավորած չէին հայության թելադրանքով: Այդ մասին խոսելն անգամ ավելորդ է, քանզի վաղուց հայտնի է, որ դրանցում թելադրող կողմերը մեծ տերություններն էին: Իսկ հայն, ընդհակառակը, այդ օրերին խնդրող կողմ էր, որին ոչ ոք նույնիսկ չլսեց և որը ձեռնունայն վերադարձավ Բեռլինից: Բացի այդ, պատմական հայտնի իրողություն է, որ 1880-ական թթ. վերջերից սկզբնավորված հայ ազգային-ազատագրական պայքարը մինչև հաջորդ դարասկիզբ ընթացավ միջազգային դիվանագիտությունից կախյալ վիճակում և նրա միջամտության առաջնահերթությունն ընդունող մարտավարությամբ:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 8-9:

Հ. Արամյանցը Հնչակյան կուսակցության ծնունդը պայմանավորում է եվրոպական գաղափարներով համակված երիտասարդների»հայութեան ցան ու ցրիւ ուժերը» մի ուղղությամբ ուղղորդելու անհրաժեշտությամբ[1]: Տեսականորեն գուցե իրոք այսպես էր, բայց գործնականում այդ կուսակցությունն ավելի շատ առաջնորդվեց ոչ թե ցաքուցրիվ ուժերը միավորելով, այլ ընդհակառակը, եվրուպական միջամտության հույսով՝ տարանջատ ձեռնարկների կազմակերպմամբ:

Խոսելով 1890թ. հունիսին և հուլիսին կազմակերպված - Կարնո և Գում - Գափուի ցույցերի մասին. Հ. Արամյանցը հետևյալ ընդհանրացումն է կատարում. «Ոչ միայն թուրք կառավարութիւնը, այլ Եւրոպական դիւանագիտութիւնը կը ցնցուի այս յարաճուն շարժումներէն և Հայկական Խնդիրը վերստին կ'այժմէանայ:

Հայը դադրած էր ողորմելի «լալկան» մը ըլլալէ, անիկա կարկառուն ապացոյցը կուտար իր քաղաքական հասունութեան»[2]:

Դառը ճշմարտությունն այն էր, սակայն, որ ոչ թուրքական կառավարությունը և ոչ էլ Եվրոպան ամենևին էլ չցնցվեցին այս շարժումներց և դրանցով հայը չդադարեց Եվրոպայի աչքում «ողորմելի լալկան'» լինելուց, քանի որ այդ շարժումների հիմնական նպատակը նրա գութը շարժելն էր: Իսկ ինչ վերաբերում է - Թուրքիային, ապա՝ նա էլ օգտվելով մեծ տերությունների հակասություններից, քայլ առ քայլ գնաց ջարդերի ծրագրի իր նպատակի իրականացմանը: Դա անշուշտ վերաբերում է նաև Բաբը Ալիի ցույցին, որի մասին նույնպես իր չհիմնավորվող տեսակետն է զարգացնում հեղինակը: Դժվար է համաձայնել նաև

---

[1] Տե՛ս նույն տեղում. էջ 9:
[2] Տե՛ս նույն տեղում. էջ 14:

նրա հետևյալ տեսակետին. «Պապը Ալիի Հնչակեան ցոյցին կը յաջորդեն մի շարք յեղափոխական անցքեր, որոնցմով յեղափոխական կուսակցութիւնն ի յայտ կուգայ իր պատկառելի կազմակերպութեամբ և ամենալայն ժողովրդականութեամբ: Սպառազէն հրոսախումբեր ահ ու սարսափ կը տարածեն հարստահարիչներուն վրայ, որոնք մէկը միւսին ետեւէն կահաբեկուին եւ անոնց յաջորդները կը հարկադրուին հաշուի առնել Հայ Յեղափոխութեանց ոյժը, չափ դնել իրենց շահատակութեանց»[1]:

Հիշյալ ցույցին, ընդհակառակը հաջորդում է Հնչակյան կուսակցության փլուզման գործընթացը և Լոնդոնի կոնֆերանսում այն պառակտվում է: Կուսակցության ամենահաջողված ձեռնարկը, թերևս, Զեյթունի 1895–96թթ. ապստամբությունն էր, որն ավարտվեց հաղթությամբ, բայց, հավանաբար չենք սխալվի, եթե պնդենք, որ այդ հաղթանակն ավելի շատ պայմանավորված էր զեյթունցիների համախմբված և զինված լինելու հանգամանքով, նրանց ռազմական փորձով, նպատակի հստակ գիտակցմամբ ու միակամությամբ, քան թե հնչակյան գործիչներ Մլեհի, Աղասու, Ապահի և մյուսների գործունեությամբ: Վերջիններիս գաղափարական աշխատանքներն ու ազատագրական պայքարին մինչև վերջ նվիրված լինելը անպտուղ կվերջանային, եթե զեյթունցիներն իրենց հերոսական անցյալին հավատարիմ՝ միասնական, մեկ բռունցք դարձած պայքարի դուրս չգային:

Հ. Արսմյանցն իր աշխատությունում անդրադառնում է նաև Հնչակյան կուսակցության որդեգրած նպատակներին և ծրագրի «էական մասերին», բայց դրանք հարկ չենք համարում քննար-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 15:

կել, որովհետև գրեթե նույն տեսակետներն է արտահայտում, ինչ Ռ. Խանազատը, որոնց մասին արդեն խոսել ենք:

Այնուհետև նա բավականին մանրամասն անդրադառնում է Փոքր Հայքի, Սասունի, Վասպուրականի և Զեյթունի դեպքերին: Դրանք ավելի շատ գնահատում է զգայական մոտեցումների հենքի վրա, քան թե հաշվեկշռի է ենթարկում դրանց կոնկրետ հետևանքները: Հնչակյան ցանկացած գործողության նրա անդրադարձներն այն տպավորությունն են ներշնչում, որ դրանք միշտ հանգեցնում էին բաղձալի նպատակին, բայց իրականում այդ նպատակներն այնքան էլ շոշափելի չեն ընկալվում: Թերևս բացի Բարենորոգումների ծրագրից, որին հասնելը նույնպես կուսակցության նպատակն էր և որի շոշափելի արդյունքը հայոց առաջին զանգվածային ջարդերը եղան: Թող ամենևին այն տպավորությունը չստեղծվի, որ մենք այսպիսի մոտեցուներով ներկայացնելով Հ. Արամյանցի հուշերը, տարիների հեռվից վիճարկում ենք հնչակյան հերոսների նվիրումն ու քաջությունը: - Պարզապես, պատմական ճշմարտությունը պահանջում է խոստովանել, որ այդ հերոսները արդյունավետ մարտավարությամբ չէին ընթանում:

Դրվատելի է, որ հեղինակը **դատապարտում է բոլոր տեսակի պառակտողական շարժումները** Հնչակյան (և ոչ միայն Հնչակյան) կուսակցության մեջ և իրեն դրսևորում է որպես հանուն Հայկական խնդրի բոլորի միավորման կողմնակից. «Հնչակեանութենէ անջատուած Վերակազմեալներ, Վերակազմեալներէ հերձուած Ռամկավարներ, Դաշնակցութեան շարքերէն մեկնած Բողոքող Դաշնակցականներ՝ դարավերջին Արշակաւանը կը ձեւացնէին, մինչ անդին բնաշխարհը կը հեծէր բռնապետութիւններու ամենէն գարշելիին լուծին տակ, մինչ դժբաղդ ժողո-

վուրդը անհովիւ հոտերու պէս կը յօշոտէր մարդ - գազաններէն, մինչ կըսենք, աննեցուկ Ցեղին ճակատագիրը սառոյցի վրա կը գրուէր...»[1]: Անհնար է չհամաձայնվել հեղինակի հետ, քանզի հայ ազգային ազատագրական պայքարի 1885 – 1908 թթ. փուլի ամուլ ավարտի կարևոր պատճառներից մեկը հենց ընդհանուր նպատակի շուրջը չմիավորվելն էր:

Ահա սրանք են ուշադրության արժանի այն դիտարկումները, որոնք Հնչակյան կուսակցության գործունեության վերաբերյալ իր հատորյակում կատարում է Հ. Արամյանցը՝ մինչև 1908 թ., որով ըստ նրա վերջ է գտնում ընդդեմ Թուրքիայի գործունեության դավադրական շրջանը:

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 36-37:

ԱՄՓՈՓՈՒՄ

Միանգամայն ճիշտ է ասված՝փաստը պատմության արքան է. բայց միապետը հաճախ մերկ է, ինչպես ցուցափեղկի մանեկենը: Այս դեպքում ձգտել ենք լոկ զգեստ հագցնել մերկ մանեկենին՝ շունչ հաղորդել պատմական ստույգ, բայց չոր փաստերին:

Հայաստանի վերաանկախացման գործընթացի ժամանակ մինչ այդ սփյուռքում գործող ազգային-ավանդական կուսակցությունների տարբեր տարիներին գործունեության պատմությունը հետաքրքրության առանցք դարձավ: Գրվեցին զգալի թվով ուսումնասիրություններ: Հիմնական պատճառն այն էր, որ նորանկախ Հայաստանի հանրապետության կյանքը խիստ քաղաքականացված էր և կուսակցությունները դրանում որոշիչ դերակատարներ դարձան: Հետագա տարիներին ազգային-ավանդական կուսակցությունների պատմությանն անդրադարձներն ավելի ու ավելի հաճախակի դարձան, քանի որ կյանքի քաղաքականացման գործընթացը լայն ընդգրկումներ ունեցավ: Դրա առհավատչյան այն ակնհայտ իրողությունն է, որ բնակչության թվաքանակի համեմատ կուսակցությունների առատությամբ աշխարհում առաջատար դիրքերում ենք:

Արդ, որո՞նք են այդ կուսակցությունների գաղափարախոսությունների հիմնաքարերը է և դրանք ինչ ու ինչպիսի խնդիրներ են կոչված եղել լուծելու: Ինչպես նաև այդ ճանապարհին ինչ գործառույթներ են իրականացրել, ինչ ճիշտ ու սխալ քայլեր կատարել: Անչափ կարևոր է նաև այն հարցը, թե ԽՍՀՄ գոյության տարիներին այդ կուսակցություններն ինչպիսի վերաբերմունք

են դրսևորել Հայկական հարցի նկատմամբ և անկախության վերահաստատմամբ ինչ փոփոխությունների են ենթարկվել նրանց այդ հարցին նրանց մոտեցումները:

Միանշանակ է, որ Սփյուռքի ծանր պայմաններում մաքառող այդ կուսակցությունները, շատ դեպքերում իրենց գաղափարական տարաձայնությունները մի կողմ թողնելով բոլոր միջոցներով փորձել ու շարունակում են զորավիգ լինել Հայաստանին և իրենց քաղաքական-տնտեսական բոլոր սլաքներն ուղղել են դեպի Մայր հայրենիք: Քանզի Հայաստանի հանդեպ այդ կուսակցությունների այսօրն ու վաղը գոյաբանական իմաստ ունի: Իսկ Սփյուռքի սերունդների համար կուսակցական պատկանելիությունը ոչ միայն ազգային ըմբռնում է, այլև ապրելաձև, որին հասել է դժվարին կյանքով և մեծ զոհողությունների գնով:

Այսօր էլ Սփյուռքը, որը կուսակցությունների համար հանգրվան է եղել, հետևանք է և ոչ նպատակ: Հետևաբար հարկավոր է ոչ միայն քննադատել, այլև գնահատել ազգային կուսակցությունների դիմագրաված վայրիվերումներն ու տագնապները, որովհետև ավելի քան հարյուր տարի սփյուռքահայությունն այդ կուսակցությունների հանդեպ իր ունեցած հավատքով ապրեց ու արարեց: Դրանք են առաջնորդում Սփյուռքին ապահով ափ դուրս գալուն:

19-րդ դարի վերջին քառորդը հայոց պատմության ամենահուզումնառատ շրջաններից մեկն էր: Ազգային զարթոնքն այդ տարիներին ընդգրկուն ծավալներով ու հզոր թափով իր մեջ ներառավ նաև դարավոր ընդարմացումից սթափված հայ ժողովրդին: Ոտքի ելած և ազատագրության դրոշը աշխարհին պարզած ազգին առաջնորդելու հավակնությամբ ասպարեզ իջան քաղաքական կուսակցությունները: Հատկապես 1877-78թթ. ռուս-թուր-

քական պատերազմից, Բեռլինի վեհաժողովից ու «երկաթե շերեփի» հայտնի քարոզից հետո, օսմանյան բռնատիրությունից ազատվելու նպատակով և ժողովրդին առաջնորդելու հավակնությամբ ծնված այդ կուսակցությունները փնտրտուքի մեջ էին: - Յուրաքանչյուրը փորձում էր այդ պայքարը տանել «իր» կանխագծած ճանապարհով: Ընդ որում, այդ ճանապարհներն առաջին հայացքից որքան էլ տարբեր էին թվում, ըստ էության, նույնանում էին, որովհետև այդ պայքարի ռազմավարությունը բացարձակ նույնն էր, իսկ մարտավարական ինչ-ինչ տարբերություններն այնքան էլ էական չէին:

Ոչ թե արհեստականորեն, կողմնակալ մոտեցումներով, այլ հնչակյան գործիչների հուշերն ու աշխատությունները մանրամասնորեն քննելով ու վերլուծելով, նրանց մատուցած հաճախ հակասական փաստերն ու եզրակացությունները համադրելով ենք հանգել մեր վերոնշյալ եզրակացություններին: Հիրավի, որքան էլ հնչակյան գործիչներն ու պատմաբանները դրվատանքով են խոսում, լավագույն կողմերով ներկայացնում իրենց կուսակցության կողմից ձեռնարկած այս կամ այն ցույցը կամ ապստամբությունը, միևնույն ժամանակ, չեն կարողանում թաքցնել դրանց ցավալի հետևանքները՝ ջարդեր, հալածանքներ և ձերբակալություններ: Ոչ ոք սրա հակառակը չի կարող պնդել: Այս ամենով հանդերձ, չենք ուզում այնպիսի տպավորություն ստեղծվի, թե մենք վիճարկում ենք հնչակյան գործիչների հայրենասիրությունն ու անմնացորդ նվիրումը հայ ժողովրդի ազատագրության սրբազան գործին: Սակայն այստեղ ամենակարևորն ավելի շատ այդ քաջության արդյունքն էր, որը, ցավոք, ամենևին էլ շոշափելի չեղավ: Այսինքն՝ առանձնացրեցինք պատմագիտական հայեցակարգերին համարժեք այն տեսակետները, որոնք ներկայաց-

րել են նշված հեղինակները հնչակյանների գործունեության և, հայ ազատագրական պայքարի վերաբերյալ: Նշենք, որ դրանք երբեմն իրավիճակի սթափ ու անկողմնակալ գնահատման արդյունքում են ծնվել և, մեր կարծիքով, կօգնեն ճշգրիտ պատկերացում կազմել առհասարակ հայոց պատմության ընդհանուր զարգացման, հիշյալ ժամանակահատվածի և դրա առանձնահատուկ կողմերի մասին:

Մեր օրերում էլ գրեթե ոչինչ էական չի փոխվել: Գրեթե ամեն ինչ նույնությամբ կրկնվում է նոր մակարդակում: Հերթական անգամ ապացուցվում է, որ աշխարհի և մարդկության մասին «Պարույրաձև զարգացման» տեսությունը գիտականորեն հիմնավորված է և ճշմարիտ: Ժամանակակից աշխարհն էլ մեր բազմաչարչար ժողովրդին նետած իր մարտահրավերներով ոչ միայն հուշում, այլև պարտադրում է, որ բազմաթիվ այլ հարցերին ու խնդիրներին զուգընթաց, մանրակրկիտ ու բազմակողմանի քննարկվեն և լուսաբանվեն նախորդ շրջանում թույլ տված մեր սխալներն ու վրիպումները: Մասնավորապես, ազգն առաջնորդելուն կոչված կուսակցություններին ու դրանց ծավալած գործունեությանը վերաբերող հարցերը, ապագայում նմանատիպ սխալներից զերծ մնալու համար: Հենց այս ելակետն էր մեր նախորդ՝ արմենական գործիչների տեսակետներին, այս և ապագայում դաշնակցական տեսաբանների հիմնադրույթների վերլուծությանը նվիրված նմանաբնույթ ուսումնասիրությունները գրելու հիմնական շարժառիթը:

Հնչակյան քայլերգը

Խոսք՝ Մ. Տամատյան, երաժշտությունը՝ Ա. Ռշտունի

Հեռավոր երկիր նստած դու նժդեհ
Հայրենյաց բախտին մոտուստ ու տեղյակ
Քարոզ քաջարի նոր սկզբանց վեհ
Հեղափոխության ձայնատու Հնչակ
Նոր գաղափարի քո ցանած սերման
Ազնիվ պտուղներ հասուննան արագ
Կարին և Պոլիս որոտման նման
Անդրանիկ շարժմունք ծնան քեզ, Հնչակ:
Չար բռնակալը հայոց կեղեքիչ
Վախեն պահուեցավ ոսկի գահին տակ
Խուլ Եվրոպայի թնդաց մեն դահիճ
Հայը ցնցվեցավ, կարմրեցավ Հնչակ:
Այսօր քո սերմանց նոր պտուղք ահա
Հասած կարմրին արեան նմանակ.
Կենաց և մահու սուրբ ժամ մերձենա,
Կարմիր հրավերիդ ակն ունինք Հնչակ:
Կոչնակդ հնչեցուր, հնչեցուր արեկ,
Թող հայք ոտք ելլեն ծագե մինչև ծագ,
Փշրի ժանտ շղթան, ծագի նոր արեգ,
'Ազատ ենք' հնչէ, ոսկեզօծ Հնչակ:

SUMMARY

SUMMARY SARGSYAN SUREN TARKHAN

The stage of 1885-1908 of the Armenian national liberation struggle in the eyes of Hunchakist party figures

In the monograph, we have analyzed the memoirs and works of the Hunchakian party figures of the Armenian national liberation struggle of 1885–1908. We also presented the concepts and views expressed by their authors, which were fundamental to our liberation ideology. At the same time, they are important from the point of view of historical thought. In the case of the Hunchakist Party, and, in particular, the Armenian National Liberation Struggle of 1885-1908, one can argue that the mentioned period has no party historiography. Therefore, we can talk about the historical thinking of the Hunchak party members when touching the Armenian liberation struggle of that period. The paper presents new information on the formation and program provisions of the Hunchakist Party. The reasons for the well-known actions of this party are examined more precisely and reasonably, as they are directly derived from the information of the original source of the Hunchakist authors, which are compared with archival sources and other materials. Attempts have been made to substantiate the error and ineffectiveness of the strategy of considering the Armenian liberation struggle, dependent on Europe.

We have tried to separate the views corresponding to the historical concepts presented by the mentioned authors on the activities of the Hunchakist and, in general, on the Armenian liberation struggle. These views are sometimes born as a result of a sober and impartial assessment of the situation, which, in our opinion, will help to form an accurate picture of the general development of the Armenian history in general, and the mentioned period, in particular, especially when its special aspects are considered. We have presented and discussed in detail the views of the founding members of the Hunchakist Party, prominent theorists Avetis Nazarbekyan, Ruben Khanazat, Harutyun Jankyulyan, Stepan Sapah-Gulyan, Arsen Kituri, Petros Tepoyan, Hrant Gangruni on the strategic and tactical issues of the Armenian national liberation struggle, drawing valuable conclusions.

РЕЗЮМЕ

САРГСЯН СУРЕН ТАРХАНОВИЧ

ОЦЕНКА ДЕЯТЕЛЯМИ ПАРТИИ ГНЧАКЯН АРМЯНСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ НА ЭТАПЕ 1885-1908 ГГ.

В монографии подвергнуты критическому анализу труды и мемуары деятелей партии Гнчакян относительно армянской национально-освободительной борьбы на этапе 1885-1908 гг. Кроме того представлены концепции и взгляды авторов, которые будучи принципиальными для нашей освободительной идеологии, важны также с точки зрения историографической мысли. Можно утверждать, что в случае с партией Гнчакян, в частности, относительно армянской национально-освободительной борьбы на этапе 1885-1908 гг., партийная историография отсутствует. Следовательно можно говорить об историографической мысли партийных деятелей в отношении данного периода армянской освободительной борьбы.

В работе представлены новые сведения как о формировании партии Гнчакян, так и о ее программных положениях. Подвергаются более правильному и обоснованному анализу причины известных действий

организованных партией, поскольку получены непосредственно из авторских материалов гнчакянов, которые являются первоисточниками сравнимыми с архивными и иными материалами. Предпринята попытка более обоснованно представить ошибочность и неэффективность рассмотрения стратегии армянской освободительной борьбы зависимой от Европы. Нами выделены те взгляды указанных авторов, которые эквивалентны историческим концепциям, относительно освободительной борьбы и, в частности, деятельности партии Гнчакян. Эти взгляды рождались иногда в результате трезвой и беспристрастной оценки, которые, по нашему мнению, помогут создать объективное представление как общего развития, так и развития в упоминаемый период и, в частности, специфических сторон армянской истории. Представлены и детально рассмотрены взгляды членов-основателей и видных теоретиков партии Гнчакян: Аветиса Назарбекяна, Рубена Ханазата, Арутюна Чанккюляна, Степана Сапар-Гюляна, Арсена Китуря, Петроса Типояна, Гранта Гангруни и Амаяка Арамянца, относительно задач стратегии и тактики армянской национально-освободительной борьбы, а так же сделаны ценные заключения. Нами выделены те взгляды указанных авторов, которые эквивалентны историческим концепциям, относительно освободительной борьбы и, в

частности, деятельности партии Гнчакян. Эти взгляды рождались иногда в результате трезвой и беспристрастной оценки, которые, по нашему мнению, помогут создать объективное представление как общего развития, так и развития в упоминаемый период и, в частности, специфических сторон армянской истории. Представлены и детально рассмотрены взгляды членов-основателей и видных теоретиков партии Гнчакян: Аветиса Назарбекяна, Рубена Ханазата, Арутюна Чанккюляна, Степана Сапар-Гюляна, Арсена Китуря, Петроса Типояна, Гранта Гангруни и Амаяка Арамяна, относительно задач стратегии и тактики армянской национально-освободительной борьбы, а так же сделаны ценные заключения.

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

1. Հայաստանի Ազգային արխիվ (ՀԱԱ), ֆոնդ թիվ 1456, «Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցություն» փաստաթղթերը: - Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1456, ց. 1, գ. 7, թ. 2: ՀԱԱ, ֆ. 1456, ց. 2, գ. 27, թ. 3:
2. Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Արփիար Արփիարյանի ֆոնդ, թիվ 106, 515, 548: ԳԱԹ, ֆ. 28, թիվ 503: Նամակ «Լումայ»թերթի խմբագիր Ազանյանին, ԳԱԹ, Աղայան Գյուտ քահանայի ֆոնդ, թիվ 941-942:

Տպագիր սկզբնաղբյուրներ

1. Դիվան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, Պոսթըն, 1934, Դժոխք Հ-րայրի նամակները:
2. Ծրագիր Հնչակեան Սօցիալիստ-Յեղափոխական կուսակցութեան, Ժնև, 1891:
3. Ծրագիր սոցիալ-դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան (-Տաճկաստանի համար), Կ. Պոլիս, 1910:
4. Հիսնամեակ (1887-1937) սօցիալ-դեմոկրատ հնչակեան կուսակցութեան, Ֆրեզնօ, 1938:

Գրականություն

1. Արամեանց Հմայակ, Վերածնունդի Երկունքը, Պատմութիւն Հնչակեան կուսակցութեան, հ Ա., Կ. Պոլիս, 1918:
2. Աղամիրյան Խ., Հայ սոցիալ-դեմոկրատական «Հնչակ»կու-

սակցության և նրա գործունեության մասին, Բաքու, 1925:
3. Բերբերեան Ռ., Պատրանքների շրջանից, «Վեմ», թիվ 2, 3, - Փարիզ, 1938:
4. Բերբերեան Ռ., Ինչպէս հեռացայ հնչակեան կուսակցութիւնից, «Հայրենիք», թիվ 3, Բոստոն, 1943:
5. Բերբերեան Ռ., Երկու դարերի շեմին, «Հայրենիք», Բոստոն, 1939, թիվ 1:
6. Բերուզ Սասպահ-Գիլլեան, Կենսագրութիին Ստ. Սասպահ-Գիլլեանի, Նյու Յորք 1936:
7. Бологов П., Империя зла, Lenta.ru կայք, («Չարի կայսրություն» հոդվածը թարգմանաբար տպագրվել է «Ազգ» օրաթերթում), տես «Ազգ», թիվ 71, 2012:
8. Բդեաններ Սարգիս և Միսակ, Հարազատ պատմութիւն Տարոնոյ, Գահիրէ, 1962:
9. Գանգրունի Հ., Հայ յեղափոխութիւնը Օսմանյան բռնատիրութեան դէմ (1890-1910), Պէյրութ, 1983:
10. Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Բ տպագրութիւն, Ե., 2003:
11. Եկարեան Ա., Յուշեր Արմենակ Եկարեանի, Պէյրութ, 1985:
12. Երամյան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, Ալեքսանդրիա, 1929, հտ. Ա:
13. Լեո, Անցյալից, Ե., 2009:
14. Լէօ, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Ե, 1994:
15. Խան-Ազատ Ռ., Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք», 1928, թիվ 8, 9, 10, 11,
16. Խուրշուդյան Լ., Հայկական Հարցը, Ե., 1995:

17. Хуршудян Р. Л., Критический анализ политики и идеологии армянской мелкобуржуазной партии гнчак в период борьбы трудящихся закавказья за победу и упрочение советской власти (1917-1921гг), Е., 1981, ատենախոսության սեղմագիր:
18. Կիտուր Ա. (խմբագիր ուսուցչապետ), Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան, 1887-1962, Ա. հատոր, Պէյրութ, 1962:
19. Կիտուր Ա., Հայ ազատագրության ճանապարհին, Պէյրութ, 1949:
20. Կարապետյան Ա., Արմենական կուսակցության կազմավորումն ու գործունեությունը, տե՛ս Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ 1885-1914թթ., Ե., 2003, էջ 3-25:
21. Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան (հասարակական քաղաքական գործունեությունը), Ե., 2000:
22. Կոստանդյան Է., Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարական-քաղաքական կյանքի պատմության (19 րդ դարի 80-ական թթ), Ե., 2005:
23. Հայոց պատմություն, ՀՀ ԳԱԱ հրատարակություն, Հատոր 3, Ե. 2010,
24. Համբարյան Ա., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990
25. Հովհաննիսյան Գ., Հնչակյան կուսակցության պատմություն (1887-1915 թթ.), Ե., 2012:
26. Հովհաննիսյան Ն., Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը, Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում, Ե., 2016:
27. Ղազարյան Վ., Արմենական կուսակցութիւնը, Պէյրութ, 1985:

28. Ճանկուլյան Յ., Յիշատակներ հայկական ճգնաժամէն (պատկերազարդ), մասն Ա. եւ Բ., մասն Գ., մասն Դ., Վերջին հատոր, Կ. Պոլիս, 1913:
29. Ճիզմեճեան Մ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, 1890-1925, Ֆրեզնօ, 1930:
30. Մանուկեան Ա., Հնչակեան Կուսակցութեան կազմակերպումը եւ Քսան Կախաղաններու մասին անդրադարձը եւրոպական մամուլի ու դիւանագիտական թղթակցութեանց մէջ, Ե., 2020:
30 ա. Ներսիսեան Ա., Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն (1898-1908), հատոր Բ., Պէյրութ, 2008:
31. Պողոսյան Հ., Փարամազ, Ե., 1992:
32. Պողոսյան Հ., Փոքր Հայքի հիշատակներ, Չիկագո, 1917
33. Պողոսյան Հ., Բառերի և եզրերի բացատրություն, Բոստոն, 1917:
35. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Լոս Անճէլլըս, 1-12 հատորները, 1952:
36. Տեփոյեան Յ. Պետրոս, Միհրան Տամատեան (1863-1945), - Պէյրութ, 1964:
37. Տեփոյեան Յ. Պետրոս, Ատոմ Ասլանեան, Պէյրութ, 1988:
38. Սապահ-Գյուլեան Ս., Պատասխանատուները, Փրովիտէնս, 1916:
39. Սապահ-Գյուլեան Ս., Երիտասարդ Հայաստան, Փարիզ, 1908:
40. Սապահ-Գյուլեան Ս., Ինքնավար Հայաստան, Թիֆլիս, 1915:
41. Սապահ-Գյուլեան Ս., Փոքր Հայքի յիշատակները, Չիկագո, 1917:
42. Սապահ-Գիւլեան Բերուզ, Կենսագրութիւն Ստ. Սապահ-Գիւլեանի, Նյու Յորք 1936:

43. Սարգիս և Միսակ Բդեաններ, Հարազատ պատմութիւն Տարոնոյ, Գահիրէ, 1962:
44. Սարգսյան Ս., Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն 1908-1921թթ., Ե., 2009:
45. Սարգսյան Ս., 1885-1908թթ. հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ, Ե., 2010:
46. Սարգսյան Ս., «Արմենական»պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում, Ե., 2014:
47. Սարգսյան Ս., Մկրտիչ Փորթուգալյանի հասարակական-քաղաքական կյանքը և «Արմենիա»պարբերականը, Ե., 2018:
48. Սարգսյան Ս., Արևելահայ ռամկավար մամուլը 1918-1920 թթ., Ե., 2019:
49. Սարգսյան Ս., Միհրան Տամատյանի հրապարակախոսությունը, Ե., 2020:
50. Սիրվարդ, Մեծն Մուրատ, Փրովիտենս, 1955:
51. Սիրվարդ, Արամ Աչըգպաշեան, Փրովիտենս, 1957:
52. Ստեփանյան Մ. Ս., Սոցյալ դեմոկրատ հնչակյան կուսակցության գործունեությունը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Ե., 2007, ատանախոսության սեղմագիր:
53. Տամատեան Մ., Իմ յուշերս, Պէյրութ, 1985:
54. Տեփոյեան Պ., Միհրան Տամատեան (1863-1945), Պէյրութ, 1964,
55. Տեփոյեան Պ., Ատոմ Ասլանեան, Պէյրութ, 1988:
56. Համբարյան Ա., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990:

57. Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան - Հայաստանում 1898-1908 թթ, Ե., 1999:

Հոդվածներ

1. Բռնապետութիւն: Հեռավոր եւ մոտակա նպատակներ եւ միջոցներ, «Հնչակ»թերթ, թիվ 2, 1887:
2. Խուրշուդյան Ռ., Հնչակյան պարբերական մամուլը. սկզբնավորման շրջան, ՊԲՀ, թիվ 2(18), 2000, էջ 18-29:
3. Խառատյան Ա., Հայ հասարակական հոսանքները XIX դ, 50-60-ական թվականներին, ՊԲՀ. թիվ1(27), 2006, էջ 272-284:
4. Կոստանդյան Է., Գում-Գապուի ցույցը, ԼՀԳ, թիվ 8,1990:
5. Հովհաննիսյան Ա., Հնչակյանների կազմավորման գաղափարական արմատները, ՊԲՀ, Ե., թիվ 2, 1968:
6. Հովհաննիսյան Գ., «Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի խնդիրները ամերիկյան «Երիտասարդ Հայաստան» պարբերականում» (1903-1907 թթ.), տե՛ս Հայագիտական հարցեր, թիվ 3(18), էջ 119-133:
7. Մանուկեան Ա., Խմբանկարի մը պատմութիւնը եւ Ժնեւի «Յեղափոխական ընկերութեան» կազմաւորման թուականը, Վերակազմյալ Հնչակյան կուսակցության ստեղծման 125 և Արփիար Արփիարյանի ծննդյան 170 ամյակներին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2022, էջ 52-87:
8. Սարուխանյան Ն., Լեոն և Հայկական հարցը, ԼՀԳ, թիվ 2(43), էջ 43-55:
9. Սարգսյան Ս., Պատմություն, պատմագիտություն, պատմագրություն հասկացությունները, «Ակունք», թիվ 2(5), Ե., 2013, 120-124 էջեր:

Մամուլ

1. «Արմենիա» թերթ, թիվ 21, 1886:
2. «Երիտասարդ Հայաստան» թերթ, թիվ 1, 1903, թիվ 21, 1905, թիվ 32, 1906: «Մինչև ե՞րբ», թիվ 16 1907: թիվ 4, 1903, թիվ 5, 1905, թիվ 6, 1903, թիվ 17, 1903, թիվ 24, 1905, թիվ 3, 5, 10, 12, 28, 1903, թիվ 3, 18, 1907 և այլն:
3. «Կոհակ» թերթ, թիվ 2, 6 հունիսի, 1909, թիվ 1, 30 մայիսի, 1909:
4. «Հայրենիք» ամսագիր, թիվ 8, 1927, թիվ 8, 9, 10, 11, 1928, թիվ 1, 1939, թիվ 1, 1943:
5. «Հնչակ» թերթ, Բռնապետութիւն: Հեռավոր եւ մոտակա նպատակներ եւ միջոցներ, թիվ 2, 1888, Պատասխան սուլթանին, թիվ 3, 1888, թիվ 8, 1891:
6. Յավելուած «Հնչակի», թիվ 16, 1895:
7. «Վան-Տոսպ», թիվ 29, 1916:
8. «Ջահակիր» շաբաթաթերթ, թիվ 1523, 17 հունիսի, 2004:

ՍԱՐԳՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԹԱՐԽԱՆԻ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ 1885-1908 ԹԹ. ՓՈՒԼԸ ՀՆՉԱԿՅԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Տպագրության եղանակը՝ թվային
Չափսը՝ 60Х84/16
Թուղթը՝օֆսեթ, 80 գ/մ2
Ծավալը՝ 12,5 պայմ.տպ. մամուլ
Տպաքանակը՝ 100

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0683594

A 112404

ISBN 978-9939-892-41-2